Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ

Պետականաշինությունը սկսվում է համամարդկային արժեքների և նորմերի արմատավորմամբ

ԳԱՌՆԻԿ ԴԱՎԹՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԴԱՎԹՅԱՆ

Հայատյացությունը Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում

Երևան
2019

ՀՏԴ 341
ԳՄԴ 67.412
Դ 234

Գիտական խմբագիր՝ ի.գ.դ. պրոֆեսոր
Ստեփան Շանթի Ծաղիկյան
Հայ-Ռուսական համալսարանի
քրեական իրավունքի և
դատավարության ամբիոնի վարիչ

Գրախոսողներ՝ ի.գ.թ. Ավետիք Ալբերտի Խաչատրյան
իրավագիտության մագիստրոս, ք.գ.թ. Արմեն
Ռուբիկի Հարությունյան՝ Հայ-Ռուսական
համալսարանի քաղաքագիտության ամբիոնի ավագ
դասախոս

Դավթյան Գառնիկ
Դ 234 Թեմա՝ Հայատյացությունը Ադրբեջանի պետական
գաղափարախոսության հիմքում/ Գ. Դավթյան.- Եր.:2019.- 195 էջ:

«Հայատյացությունը Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում» մենագրությունը նպատակ է հետապնդում հայ-ադրբեջանական հարաբերությունները վերլուծել իրավական ոլորտում, հնարավորություն ընձեռելով հետաքրքրվող անհատին մեր օրերում Ադրբեջանի կողմից տարվող հայատյացության մակարդակի մասին իրավական լիարժեք պատկերացում կազմել:

Ավելին, մենագրությունը իր տեսակով վերլուծության նոր ձև է, որը Ադրբեջանում հայատյացությունը ներկայացնում է իրավունքի տեսանկյունից՝ իր հիմքում դնելով քրեական իրավունքը:

Մենագրությունում տեղ են գտել միջազգային իրավունքի աղբյուրները՝ միջազգային կառույցների կողմից ընդունված բանաձևերը, պայմանագրերը, կոնվենցիաները և այլն, Ադրբեջանի ներպետական օրենսդրությունը՝ հարակից Սահմանադրություն, օրենսգրքեր և Ադրբեջանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններ: Ուսումնասիրման առարկա է դարձել նաև Հայաստանի և Ադրբեջանի Հանրապետությունների իրավական կարգավորումների ռեալ սկզբունքի հնարավոր կիրառումը:

ISBN 978-9939-58-330-3 © Գառնիկ Դավթյան, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի մասին 5
Շնորհակալության բաց նամակ 8

Ներածություն 12

Գլուխ 1. Ադրբեջանում հայատյացության ընդհանուր բնութագիրը և դրա հակահիրավական բնույթը 17

1.1 Այլատյացության հասկացությունը 17

1.2 Ադրբեջանում հայատյացության արմատները 24

1.3 Ադրբեջանում հայատյացության քարոզչության հիմնական ուղղություններն ու միջոցները և դրանց օգտագործման հակաօրինականությունը 44

1.4 Ադրբեջանում հայատյացության առանձին դրսևորումները և դրանց հակաօրինականությունը 72

Գլուխ 2. Ադրբեջանում հայատյացության միջազգային քրեաիրավական որակումը 94

2.1 Այլատյացության համար պատասխանատվություն նախատեսող միջազգային քրեաիրավական նորմերի աղբյուրները 94
2.2 Այլատյացության համար պատասխանատվություն նախատեսող միջազգային քրեաիրավական նորմերի ընդհանուր բնութագիրը և վերլուծությունը 103

Գլուխ 3. Բացառիկ հարցազրույց Ալեքսանդր Լապշինի հետ. հայկականը որպես մահացու մեղք և անդրադարձ ադրբեջանական «Սև ցուցակին»..... 116

3.1 «Սև ցուցակի» նպատակը և ազդեցությունը 116

3.2 Ալեքսանդր Լապշին. կտտանքներից մինչև վերածնունդ 129

Գլուխ 4. Ռեալ սկզբունքի հիման վրա Ադրբեջանում հայատյացության դեմ ՀՀ քրեական օրենսդրության կիրառման հիմնահարցերը 157

4.1 Քրեական օրենքի գործողության ռեալ սկզբունքի էությունը և նշանակությունը 157

4.2 Ռեալ սկզբունքի արտացոլումը ՀՀ քրեական օրենսդրության մեջ 165

4.3 Ադրբեջանում հայատյացության քրեաիրավական գնահատականի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված ռեալ սկզբունքի կիրառման հնարավոր իրավական ուղիները 172

Եզրակացություն. 182
Գրականություն 187

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Գառնիկ Մկրտիչի Դավթյանը ծնվել է 22.10.1991թ.:

*1998-2008թթ. սովորել է «Սեբաստիա» կրթահամալիրում:

*2008թ-ին ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ:

*2009-2011թթ. պարտադիր ժամկետային զինվորական ծառայության է անցել ՀՀ Զինված Ուժերում:

*2011թ-ին վերադառնալով զինծառայությունից ուսումը շարունակել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, որն ավարտել է 2014թ-ին:

*2016-2018թթ. ընդունվել և ավարտել է Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

*2018թ-ից հեղինակը հանդիսանում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի հայցորդ:

Մենագրության հեղինակը տիրապետում է անգլերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներին:

Հեղինակը պաշտպանել է մագիստրոսական ատենախոսություն քրեական իրավունք առարկայից՝ «Ադրբեջանում հայատյացության միջազգային քրեաիրավական գնահատականը և ռեալ սկզբունքի հիման վրա ՀՀ քրեական օրենսդրության կիրառման հիմնահարցերը» թեմայով:

* 2018 թ.«Այլընտրանք» Հետազոտական կենտրոնի եռամսյա գիտական հանդեսում հրատարակել է 2 հոդված՝ «Տնտեսական ճգնաժամի պայմաններում Ադրբեջանում հակահայկական քարոզչության հիմնական աղբյուրները, ուղղությունները և դրանց հակաօրինականությունը» և «Ադրբեջանում տնտեսական խնդիրները և այլատյացության համար պատասխանատվություն նախատեսող միջազգային քրեաիրավական նորմերը» թեմաներով:

Մենագրության հեղինակը մասնակցել է տարբեր միջազգային հեղինակավոր համաժողովներին.

* Մադրիդ՝ 06-12.09.2015թ., Իսպանիայի Երիտասարդական Ատլանտյան Դաշինք Ասոցիացիայի կողմից կազմակերպած «Միջերկրածովային Երիտասարդական Երկխոսություն» ծրագրին, որտեղ հանդես է եկել որպես ծրագրի նախագահ:

* 3 անգամ անընդմեջ եղել է «Եվրո-Ատլանտյան Դիվանագիտական Հասարակություն» կազմակերպության կողմից կազմակերպած 2013թ.(Հուլիս 8-13 2013թ., Բրյուսել), 2014թ. (Դեկտեմբեր 1-7 2014թ., Մոնտենեգրո), 2015թ. (Օգոստոս 10-15 2015թ., Ռիգա և Ստոկհոլմ) «Մոդել ՆԱՏՕ Երիտասարդական Համաժողով»-ի հայկական պատվիրակության ղեկավար:

* Գառնիկ Դավթյանը եղել է նաև «Խաղաղություն և Անվտանգություն ՆԱՏՕ ամառային դպրոց» ծրագրի հայկական պատվիրակության անդամ:

* Մասնակցել է «Իմէջին Կենտրոն» հկ-ի կողմից 2014թ.-ի փետրվարի 3-9-ը Բակուրիանում՝ Վրաստանում, կազմակերպած «Հայ-ադրբեջանական Երկխոսություն» ծրագրին:

* Հեղինակը նաև մասնակցել է «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» կողմից նախաձեռնած «EPNK» ծրագրին, եղել է հայկական պատվիրակության անդամ և մասնակցել է հայ-ադրբեջանական երիտասարդական քննարկումներին և այլն:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ցանկանում եմ իմ խորը երախտագիտությունը հայտնել ծնողներիս՝ Մկրտիչ և Լուսինե Դավթյաններին, ովքեր մեծ դեր են ունեցել մենագրությունս հաջող ավարտին հասցնելու հարցում: Ի շնորհիվ ծնողներիս անփոխարինելի աջակցության՝ այսօր ձեզ եմ ներակայացնում «Հայատյացությունը Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում» մենագրությունը:

Հարկ եմ համարում իմ խորին շնորհակալությունը հայտնել Երևանի «Գլաձոր» համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի ընդհանուր իրավագիտության ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ Արմեն Քինակցյանին, ով իր մասնագիտական խորհուրդներով նպաստել է մենագրության կարևոր քրեաիրավական նորմերի ճիշտ վերլուծությանը: Ա. Քինակցյանի դիտողություններն ու առաջարկությունները էական նշանակություն են ունեցել մենագրության մասնագիտական բացերը լրացնելու հարցում:

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում՝ Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և դատավարության ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Ստեփան Ծաղիկյանին մենագրությունը խմբագրելու և մասնագիտական խորհրդատվության, իսկ ի.գ.թ. Ավետիք Խաչատրյանին, և իրավագիտության մագիստրոս, ք.գ.թ. Արմեն Հարությունյանին՝ Հայ-Ռու-

սական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի ավագ դասախոսին, մենագրությունը գրախոսելու և կարևոր առաջարկներ անելու համար:

Օգտվելով առիթից իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում N146 հիմնական դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ Մարիամ Գրիգորյանին: Ի շնորհիվ Մարիամ Գրիգորյանի մասնագիտական աջակցության կարողացել եմ հեշտությամբ հաղթահարել որոշ մասնագիտական ձևակերպումների հետ կապված դժվարությունները:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում՝ Երևանի «Գլաձոր» համալսարանի ռեկտոր ի.գ.դ. պրոֆեսոր Ժ. Ջհանգիրյանին, և «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն»-ի նախագահ Թևան Պողոսյանին մենագրության վերաբերյալ տեղեկատվական և համապատասխան մարդկանց հետ կապի կամուրջ ապահովելու համար: Ի շնորհիվ այդ կապի, ընթերցողները մենագրությունը ընթերցելիս կկարողանան Ադրբեջանում իրականացվող հայատյացության վերաբերյալ ավելի խորը և հետաքրքիր փաստեր բացահայտել:

Առաձնահատուկ շնորահակալություն եմ հայտնում Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան, բ.գ.դ. պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանին և ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասիս-

տենտ, պ.գ.թ. Վարուժան Գեղամյանին՝ մենագրության շրջանակներում արված մասնագիտական դիտարկումների, խորհուրդների և առաջարկությունների համար:

Շնորհակալ եմ նաև իմ լավ ընկերներին, «Արմենպրես»-ի պետական լրատվական գործակալության թղթակից Լիլիթ Դեմուրյանին, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի մագիստրանտ Ջուլիետա Ասատրյանին մասնագիտական խորհրդատվությունների համար: Վերջիններս առանցքային դեր են խաղացել մենագրության պատրաստման հարցում, ինչպես նաև նպաստել որոշ հարցերում ճիշտ կողմնորոշմանը:

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում «Քսենոֆոբիայի և ռասիզմի դեմ պայքարի» ՀԿ-ի համահիմնադիր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի հայցորդ Աշխեն Հովսեփյանին և Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրանտ Մազման Պողոսյանին՝ կառուցողական քննադատության համար: Իսկ «Քսենոֆոբիայի և ռասիզմի դեմ պայքարի» ՀԿ-ն եղել է մենագրության տպագրության հենարանը, և ելնելով այս հանգամանքից տալիս եմ իմ համաձայնությունը, որպեսզի վերջինս նույնպես օգտվի իմ մենագրության հեղինակային իրավունքից:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում նաև իմ մտերիմ ընկերներ՝ Հասմիկ Սարգսյանին, Հովհաննես Գևորգյանին և Գոռ

Վարդանյանին, ովքեր մենագրության պատրաստման փուլում հետաքրքիր հարցադրումներով, խորհուրդներով և հոգեբանական աջակցությամբ նպաստել են ոգուս տոկունության պահպանմանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր պետության կարևորագույն գործառույթներից է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև օրենքի գերակայության և իրավահավասարության ապահովումը:

Ժամանակակից աշխարհում խաղաղության, մարդկության և իրավահավասարության դեմ ուղղված հանցագործությունները շարունակում են մնալ սպառնալիք աշխարհի խաղաղությանը և անվտանգությանը: Այդ հանցագործություններից են՝ այլատյացության հանցավոր դրսևորումները, մասնավորապես՝ Ադրբեջանում տիրող հայատյացությունը, որն առանձնանում է իր դաժանությամբ և անհանդուրժողականությամբ:

Ադրբեջանում պետականորեն հովանավորվող հայատյացության ագրեսիվ քարոզչությունը սկիզբ է առել պետության ձևավորման առաջին իսկ տարիներից, սակայն վերջին երկու տասնամյակում բարձրացվել է լոզունգային մակարդակի:

Սույն մենագրության թեմայի ընտրությունը պայմանավորված է մի շարք կարևոր հանգամանքներով, մասնավորապես առարկայական քննարկելու 1918թ. մինչև մեր օրերը Ադրբեջանում տարվող հայատյացության աստիճանավանդակը, ընթերցողին ծանոթացնելու Ադրբեջանում պետական մակարդակով

իրականացվող հայատյացությանը և այլն: Ավելին, մենագրությունն ուղղված է՝

- բացահայտելու այն անօրինականությունները, որոնք հանգեցնում են հայատյացությամբ դրսևորվող հանցագործությունների՝ անկախ նրանց ծանրության աստիճանից:
- քրեաիրավական տեսանկյունից Ադրբեջանում հայատյացության գնահատմանը և վերլուծությանը:

Մենագրությունը նպատակ է հետապնդում հնարավորինս բազմակողմանի և խորը քրեաիրավական վերլուծության ենթարկել Ադրբեջանում հայատյացության դրսևորումները, ինչպես նաև փորձել վեր հանել նշված դրսևորումների դեմ պայքարի քրեաիրավական հնարավորությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ այլատյացության դեմ պայքարի միջազգային փորձի համատեքստում, սույն աշխատանքում, համեմատական հետազոտության են ենթարկվել տարբեր միջազգային կառույցների կողմից ընդունված բանաձևերը, պայմանագրերը, կոնվենցիաները, զեկույցները և այլ իրավական աղբյուրներ:

Հիշյալ նպատակն ու դրանից բխող խնդիրները պայմանավորել են սույն մենագրության կառուցվածքն ու շարադրման տրամաբանությունը:

Աշխատանքը մշակելիս լայնորեն օգտագործվել են ճանաչողության տրամաբանական մեթոդները՝ վերլուծությունը, համադրումը, համեմատումը, ինչպես նաև պատմաիրավական և այլ մեթոդներ:

Սույն մենագրությունը պատրաստելիս ուսումնասիրվել են Ադրբեջանում առկա հայատյացության առավել հայտնի, ցայտուն դրսևորումները: Դրանք վեր են լուծվել և համեմատվել, թե՛ միջազգային իրավունքի և, թե՛ Հայաստանի Հանրապետության օրենսդրության տեսանկյունից:

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Առաջին գլխի առաջին կետում ներկայացված են Ադրբեջանում հայատյացության հասկացությունը: Իսկ երկրորդ կետում, նկարագրված են Ադրբեջանում հայատյացության արմատները: Իսկ երրորդ կետում Ադրբեջանում հայատյացության քարոզչության հիմնական ուղղություններն ու միջոցները և դրանց օգտագործման հակաօրինականությունը: Առաջին գլխի չորրորդ կետում մանրամասն ներկայացված են Ադրբեջանում հայատյացության առանձին դրսևորումները և դրանց հակաօրինականությունը:

Սույն մենագրության երկրորդ գլխի առաջին կետում ներկայացված է այլատյացության համար պատասխանատվություն նախատեսող միջազգային քրեաիրավական նորմերի ընդհա-

նուր բնութագիրը և վերլուծությունը: Իսկ երկրորդ գլխի երկրորդ կետով ներկայացվել է այլատյացության համար պատասխանատվություն նախատեսող միջազգային քրեաիրավական նորմերի աղբյուրները:

Աշխատանքի երրորդ գլխի առաջին կետում ներկայացված է «Սև ցուցակի» նպատակը և ազդեցությունը: Իսկ երկրորդ կետում տեղ է գտել «Ալեքսանդր Լապշին. կտտանքներից մինչև վերածնունդ հարցազրույցը»:

Չորրորդ գլխի առաջին կետը Քրեական օրենքի գործողության ռեալ սկզբունքի էության և նշանակության մասին է: Իսկ երկրորդ կետը վերաբերում է ՀՀ քրեական օրենսդրության մեջ Ռեալ սկզբունքի արտացոլմանը: Մենագրության վերջին, բայց ոչ պակաս կարևոր թեման՝ Ադրբեջանում հայատյացության քրեաիրավական գնահատականի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված ռեալ սկզբունքի կիրառման հնարավոր իրավական ուղիներն է:

Սույն մենագրության համար տեսական հիմք են ծառայել ինչպես հայ հեղինակների՝ Ա.Ղարիբյանի, Ջ.Կիրակոսյանի, Յու. Անտոնյանի, Գ. Ղազինյանի, Ա. Ադիբեկյանի, Ա.Էլիբեգովայի, Վ.-Միրաքյանի, Վ.Քոչարյանի, Մ. Գրիգորյանի և այլոց գիտական աշխատությունները, ձեռնարկները, հոդվածները, այնպես էլ օտարերկրյա հեղինակների, մասնավորապես Ի. Սալնիկովի, Մ.

Դավիատաձեի, Ա. Կռավչենկոյի, Լ. Բեռկովիցի, Դ. Մայերսի, Ա. Ռոժդենստվինայի, Ն. Կուզնեցովայի, Վ. Ստյեպաշինայի, Ա. Շի-ֆի և այլոց մշակումները:

Տեսաիրավական ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են ինչպես Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության, այնպես էլ միջազգային կառույցների կողմից ընդունված իրավական ակտերը, պաշտոնական փաստաթղթերը, քրեագետների, լրատվության միջոցների և այլ աղբյուրների տվյալները:

ԳԼՈՒԽ 1. ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ՀԱԿԱՒՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

1.1 ԱՅԼԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Այլատյացությունը հասկանալու, այնուհետև դրան իրավական գնահատական տալու համար նախ և առաջ պետք է հասկանալ, թե այլատյացությունն ինչ ծագումնաբանություն ունի և սկզբում ինչպես է արտահայտվել այս կամ այն էթնոսում, ազգում, հասարակությունում:

Այլատյացության ուսումնասիրությամբ զբաղվում են տարբեր բնագավառների մասնագետներ՝ իրավաբաններ, հոգեբաններ, կենսաբաններ, պատմաբաններ, սոցիոլոգներ և այլն:

Այլատյացություն (Xenophobia) բառը առաջացել է հունարեն լեզվից, որտեղ xenos՝ նշանակում է օտար, իսկ phobos՝ վախ: «Այլատյացություն» բառացիորեն նշանակում է վախ օտարի հանդեպ կամ խորը անհավանություն կամ վախ այլ երկրների մարդկանց նկատմամբ[1]: Բառն օգտագործվում է նկարագրելու համար թշնամանքն այլ երկրներից եկած կամ այլ էթնիկ խմբերին պատկանող մարդկանց հանդեպ, ինչպես նաև այն իր մեջ ներառում է հարգանքի պակաս օտար ավանդույթների ու մշակույթի հանդեպ: Այլատյացությունը դիտարկվում է որպես.

[1]https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/american_english/xenophobia, (xenophobia), 08.02.2018:

1. Հիվանդագին՝ «կպչուն» վախ անծանոթ մարդկանց նկատմամբ,

2. Ատելություն, անհանդուրժողականություն ինչոր բանի, օտարի, անծանոթի, օտարականի նկատմամբ[2]:

Համաձայն հայ լեզվաբան Էդուարդ Աղայանի՝ այլատյացությունը բացատրվում է հետևյալ կերպ «օտարը և օտարինը ատող, այլամերժ»[3]:

Այլատյացության արմատները սկիզբ են առնում դեռևս վաղ անցյալից: Ինչպես նշում են որոշ ազգագրագետներ, առաջին անգամ այլատյացության դեպք փաստացի արձանագրվել է Հին Կտակարանում՝ Եբրա մտավորական Եզդրանի կողմից: Մասնավորապես նշվում է. «Մ.թ.ա. 458թ.-ին Եբրա մտավորական Եզդրան, ծնված և մեծացած Բաբելոնական կայսրությունում, վերադառնում է Երուսաղեմ… Հրեաների մեծ մասը… ամուսնացած են եղել խեթերի, փղշտացիների և Իսրայելի այլ թշամիների աղջիկների հետ… Այդ ժամանակ Եզդրան հրամանագիր է ստորագրում, որի համաձայն՝ բոլոր հրեաները, ովքեր ամուսնացած են եղել խեթերի կամ այլ ցեղերի ներկայացուցիչների

---

[2] http://enc-dic.com/ozhegov/Ksenofobija-13732.html, “Ксенофобия”, 08.02.2018.

[3] Աղայան Է. Բ., «Արդի հայերենի բացատրականբառարան», մեկ հատորով, Երևան, 1976, էջ 41:

հետ պետք է ետ ուղարկեն իրենց կանանց այնտեղ, որտեղից նրանց վերցրել են[4]»:

Այլատյացության դրսևորման մեկ այլ վառ օրինակ է նաև XI-XIIդդ. Խաչակիրների արշավանքը, որն իրականացվում էր արևմտաեվրոպական կաթոլիկ ասպետների կողմից ընդդեմ «անհավատների»՝ մուսուլմանների, հեթանոսների և ուղղափառների: Խաչակրաց արշավանքը տարբերվում է մնացած այլ արշավանքներից իր դաժանությամբ, հարյուր հազարավոր զոհերով, ավերված քաղաքներով և գյուղերով[5]: Ինչպես նշում է Ի. Սալնիկովը՝ «Այլատյացությունը որպես երևույթ, մարդուն ուղեկցել է բոլոր ժամանակներում: Պատմությանը հայտնի է, թե ինչպիսի բացասական վերաբերմունք են ունեցել հույները սկյութների, պարսիկները արամեների նկատմամբ»[6]: Ի հավելումն իր հիպոթեզի՝ Սալնիկովը նշում է, որ գիտնականների մոտ գոյություն ունի կարծիք, որ այլատյացության հիմքում ընկած են զայրույթը, զզվանքը և արհամարհանքը[7]:

Իսկ Վիկտոր Դոլնիկն առաջ է քաշել իր տեսակետը այլատյացության հնարավոր առաջացման պայմանների վերաբերյալ: Մասնավորապես, նա նշում է, որ կենդանիների մոտ գոյություն

---

[4] http://www.gumer.info/bibliotek_Buks/History/Article/Nagor_Xenofob.php, “Нагорная О. Теоретические аспекты ксенофобии и межнациональных конфликтов”, 08.02.2018.

[5] Сальников И., «Свой»-«Чужой» А стоит ли делить?, Москва, 2010, стр. 5.

[6] Նույն տեղում, էջ 4:

[7] Сальников И., «Свой»-«Чужой» А стоит ли делить?, Москва, 2010, стр. 4.

ունի էթոլոգիական մեկուսացման երևույթ, այսինքն՝ ագրեսիա և թշնամության արտահայտում նույնանման տեսակների և ենթատեսակների նկատմամբ: Հեղինակի կարծիքով՝ զգուշավորության ռեակցիան իր նմանների նկատմամբ անխուսափելի է և կենսաբանորեն ընդունելի: Մարդկանց մոտ ևս առկա են տարբերություններ լեզվի, ավանդույթների, մշակույթի, կրոնի, կեցվածքի և այլնի միջև, ինչը կարող է առաջացնել արտաքին տպավորություն այլ տեսակի վերաբերյալ: Դոլնիկը նաև նշում է որ, որոշ ազգագրագետների կարծիքով՝ ռասայական և ազգային մերժումը, այսինքն՝ չընդունումն, իր հիմքում ունի վարքագծային ծրագրի ձախողում[8]:

Անդրադարձ կատարելով այլատյացությանը՝ կարծում ենք, անհրաժեշտ է նշել մի շատ կարևոր հանգամանք. քանի որ այլատյացությունը և ռասիզմը հարակից երևույթներ են, դրանք հաճախ սխալմամբ նույնացվում են: Այդ առումով արժե հիշատակել «Ընդդեմ ռասիզիմի, ռասայական խտրականության, այլատյացության և հարակից այլ անհանդուրժողականության» փաստաթուղթ, որն ընդունվել է 2001թ-ին համաշխարհային խորհրդաժողովում: Այն կազմակերպվել էր ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի, Աշխատանքի միջազգային գրասենյակի, Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից: Վերջիններս տվել են ռասիզմի

[8] http://ethology.ru/library/?id=36, Общественное поведение, 08.02.2018.

և այլատյացության մեկնաբանությունը, որի համաձայն՝ այլատյացության սահմանումը և վերջինիս տարբերակումը ռասիզմից և ռասայական խտրականությունից, համարվում են զարգացող հասկացություններ:

Խորհրդաժողովն առաջարկել է հետևյալ ձևակերպումները՝

- Ռասիզմը գաղափարական կառուցվածք է, որը սահմանում է կոնկրետ ցեղի կամ էթնիկ խմբի ուժի դիրքը ուրիշների նկատմամբ՝ հիմնված ֆիզիկական և մշակութային հատկանիշների, ինչպես նաև տնտեսական հարստության վրա՝ ներառյալ հիերարխիկ հարաբերությունները, որտեղ «վերադաս» ռասան ցուցաբերում է գերիշխանություն և վերահսկում ուրիշներին:
- Այլատյացությունն արտահայտում է վերաբերմունք, նախապաշարմունքներ և վարքագիծ, որը մերժում, բացառում և հաճախ վիրավորում է անձանց՝ հիմնված այն ընկալման վրա, որ վերջիններս համարվում են օտարականներ կամ այլերկրացիներ իրենց համայնքում, հասարակության կամ ազգային ինքնության մեջ»[9]:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ պետք է նշել, որ այլատյացությունը չունի պատկանելության սկզբունք՝ չի ճանաչում ո՛չ ազգ, և ո՛չ կրոն, որը ոչ միայն սերմանում է ատելություն կոնկրետ օբյեկտի նկատմամբ, այլև դրդում հանցագործության: Չնայած

[9] Միջազգային միգրացիա, ռասիզմ, ռասայական խտրականություն և այլատյացություն, 2001, էջ 2:

նրան, որ այլատյացությունը ունի դարավոր անցյալ՝ այն շարունակում է նոր թափով զարգանալ և արմատավորվել տարբեր հասարակություններում:

Այդ իսկ պատճառով՝ II համաշխարհային պատերազմի ավարտից հետո, միջազգային հանրությունը առանձնակի ուշադրություն սկսեց դարձնել մարդու իրավունքներին և հարակից այլ իրավունքներին: Պետք է հավելել, որ ժամանակակից միջազգային իրավունքում գոյություն ունեն կոնվենցիաներ, պայմանագրեր և այլ միջազգային-իրավական փաստաթղթեր, որոնք ուղղված են այս կամ այն պետության, կամ սուբյեկտի կողմից այլատյացության դրսևորումների կանխմանը և դրանց իրավական որակմանը: Մարդու իրավունքների միջազգային-իրավական ամրագրումը լայն թափ հավաքեց, մասնավորապես, 1945թ. հոկտեմբերին ՄԱԿ-ի կանոնադրության ընդունմամբ, որը, կարելի է ասել, հաջորդիվ թվարկած փաստաթղթերի սկզբնաղբյուրն է՝

- 1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»,
- 1949թ. օգոստոսի 12-ին ընդունված «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» կոնվենցիան,

- 1950թ. նոյեմբերին ընդունված «Մարդու իրավունքների մասին» և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիան,
- «ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի մասին» որոշումը, որը ձևավորվեց 2006թ.՝ փոխարինելով Մարդու իրավունքների հանձնաժողովին.
- «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան» ընդունված 1950թ.
- շատ այլ փաստաթղթեր:

Ամփոփելով փաստենք, որ իրավունքը այն կարևոր ուժն է, որը ընդգծում է մարդու իրավունքների և ազատությունների սահմանագիծը, կանխարգելում կամ համապատասխան պատիժ սահմանում իրավախախտին:

1.2 ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Այլատյացության դրսևորումներ կարող են նկատվել յուրաքանչյուր պետությունում, հասարակությունում, համայնքում և այլ հնարավոր վայրերում: Մեզ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներիս, մեր պետության և աշխարհի բոլոր հայերի համար առանձնակի ուշադրության են արժանի ներկայիս Ադրբեջանում տեղի ունեցող այլատյացության, մասնավորապես հայատյացության դրսևորումները: Որպեսզի անդրադարձն ավելի հիմնավոր լինի, կարծում ենք, նպատակահարմար է համառոտ պատմական անդրադարձ կատարել, թե այլատյացության ինչպիսի դրսևորումներ են եղել Ադրբեջանի առաջին Հանրապետությունում, Սովետական Ադրբեջանում և ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունում:

Փորձենք Ադրբեջանում հայատյացության զարգացումը ներկայացնել երեք փուլով՝

<u>I Փուլ, 1918-1920թթ.</u>

I-ին փուլի ընտրությունը պայմանավորված է Ադրբեջանի՝ որպես պետություն ձևավորման, սկզբնական շրջանի առանձնացմամբ: Այդ ժամանակաշրջանում հայատյացության աչքի զարնող դրսևորումներից են, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղում հայերի ջարդերը, եկեղեցիների ու մշակութային ար-

ժեքների ոչնչացումը, հայերի իրավունքերի սահմանափակումները: Այս մասին վկայում են բազում փաստեր: Ինչպես օրինակ՝ ««Ադրբեջանի Ժողովրդական Ճակատ» (ԱԺՃ): Աբուլֆազ Էլչիբեյի՝ ԱԺՃ-ի նախագահ ընտրվելուց օրեր անց՝ հուլիսի 21-ից, Լենինի հրապարակում ցույցերը վերսկսվում են: Սկզբում դրանց ներկա էին մի քանի հարյուր մարդ, բայց մեկ շաբաթ անց ցուցարարների թիվն արդեն հասնում էր մի քանի հազարի:…: ԱԺՃ-ն պահանջում էր, որ Ադրբեջանի Գերագույն խորհուրդը չեղյալ հայտարարի ԼՂԻՄ-ում Հատուկ Կառավարման Կոմիտեի 463 ստեղծման մասին միութենական ղեկավարության որոշումը՝ որպես հանրապետության ինքնիշխանության խախտում, վերադարձնի ԼՂԻՄ-ը հանրապետության վերահսկողության ներքո: Դեռևս դեկտեմբերի երկրորդ կեսից ԱԺՃ-ի շտաբի դիմաց փակցված էին Բաքվի հայ բնակչության հասցեները: Բացի այդ, 10-15 հոգուց բաղկացած մարդկանց խմբերը մտնում էին հիմնարկներ և ձեռնարկություններ՝ պահանջելով տնօրեններից աշխատանքից հեռացնել ազգությամբ հայ աշխատողներին: Ոստիկանությունը ոչինչ չէր ձեռնարկում: Իրադրությունը հիշեցնում էր Սումգայիթի նախօրյակը[10]»: Համաձայն մեկ այլ աղբյուրի՝ «Լեռնային Ղարաբաղի Հիմնախնդիրը 1918-

[10]http://publications.ysu.am/wp-content/uploads/2014/07/Hayrapetyan-T.pdf, Հայրապետյան Տ., «Ադրբեջանի Ժողովրդական ճակատ» կուսակցության ձևավորումը և գործունեությունը (1988-1990 թթ.), հոդված, 08.02.2018:

1920թթ. և Մեծ Բրիտանիան» գրքի՝ «հայերի ամբողջական ոչնչացումը մնում էր թուրքերի իրականացման ծրագրերի ցանկում…1918թ. փետրվարի 27-ին Ռազմական նախարարության կողմից Ադրկովկասում հայերին կոտորելու գաղտնի գրավոր հրաման արձակվեց[11]»: Այդ նույն ժամանակաշրջանի համար, Ջ. Կիրակոսյանն իր «Երիտթուրքերը պատմության դատարանի առաջ գրքում» գրում է. «Իրավիճակը պահանջում է հայերի ամբողջական ոչնչացումը, որը հրամայված էր սուլթանի կողմից[12]»:

II Փուլ, 1920-1991թթ.

Այս փուլի ընտրությունը պայմանավորված է Ադրբեջանի խորհրդայնացումից մինչ անկախության ձեռքբերում:

Խորհրդային Ադրբեջանում (1920թ. ապրիլից) նկատվում էին ակտիվ հայատյացության դրսևորումներ, որն արտահայտվում էր նախ և առաջ հայկական դպրոցների, եկեղեցիների փակմամբ:

«Տասնամյակների ընթացքում շարունակում է նվազել ԼՂԻՄ-ի հայ բնակչության թվաքանակը՝ 1920թ. 94.4%-ից 1979թ. իջնելով 75%-ի: Դրան հակառակ աճում է ադրբեջանական բնակչության թիվը: Խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում Ադր-

---

11 Ղարիբյան Ա. «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920թթ. և Մեծ Բրիտանիան», Երևան, 2012, էջ 20:

12 Կիրակոսյան Ջ. «Երիտթուրքերը պատմության դատարանի առաջ», Երևան, 1982, էջ 228:

բեջանի քաղաքականությունը թեև ուղղված էր մարզի ադրբեջանացմանը, սակայն, Ղարաբաղի հայ բնակչությունը 70 տարի շարունակ դրսևորեց անհնազանդություն և մշտական պայքար մղեց տարածքային և մարդկային կորուստների, նյութական զրկանքների, մարդու իրավունքների ոտնահարման դեմ[13]»:

Հիշյալ ժամանակաշրջանում Ադրբեջանում հայատյացության մասին բազմաթիվ փաստագրական նյութեր են հրապարակվել: Ստորև ներկայացված են արտերկրում հրապարակված որոշ վկայություններ, որոնք վերաբերում են 1988 թվականից ի վեր ի պատասխան ԼՂ բնակչության ինքնորոշման պահանջի ադրբեջանական իշխանությունների կողմից կազմակերպված հայ բնակչության կոտորածներին ու էթնիկ զտումներին Ադրբեջանի ողջ տարածքում, մասնավորապես՝ Սումգայիթում, Բաքվում և Կիրովաբադում:

Մասնավորապես, «Նյու Յորք Թայմզը» (New York Times) և «Վաշինգտոն Պոստ» (Washington Post) լրատվական ընկերությունները, անդրադառնալով վերոնշյալ վայրագություններին, գրում են.

- **«Նյու Յորք Թայմզ»** , 1988թ., մայիսի 22՝ հոդված. «Խորհրդային Միությունը հեռացրեց երկու կոնֆլիկտային հանրապետության կուսակցությունների ղեկավարներին» (Soviet Dismisses Two Party Chiefs in Tense Republics). «Անցած շաբաթ լարվածութ-

---

[13] Կիրակոսյան Ջ. նշվ. աշխ., էջ 228:

յունը կտրուկ վերածվեց բռնությունների…օգտագործելով հայերի մասին տեղեկությունները, հետևում և սպանում էին հայերին իրենց տներում: Ավելի քան 30 մարդ, որոնց մեծ մասը հայ էր՝ սպանվեց…[14]»:

- **«Վաշինգտոն Պոստ»** , 1988թ., ապրիլի 5՝ հոդված. «Կրեմլը ընդունեց հայ փոքրամասնության համար նախատեսված նախագիծը» (Kremlin Adopts Plan For Armenian Minority). «…Վալենտին Ֆալինը՝ «Նովոստի» լրատվական ընկերության տնօրենը, հարցազրույցի ժամանակ նշեց. «…Այն տարածքը, որտեղ մահմեդական ադրբեջանցիները և քրիստոնյա հայերն են, որոնք ունեին լարված կրոնական խնդիրներ …Ադրբեջանի ղեկավարները ոչնչացնում էին եկեղեցիները… փետրվարի 28-ի խռովության ժամանակ… նախքան տղամարդկանց սպանելը, հեռացվում էր նրանց մաշկը, իսկ կանանց նախքան բռնաբարելը և սպանելը՝ կտրում էին նրանց կրծքերը….[15]»:

Կիրովաբադում և Սումգայիթում 1988թ., իսկ ավելի ուշ 1990թ. Բաքվում տեղի ունեցած հայատյացության դրսևորումների՝ ջարդի, բռնության կիրառման, ազատության սահմանափա-

---

[14] http://www.nytimes.com/1988/05/22/world/soviet-dismisses-two-party-chiefs-in-tense-republics.html, “Soviet Dismisses Two Party Chiefs in Tense Republics”, 08.02.2018.

[15] https://www.washingtonpost.com/archive/politics/1988/04/05/kremlin-adopts-plan-for-armenian-minority/0cd8e766-80db-40de-bd99-7ba908c73151/?utm_term=.6fc22fe888a4, “Kremlin Adopts Plan For Armenian Minority”, 08.02.2018.

կումների մասին առկա են նամակագրություններ, որոնք ամրագրված են Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի ընդունած՝ «ԱՄՆ Կոնգրեսը և Լեռնային Ղարաբաղը[16]» հերթական փաստաթղթում. «1988թ. դեկտեմբերին ԱՄՆ-ի Սենատի և Ներկայացուցիչների պալատի 12 անդամներ նամակ են ուղարկում ԽՍՀՄ ղեկավար Գորբաչովին և դեսպան Յուրի Դուբինին, արտահայտելով իրենց մտահոգությունը Ադրբեջանում հայերի անվտանգության մասով[17]…»: Նույն փաստաթղթում անդրադարձ է կատարվում Բաքվում հայերի ջարդերին, որտեղ նշվում է. «Սենատորներ Ջոն Քերրին, Կալիբոռն Պելլը, Լարի Պռեսլերը, Պաուլ Սիմոնը և Պետե Վիլսոնը նամակ են ուղարկում ԽՍՀՄ ղեկավար Գորբաչովին՝ նշելով. «Մենք խորապես մտահոգված ենք բռնությունների, սպանությունների և ունեցվածքի ոչնչացմամբ, Բաքվի հայկական համայնքի վեց օրյա տառապանքով, որը ադրբեջանական կազմակերպված խմբերի կողմից իրականացված հարձակման արդյունքն էր…[18]»:

Համաձայն «Էթնոկրոնական հակամարտություններ. խնդիրները, լուծումները» գրքի հեղինակներ Մ. Դավիդաձեի և Յ. Անտոնյա-

---

16 https://anca.org/assets/pdf/misc/sumgait_baku_factsheet.pdf, “The U.S. Congress and Nagorno Karabakh: Working for Peace, Standing Up for Democracy”, 08.02.2018.

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում:

նի. «Հայտնի է, որ բոլոր ջարդերի ժամանակ, սկսած Սումգայիթից, իրականացվել են մասայական բռնաբարություններ[19]»:

III Փուլ, 1991թ.-մինչև մեր օրերը.

III-րդ փուլի սկիզբ պետք է համարել 1991 թվականից Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմական գործողությունները:

1991թ. ապրիլ-մայիսին ադրբեջանական ԽՍՀ Գետաշենի ենթաշրջանում ԽՍՀՄ ներքին զորքերի և բանակային զորամասերի ակտիվ մասնակցությամբ ադրբեջանական իշխանությունները իրագործեցին բնիկ հայ բնակչության բռնի տեղահանման գործողություն, որը հայտնի է «Կոլցո» օպերացիա անվամբ: Այդ ընթացքում հարձակումներ կատարվեցին սահմանամերձ հայկական բնակավայրերի վրա, որոնց հետևանքով եղան բազմաթիվ զոհեր ու ավերածություններ[20]:

Այս բոլոր վայրագությունները կոպիտ ձևով խախտում են միջազգային իրավունքի նորմերը, մասնավորապես Հաագայի 1899թ. հուլիսի 29-ի կոնվենցիայի 25-րդ հոդվածը, որի համաձայն՝ արգելված է հարձակվել կամ ռմբակոծել այն քաղաքները,

---

[19] Антонян Ю. М., Давитадзе М. Д., Этнорелигиозные конфликты: проблема, решения, Москва, 2004, стр. 59.

[20] http://www.historyofarmenia.am/am/Encyclopedia_of_armenian_history_LXH_patmutyun, «Լեռնային Ղարաբաղ: Պատմությունը», 10.02.2018:

գյուղերը, բնակարանները կամ շենքերը, որոնք պաշտպանված չեն[21]:

Խոսելով «Կոլցո» օպերացիայի մասին, որն ուղղված էր բնիկ հայ բնակչության բռնի տեղահանմանը, պետք է արձանագրենք, որ «1991թ. գարնանը Գյանջայում տեղակայված ռուսական 4-րդ բանակի և հատկապես տանկերով ու հրետանիով համալրված 23-րդ դիվիզիայի ամբողջ կազմի ակտիվ մասնակցությամբ հայերի դեմ իրականացվեց «Կոլցո» օպերացիան, որը տևեց 4 ամիս: Այդ ընթացքում Ղարաբաղից Հայաստան են արտաքսվել մոտ 10.000 մարդ, ամայացվել է 26 գյուղ, ինչի ընթացքում սպանվել է 140-170 խաղաղ բնակիչ[22]»: Հավելենք նաև այն հանգամանքը, որ ադրբեջանական ղեկավարությունը շարունակում էր հայ բնակչության տեղահանման քաղաքականությունը՝ այն ներկայացնելով որպես կամավոր վերաբնակեցում: Սակայն, սա ոչ այլ ինչ էր քան գործողություն, որը արտահայտված էր կոպիտ ուժի և զենքի կիրառմամբ, սպանություններով, կողոպուտով և ավազակություններով:

Պետք է փաստել նաև այն, որ ղարաբաղյան հակամարտության ընթացքում՝ «1992թ. փետրվարի կեսերին լայնամասշտաբ նոր հարձակում սկսվեց Հյուսիսային Արցախի վրա: Հարձակվե-

---

21 Հաագայի կոնվենցիա, 1899, էջ 5:

22 http://publications.ysu.am/wp-content/uploads/2014/07/Chobanyan-G.pdf, Չոբանյան Գ., «Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների որոշ առանձնահատկությունների շուրջ (1988-1992թթ.)», 10.02.2018:

լով Մանաշիդի ուղղությամբ՝ հակառակորդը գործի դրեց զանգվածային բնաջնջման ոչ միայն «Գրադ», այլև «Ուրագան» տիպի արգելված զենքեր[23]»: Այդպիսով Ադրբեջանը խախտել է Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիայի 1-ին Արձանագրության 51-րդ հոդվածի 2-րդ կետը, 4-րդ կետի «ա» ենթակետը, 5-րդ կետի «բ» ենթակետը, ինչպես նաև 52-րդ հոդվածի 1-ին կետը: Համաձայն Արձանագրության 51-րդ հոդվածի նշված կետերի՝ քաղաքացիական բնակչությունը, որպես այդպիսին, ինչպես նաև քաղաքացիական առանձին անձինք չպետք է հարձակումների օբյեկտ հանդիսանան: Արգելվում են բռնության գործողությունները կամ բռնության սպառնալիքները, որոնց հիմնական նպատակն է ահաբեկել քաղաքացիական բնակչությանը: Ոչ ընտրողական բնույթի հարձակումներն արգելվում են: Ոչ ընտրողական բնույթի հարձակումների թվին են պատկանում այն հարձակումները, որոնք ուղղված չեն ռազմական կոնկրետ օբյեկտների դեմ: Հարձակումների այլ տեսակների շարքում հարկ է ոչ ընտրողական բնույթի հարձակումներ համարել այն հարձակումը, որը, ինչպես կարելի է սպասել, զուգահեռաբար կառաջացնի զոհեր քաղաքացիական բնակչության շրջանում,

---

[23] Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2001, էջ 41:

վիրավորներ՝ քաղաքացիական անձանց թվից, և վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին, կամ երկուսը միասին, որոնք չափազանց մեծ կլինեն համեմատած այն կոնկրետ և անմիջական ռազմական առավելությանը, որին ենթադրվում է այդ ձևով հասնել[24]: Ըստ հիշյալ Արձանագրության 52-րդ հոդվածի 1-ին կետի՝ քաղաքացիական օբյեկտները չպետք է հանդիսանան հարձակման կամ փոխճնշումների օբյեկտ: Քաղաքացիական օբյեկտներ են հանդիսանում բոլոր այն օբյեկտները, որոնք չեն հանդիսանում ռազմական օբյեկտներ, ինչպես դրանք սահմանված են 2-րդ կետում[25]:

Անդրադառնալով քաղաքացիական բնակչության պաշտպանության հիմնախնդրին՝ հարկ ենք համարում մեջբերել նաև Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիայի 2-րդ Արձանագրությունը, մասնավորապես հոդված 17-ը, համաձայն որի՝

1. Զինված ընդհարման պատճառներով քաղաքացիական բնակչության տեղափոխման վերաբերյալ չպետք է կարգադրություններ արվեն, եթե դրա անհրաժեշտությունը չի բխում քաղա-

---

[24] Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիաներ (Արձանագրություն 1), 1949թ. օգոստոսի 12, էջ 20:

[25] Նույն տեղում, էջ 21:

քացիական անձանց անվտանգության ապահովման պահանջներից կամ ռազմական բնույթի անհետաձգելի պատճառներից:

Այդպիսի տեղափոխումներ իրականացնելու անհրաժեշտության դեպքում ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները՝ քաղաքացիական բնակչության տեղավորման, հիգիենայի, առողջության, անվտանգության և սննդի տեսակետից բավարար պայմաններում ընդունելու համար:

2. Քաղաքացիական անձինք չեն կարող հարկադրվել թողնելու իրենց սեփական տարածքը՝ ընդհարման հետ կապված պատճառներով[26]:

Կարելի է բերել բազում օրինակներ և փաստեր Ադրբեջանի կողմից իրականացված անմարդկային և դաժան վերաբերմունքի վերաբերյալ, որոնք ուղղված էին հայերի ոչնչացմանը և վերացմանը: Ավելին, Ադրբեջանը պատերազմի 1991-1994թթ. ընկած ժամանակահատվածում աչքի ընկավ արգելված զինատեսակների կիրառմամբ խաղաղ բնակչության նկատմամբ՝ խախտելով մի շարք միջազգային իրավական նորմեր:

Չնայած նրան, որ 1994թ. մայիսի 5-ին կնքվեց Բիշքեկի արձանագրությունը, որը ենթադրում էր ռազմական գործողությունների դադարեցում, փախստականների վերադարձ և այլ դրույթներ, Ադրբեջանը մինչ օրս շարունակում է խախտել ոչ

---

[26] Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիաներ (Արձանագրություն 2), 1949թ. օգոստոսի 12, էջ 6:

միայն խաղաղության հիմքում ընկած այդ արձանագրությունը, այլև արձանագրությամբ նախատեսված մյուս պայմանավորվածությունները:

Պետք է փաստել նաև, որ, չնայած Արցախյան առաջին պատերազմից անցել է ավելի քան երկու տասնամյակ՝ Ադրբեջանի ղեկավարությունը չի հրաժարվել իր հայաոչնչացման ծրագրից:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Ռամիլ Սաֆարովի կողմից իրականացված քրեական արարքը՝ հայ զինվորին քնած ժամանակ կացնահարելը և հետագայում դահիճին Ադրբեջանում պարգևատրումների արժանացնելը:

Ադրբեջանական վայրագությունները նոր թափով արտահայտվեցին արցախյան պատերազմից գրեթե 20 տարի հետո՝ 2016թ. ապրիլի 2-5-ը՝ քառօրյա պատերազմի ժամանակ:

Հայատյացությունը տարբեր ժամանակաշրջանում ունեցել է իր տեղը և դերը Ադրբեջանում: Ադրբեջանի ղեկավարությունը որպես «պետական ծրագիր» իր գլխավոր նպատակն է համարում ոչ միայն նպաստել այլատյացության արմատավորմանն իր երկրում, այլև պարգևատրումների է արժանացնում նրանց, ովքեր աչքի են ընկնում իրենց այլատյացությամբ, մասնավորապես հայատյացությամբ: Ինչպես, օրինակ՝ 2004թ. Բուդապեշտում դաժանաբար սպանված հայ սպա Գուրգեն Մարգարյանի դեպքը, ով մեկնել էր Բուդապեշտ մասնակցելու ՆԱՏՕ-ի հովանավորությամբ կազմակերպած «Գործընկերություն հանուն խա-

ղաղության» ծրագրին՝ անգլերենի դասընթացներին: Մարդասպանը ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովն էր: Հունգարիայի դատարանը վերջինիս դատապարտեց ցմահ ազատազրկման, սակայն տարիներ անց հանձնեց Ադրբեջանին՝ պատիժը Ադրբեջանում շարունակելու պայմանով: Ադրբեջան վերադառնալուց անմիջապես հետո այդ երկրի նախագահը ոչ միայն ներում շնորհեց նրան, այլև պարգևատրեց փոխգնդապետի կոչումով, նվիրեց նոր բնակարան և վճարեց 8 տարվա աշխատավարձը[27]: Նման գործողությունները ոչ միայն խախտում են մի շարք միջազգային կոնվենցիաներ, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Եվրոնեսթի Սահմանադրությունը և այլն, այլև արդարացնում և պետական մակարդակով քարոզում են հայատյացությունը:

Այս իրադարձության մասով Եվրոպական պառլամենտը 2012թ. սեպտեմբերի 13-ին ընդունեց բանաձև՝ «Ռամիլ Սաֆարով գործ[28]» անվամբ, որում մատնանշվում էին մի շարք իրավական կոպիտ խախտումներ, որոնց միջոցով Ադրբեջանի իշխանությունները մարդասպանին ազատություն են շնորհել և

---

[27] https://armenianweekly.com/2017/12/12/azerbaijani-ax-murderer-ramil-safarov-promoted-lieutenant-colonel-baku/, “Congressional Record-Extensions of Remarks”, Adam B Schiff, California, House of representative, 10.02.2018.

[28] http://www.europarl.europa.eu/document/activities/cont/201209/20120924ATT52175/20 120924ATT52175EN.pdf, “European Parliament resolution of 13 September 2012 on Azerbaijan: the Ramil Safarov case”, 10.02.2018.

մեծարել: Խոսքը նախ և առաջ նախնական պայմանավորվածությունների խախտման մասին է, որը հանգեցրել է ստանձնած միջազգային պարտավորությունների անտեսմանը: Այսպես, Ադրբեջանը, հանդիսանալով՝ Եվրոնեսթի հիմնադիր պետություն, Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության ակտիվ անդամ, խախտել է վերջինիս Սահմանդրության հոդված 2-ի «ա» (a) կետը, որի համաձայն՝ «Եվրոնեսթի Խորհրդաժողովը կօգնի աջակցել, նպաստել և գործնական առումով ամրապնդել Արևելյան գործընկերության 4 հիմնական խնդիր՝ հիմնարար ազատությունների վերաբերյալ, այդ թվում ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների հարգման և այլն[29]»:

Ադրբեջանը, 2012-2013թթ. մասնակցելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական նստաշրջանին, վստահեցրել է, որ կպահպանի ՄԱԿ-ի Կանոնադրությունը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի արժեքները: ՄԱԿ-ի Կանոնադրության հոդվածի 1-ինի 2-րդ կետը պարտավորեցնում է՝ «Զարգացնել ազգերի բարեկամական հարաբերությունները՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի վրա և այլ համապատասխան միջոց-

[29] http://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/depa/dv/depa_2010-0310_04_1_/depa_20100310_04_1_en.pdf, "Constituent act of the Euronest parliamentary assembly", 10.02.2018.

ներ ձեռնարկել հանուն համընդհանուր խաղաղության ամրապնդման համար[30]»:

Պետք է փաստել նաև, որ Ադրբեջանը թույլ է տվել նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի լրջագույն խախտում, որն արտահայտվում է այդ հռչակագրի ստորև թվարկված հոդվածներով նախատեսված դրույթների ոտնահարմամբ.

Հոդված 2. 1. Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատություններն՝ առանց որևէ տարբերակման այնպիսի հիմքերով, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը:

Հոդված 3. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք:

Հոդված 7. Բոլորը հավասար են օրենքի առաջ և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք: Բոլորն ունեն սույն Հռչակագիրը խախտող ցանկացած խտրականությունից և նման խտրականության ցանկացած հրահրումից հավասար պաշտպանության իրավունք[31]»:

---

[30] ՄԱԿ-ի Կանոնադրություն, 1945, էջ 2:

[31] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948, պաշտոնական թարգմանություն, էջ 2:

Ադրբեջանը հանդիսանում է նաև Եվրոպայի Խորհրդի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային այլ դաշինքների, այդ թվում Միջազգային քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայի մասնակից-պետություն[32]:

Ադրբեջանական իշխանությունների միջազգային-իրավական այս լրջագույն խախտումները պայմանավորված են հայատյացությամբ: Կարելի է ասել, որ Ադրբեջանում միջազգային-իրավական նորմերի խախտումը դարձել է սովորույթ կամ պրակտիկա: Դրա վառ դրսևորումներից է նաև Ադրբեջանի անհետևողական և անպատասխանատու վերաբերմունքն իր իսկ կողմից ընդունված Եվրոպայի Խորհրդի Սահմանադրության հանդեպ: Փորձենք առանձնացնել այդ փաստաթղթի այն հոդվածները, որոնք ի ցույց են դնում Ադրբաջանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտումները.

«**Հոդված 1-2. Միության արժեքները.** Միությունը ստեղծվել է այնպիսի արժեքների հիման վրա, որոնք հարգում են մարդու արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները՝ ներառյալ փոքրամասնություններին պատկանող

[32]http://www.europarl.europa.eu/document/activities/cont/201209/20120924ATT52175/20-120924ATT52175EN.pdf, “TREATY ESTABLISHING A CONSTITUTION FOR EUROPE”,10.02.2018.

անձանց իրավունքները: Այս արժեքները համընդհանուր են Անդամ պետությունների հասարակությունում, որում բազմակարծությունը, խտրականության բացառումը, հանդուրժողականությունը, արդարադատությունը, համերաշխությունը և հավասարությունը տղամարդկանց և կանանց միջև գերակշռում է:

Հոդված 1-4. Հիմնարար ազատությունները և խտրականության բացառումը. 2. Առանց խախտելու հատուկ դրույթներից որևէ մեկը, Սահմանադրության շրջանակներում, ցանկացած տեսակի խտրականությունը՝ ազգային հողի վրա, պետք է արգելվի:

Հոդված 1-5. Միության և Անդամ պետությունների միջև հարաբերությունները. 1. Միությունը պետք է հարգի Անդամ պետությունների հավասարությունը Սահմանադրության առաջ, ինչպես նաև իրենց ազգային ինքնությունը[33]…»:

Չնայած նրան, որ վերոնշյալ դեպքերը ընդհանուր առմամբ ստացել են համարժեք արձագանք համապատասխան միջազգային ատյաններում, կարծում ենք, որ մինչ օրս համապատասխան քայլերի՝ իրավական պատիժների, բացակայությունը Ադրբեջանի մոտ ստեղծել է հավերժ անպատիժ մնալու տպավորություն:

Անպատժելիությունն այն կարևոր պատճառներից մեկն էր, որը թույլ տվեց Ադրբեջանին գնալ նոր սադրանքի, խոսքը 2016թ. ապրիլի 2-5-ը ընկած քառօրյա պատերազմի մասին է:

---

[33] Treaty Establishing a Constitution for Europe, Belgium, 2005, page 17-18.

Ուսումնասիրելով վերը նշված ժամանակահատվածը՝ պարզ է դառնում, որ Ադրբեջանը կատարել է մի շարք կոնվենցիաների պահանջների կոպիտ խախտումներ: Ինչպես նշում է արցախյան հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները հետազոտող ՀՀ փաստաբանների պալատի փորձագիտական խումբը՝ «2016 թվականի ապրիլի 2-5-ը Ադրբեջանն իրականացրել է զինված հարձակում Արցախի Հանրապետության տարածքի վրա՝ խախտելով միջազգային հարաբերություններում ուժի օգտագործումն արգելող նորմերը, և բացահայտ ոտնահարել է միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Հարձակման հիմնական թիրախ է դարձել սահմանամերձ և խորը թիկունքում գտնվող քաղաքացիական բնակչությունը: Ադրբեջանական բանակն իր զինանոցում գտնվող բազմաթիվ զինատեսակներից՝ «ՄՄ-21» (Գրադ) տիպի հրթիռահրետանային կայանք և «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ, ամենատարբեր տրամաչափի հրետանային միջոցներ (այդ թվում՝ 152մմ հրանոթներ), SOU-1A «Սոլնցեպյոկ» ծանր հրանետային համալիր, ՄԻ-24 գրոհային ուղղաթիռներ, տանկեր ու այլ կարգի զրահատեխնիկա, գրոհային անօդաչու թռչող սարքեր) հրթիռա-հրետակոծման է ենթարկել Արցախի մի շարք բնակավայրեր, որի հետևանքով զոհվել ու վիրավորվել են խաղաղ բնակիչներ, այդ թվում երեխաներ, կանայք և ծերեր: Անվտանգության խնդիրներից ելնելով՝ տարհանվել են Թալիշ, Մատա-

ղիս, Մարտակերտ բնակավայրերի խաղաղ բնակիչները: Ադրբեջանական բանակի կողմից Արցախի խաղաղ բնակչության դեմ կատարված վայրագությունների ու անմարդկային բռնարարքների ապացույցները բազմաթիվ են[34]»: Խաղաղ բնակչության (քաղաքացիական անձանց), ռազմագերիների, անկոմբատանտների, ովքեր զենքը վայր են դրել կամ դադարել են պատերազմական գործողություններին մասնակցելուց հիվանդության, վիրավորվելու, բռնվելու կամ ցանկացած այլ պատճառով, սպանությունը ճանաչված է որպես միջազգային հանցագործություն (պատերազմական հանցագործություն)՝ միջազգային սովորութային իրավունքի համաձայն: Նման արարքները նաև հանդիսանում են միջազգային մարդասիրական իրավունքի ու մասնավորապես 1949 թ. IV Ժնևյան կոնվենցիայի (հ. 147), Ժնևյան կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածի ու 1977 թ. Առաջին ու Երկրորդ արձանագրությունների (համապատասխանաբար հ. 75-2-ա ու հ. 42-ա) կոպիտ խախտում[35]:

---

[34] Արցախի Հանրապետության հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները հետազոտող ՀՀ փաստաբանների պալատի փորձագիտական խումբ, «Մասնագիտական կարծիք», Երևան, 2017, էջ 32:

[35] Այն, որ Ադրբեջանը չի վավերացրել Ժնևյան կոնվենցիաների արձանագրությունները, որևէ կերպ չի ազդում համապատասխան որակման վրա, քանի որ խնդրո առարկա նորմերը հանդիսանում են սովորութային իրավունքի կոդիֆիկացիա, տես՝ Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. USA), merits, ICJ Reports 1986, p. 218:

Այսպիսով՝ կարելի է հանգել եզրակացության, որ այլատյացությունը՝ հայատյացությունը, Ադրբեջանում տարածված է եղել պետության ձևավորման առաջին իսկ օրվանից: Պետք է արձանագրել նաև, որ գործող միջազգային կոնվենցիաների դեպքում, որոնց պարտավորության ստանձնումը նշանակում է անվերապահորեն պահպանել և կատարել դրանցում տեղ գտած բոլոր հոդվածների պահանջները՝ չի ենթադրում դրանք կատարել կամայականության սկզբունքով: Ավելին, Ադրբեջանը ոչ միայն չի կատարում իր կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները, այլև դատելով վերջինիս քայլերից՝ բացահայտ կերպով հրաժարվում է դրանք կատարել Հայաստանի և հայության նկատմամբ: Ադրբեջանում առկա է հայատյացության խորը արմատացում, որն անընդունելի է իրավական տեսանկյունից և հղի է անդառնալի հետևանքներով:

1. 3 ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանում հայատյացության քարոզչական հիմնական ուղղություններն ու միջոցները մեր օրերում այնքան էլ նոր չեն՝ դրանք արդյունքն են հայատյացության արմատավորման, ինչը «հայի» կերպարը, որպես ազգ ներկայացնում է օտարատյացության տեսանկյունից՝ Ադրբեջանի հասարակությունում, առաջացնելով վախի մթնոլորտ: Բացի այն, որ Ադրբեջանը չի կատարում միջազգային կոնվեցիաներով ստանձնած իրավական նորմերի պահանջները, թույլ է տալիս նաև իր իսկ ներպետական իրավունքի կոպիտ խախտումներ:

Փորձենք ներկայացնել Ադրբեջանում հայատյացության քարոզչության հիմնական ուղղություններն ու միջոցները, այնուհետև անդրադառնալ վերջինիս հակաօրինականությանը:

<u>I ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ.</u>

Այս ուղղությունը ներառում է Ադրբեջանի նախագահի և այլ պետական մարմինների կողմից կատարված հայատյացություն արտահայտող հայտարարությունները, որոնց տարածման հիմնական միջոցներն են՝ զանգվածային լրատվության միջոցները, համապատասխան նախարարության կամ այլ պետական հաս-

տատության պաշտոնական կայքէջերը: Ուսումնասիրելով պաշտոնատար անձանց հայտարարությունները՝ պարզ է դառնում, որ վերջիններս, առանց կաշկանդվելու, ագրեսիվ հայտարարություններով նպաստում են հայատյացության արմատավորմանը և քարոզչությանը: Ստորև բերված մի քանի օրինակներում պարզ երևում է, որ կան ոչ միայն ՄԱԿ-ի կանոնադրության, միջազգային նորմերի կիրառման բացեր, այլև ներպետական իրավունքի կոպիտ խախտումներ:

Եվ այսպես, ուսումնասիրելով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի պաշտոնավարման 2003 թվականից մինչ օրս ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև այլ պաշտոնատար անձանց հայտարարությունները՝ պարզ է դառնում, որ հակահայկական հայտարարությունները կրում են շարունակական բնույթ, և դրանցում առկա են ոչ միայն հայատյացության տարրեր, այլև հայաոչնչացման թաքնված կոչեր: Այդպիսի օրինակ է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի ելույթը ազգային հերոս Մուբարիզ Իբրահիմովի և ավագ լեյտենանտ Ֆարիդ Ահմեդովի հրաժեշտի արարողության ժամանակ. «Մենք բանակցությունները կվարենք այնքան ժամանակ, քանի դեռ հույս կունենանք, որ այդ միջոցով կվերականգնվի երկրի տարածքային ամբողջականությունը: Եթե տեսնենք, որ դա անհնար է, ադրբեջանական պետությունը իր տարածքային ամբողջականությունը կվերականգ-

նի՝ օգտագործելով ռազմական ճանապարհը[36]»: Արցախյան հակամարտությանը, քիչ թե շատ տեղյակ մարդ հասկանում է, որ այս հայտարարությունը վերաբերում է Արցախի նկատմամբ Ադրբեջանի վերահսկողությունը վերականգնելուն, ինչը ներկայիս պայմաններում նշանակում է արցախահայության ֆիզիկական գոյության սպառնալիք:

Այսպիսով Ադրբեջանի նախագահի հայտարարությունը միջազգային նորմի կոպիտ խախտման տիպիկ օրինակ է՝ մասնավորապես, խոսքը ՄԱԿ-ի կանոնադրության մասին է: Գոյություն ունի ՄԱԿ-ին անդամակցելու հստակ կանոնակարգ, որը սահմանված է հենց Միավորված ազգերի կազմակերպության կողմից և, որն ընդունելու դեպքում միայն պետությունը կարող է համարվել ՄԱԿ-ի անդամ: Ինչպես վկայակոչում է ՄԱԿ-ի պաշտոնական կայքը՝ ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն, «Կազմակերպությանն անդամագրվելը բաց է բոլոր խաղաղասեր պետությունների համար, որոնք կընդունեն ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ ամրագրված՝ Կազմակերպության կողմից ընդունված պարտավորությունները, կարող են և ցանկանում են կատարել այդ պարտավորությունները[37]»: Հաշվի առնելով այս հանգա-

---

36 http://ru.president.az/articles/1013, “Речь Ильхама Алиева на церемонии прощания с Национальным Героем Мубаризом Ибрагимовым и старшим лейтенантом Фаридом Ахмедовым”, 10.02.2018.

37 http://www.un.org/ru/sections/member-states/about-un-membership/index.html, “Каким образом страны становятся членами ООН?”, 10.02.2018.

մանքը և այն, որ Ադրբեջանը 1992թ. մարտի 2-ին պաշտոնապես դարձել է ՄԱԿ-ի անդամ պետություն, կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի պաշտոնատար անձինք, այդ թվում նախագահը, թույլ են տվել միջազգային նորմի՝ ՄԱԿ-ի կանոնադրության, 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի կոպիտ խախտումներ: Այդ կետերի համաձայն՝ բոլոր անդամներն իրենց միջազգային վեճերը կարգավորում են խաղաղ միջոցներով, այնպես որ վտանգի չենթարկվեն միջազգային խաղաղությունը, անվտանգությունն ու արդարությունը: Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ և/կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից[38]:

Այսպիսով՝ Ալիևի այդ հայտարարությունն իր մեջ պարունակում է ուղղակի սպառնալիք, թե՛ Արցախի Հանրապետությանը և, թե՛ միջազգային խաղաղությանը, քանի որ Ադրբեջանը ուժի գործադրման սպառնալիքից ձեռնպահ մնալու փոխարեն հանդես է գալիս ուժ կիրառելու սպառնալիքով: Իսկ խնդիրը լուծելու խաղաղ ճանապարհ ընտրելու և միջազգային խաղաղությունը վտանգի չենթարկելու փոխարեն Ադրբեջանը շարունա-

[38] http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter_arm.pdf, «ՄԱԿ-ի կանոնադրություն», 10.02.2018:

կում է ՄԱԿ-ի Կանոնադրության նորմերի կոպիտ խախտումնե-
րի շարքը:

Ալիևի 2014թ. մայիսի 27-ի ելույթում ևս առկա են հայատյա-
ցության տարրեր:

Հայտարարությունում, մասնավորապես ասվում է. «Մենք
հետագայում ևս Հայաստանին պետք է պահենք մեկուսացած
վիճակում… Ես բազմիցս ասել եմ, որ պատերազմը շարունակ-
վում է: Ավարտվել է պատերազմի առաջին փուլը: Եթե Հայաս-
տանը չի ցանկանում, որ սկսվի երկրորդ փուլը, ապա պետք է
ճիշտ հետևություն անի, կամավոր կերպով հեռանա գրավված
հողերից: Միգուցե, այդ դեպքում քարտեզի վրա ապագայում
կարող է մնալ անկախ հայկական պետություն[39]»: Փաստորեն
Ադրբեջանը խախտում է ոչ միայն ՄԱԿ-ի կանոնադրությունում
ամրագրված նորմերը, այլև թույլ է տալիս ներպետական իրա-
վունքի կոպիտ խախտում: Ադրբեջանի Հանրապետության
քրեական օրենսգրքի 101-րդ և 104-րդ հոդվածները պատասխա-
նատվություն են սահմանում ագրեսիվ պատերազմ վարելու
հրապարակային կոչերի և ցեղասպանության հրահրման հա-
մար: Ագրեսիվ պատերազմ վարելու հանրային կոչերի համար
պատիժ է նախատեսվում վերոնշյալ օրենսգրքով: Եթե ագրեսիվ

[39] http://ru.president.az/articles/11948, Речь Ильхама Алиева на официальном приеме по случаю национального праздника Азербайджана – Дня республики, 10.02.2018.

պատերազմ վարելու հանրային կոչերը իրականացվել են պաշտոնատար անձի կողմից կամ զանգվածային լրատվական միջոցների օգտագործման միջոցով, ապա համաձայն սույն օրենգրքի՝ 101-րդ հոդվածի 2-րդ կետի, նախատեսվում է պատիժ՝ 2-5 տարի ժամկետով ազատազրկում կամ մինչև 3 տարի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում[40]:

Իսկ 2018թ. փետրվարի 9-ին Ալիևն իր ելույթում ասել է. «Մենք չպետք է մոռանանք մեր պատմական հողերի մասին: Այն պետք է դառնա մեր գործունեության հետագա նշանաբանը, ինչպես մենք ներկայումս ենք աշխատում այդ ուղղությամբ: Մեր պատմական հողերն են Երևանի խանությունը և Զանգեզուրը: Դրա մասին պետք է իմանան և՛ երիտասարդ սերունդը, և՛ ամբողջ աշխարհը[41]»:

Դժվար չէ պատկերացնել, թե Ալիևի ռազմատենչ, այդ թվում Հայաստանի գոյությանը սպառնացող կոչերի հնարավոր իրագործումն ինչ ահռելի մարդկային կորուստներ է առաջացնելու: Այդ կոչերը նաև պարարտ հող են ազգի կամ ազգերի ոչնչացման համար նախադրյալներ ստեղծելու տեսանկյունից՝ պատերազմական իրադրության քողի ներքո (ինչը տեղի ունեցավ Ա-

---

40 “Уголовный кодекс” Азербайджанской Республики, 2013, стр. 49, 50.

41 http://ru.president.az/articles/26998, Речь Ильхама Алиева на VI съезде Партии “Ени Азербайджан”, 10.02.2018.

ռաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Օսմանյան Թուրքիայի կողմից կազմակերպվեց և իրագործվեց հայոց ցեղասպանությունը), ինչպես նաև կարող են նպաստավոր պայմաններ ստեղծել մարդկանց բռնի տեղահանման համար:

Անդրադառնալով Ադրբեջանի, այսպես կոչված, «պատմական հողերի» վերադարձման թեմային, որն իրականության և իրավական տեսանկյունից կրում է բազում հակասություններ և անօրինական բնույթ, պետք է փաստել, որ Ադրբեջանի մոտեցումն առ այն, որ բանակցության ճանապարհով չբավարարվելու դեպքում վերջինս կդիմի ռազմական գործողությունների, վկայում է այն մասին, որ Ադրբեջանի մոտ Հայաստանի դեմ պատերազմ սկելու և հայերին ոչնչացնելու նախատրամադրվածություն կա:

Շարունակելով քննարկել Ադրբեջանում հայատյացության քարոզման 1-ին ուղղությունը՝ փորձենք անդրադառնալ ադրբեջանցի տարբեր գործիչների կողմից արված հայատյացության տարրեր պարունակող մի քանի հայտարարություններին:

Մասնավորապես, այդպիսի մի հայտարարությամբ հանդես է եկել Եվրոպայի Խորհրդում Ադրբեջանի դեսպանը 2004թ. փետրվարի 20-ին՝ նշելով. «Մինչև չկարգավորվի Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը, նման տեսակի միջադեպերը բացառելը

հնարավոր չէ[42]»: Խոսքը Բուդապեշտում սպանված հայ սպա Գուրգեն Մարգարյանի մասին է: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի դեսպանի կողմից արվել է նախազգուշացում: Հայտարարությունում ինչ-որ տեղ առկա է նաև նախապայման, այսինքն՝ եթե Լեռնային Ղարաբաղի խնդիրը շարունակի մնալ չլուծված, ապա Ադրբեջանը կշարունակի նման ձևերով իր պահանջների ներկայացումը: Փաստացի ստացվում է, որ դեսպանի հայտարարության մեջ հստակ առկա են ֆիզիկական ոչնչացման և սպանության սպառնալիքներ:

Տարօրինակ նյութ է հրապարակել ադրբեջանական լրատվական մի կայք, ըստ որի՝ «Կովկասի մուսուլմանների գլխավոր առաջնորդ՝ Հաջի Ալլահշյուքյուր Փաշազադեն հանդես է եկել կտրուկ մեղադրանքներով հայերի հանդեպ»: Կրոնական առաջնորդը, փոխարենը կրոնն օգտագործի խաղաղության կոչեր անելու համար, հակառակը, իրավիճակը տանում է զգացմունքային հարթություն և հանդես գալիս հայատյացության կոչերով. «Մենք անում ենք ամեն հնարավոր բան կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար…բայց չենք տեսնում այդ հանդիպումների արդյունքը: Որովհետև սուտը և դավաճանությունը հայերի արյան մեջ է: Նրանք նստել են մեր սեղանի շուրջ և

[42] https://regnum.ru/news/221381.html, Посол Азербайджана в СЕ не советует армянам спать спокойно, пока карабахский конфликт не решен, 10.02.2018.

օգտվել նրանից, իսկ փողոց դուրս գալուց հետո խոսել մեր դեմ[43]:»

Առավել զարմանալի է քաղաքագետ Վաֆա Գուլուզադեի 2011թ. հուլիսի 26-ին «Մենք պետք է պատրաստ լինենք ապագա ճակատամարտին» հոդվածը, որտեղ քաղաքագետը դիմում է հիտլերականությանը՝ խորհուրդ տալով ուսումնասիրել հիտ-լերյան փորձը. «Թող գնան և ուսումնասիրեն Հիտլերի 30-ական թվականների փորձը՝ ինչպիսի հիանալի բանակ է նա ստեղծել: …այդ իսկ պատճառով Գերմանիան ավելի քիչ կորուստներ կրեց պատերազմի ժամանակ: Կարճ ասած, ուզում եմ ասել, որ մենք՝ ինչպես հիտլերականները, պետք է ամենայն լրջությամբ պատրաստվենք պատերազմի[44]:»

Ամփոփելով նշենք, որ վերը բերված օրինակներով չի ա-վարտվում հայատյաց հայտարարությունների շարքը, որում արտահայտված են պետական տարբեր պաշտոններ զբաղեց-նող, այդ թվում հոգևոր դասին պատկանող անձանց կողմից հնչեցրած «մտքերը»:

---

[43] https://news.day.az/society/125166.html, Глава Духовного управления мусульман Кавказа: “Ложь и предательство в крови у армян”, 12.02.2018.

[44] Адибекян А., Элибегова А., “Армянофобия в Азербайджане”, Ереван, 2013, стр. 93.

II ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ.

Այս ուղղությունն ընդգրկում է Ադրբեջանում հայատյացության տարածման երկու բնագավառ՝ կրթության համակարգը, սկսած նախադպրոցական հաստատություններից, դպրոցներից և վերջացրած բուհական ու հետբուհական կրթությամբ, ինչպես նաև գիտական ասպարեզը:

Ադրբեջանի ծավալած հայատյացության ծրագիրն իրականացվում է, մասնավորապես ուսանողներին, գիտական ասպարեզում գործունեություն ծավալող անձանց պարգևատրումներ տրամադրելով: Ադրբեջանում հայատյացության տարածման միջոցներից են տպագիր հրատարակությունները՝ թերթերը, ամսագրերը, այդ թվում՝ գիտությամբ զբաղվով անձանց կողմից պարբերաբար հրատարակվող գրքերը, հոդվածները, վերլուծությունները, դպրոցական դասագրքերում տեղ գտած պատումները կամ, այսպես կոչված, պատմության դասերը:

Այս ամբողջը վկայում է, որ Ադրբեջանում հայատյացությունը, ինչպես նշվեց, «պետական ծրագիր» է, որը, սերմանելով հայատյացություն սեփական հասարակությունում, խախտելով, թե՛ ներպետական իրավունքը և, թե՛ միջազգային մի շարք կոնվենցիաներ, նպաստում է ագրեսիվ և օտարամերժ «կայուն» հասարակության ձևավորմանը:

«Դպրոցական դասագիրքը կարևոր դեր է կատարում աշակերտների մտավոր զարգացվածությունն ու անհատականա-

ցումն ապահովելու հարցում: Դասագրքի գերագույն նպատակն է ապահովել ուսանողի՝ դասընթացի վերաբերյալ անձնական զարգացումը[45]»:

Ինչպես նշում է Ռուսաստանի կրթության և գիտության նախարար Օլգա Վասիլեվան. «Ցանկանո՞ւմ եք իմանալ, թե ինչպիսին է իրեն տեսնում այս կամ այն երկրի քաղաքացին՝ բաց արեք այն դասագրքերը, որով նա սովորել է դպրոցում[46]»:

Աներկբա է, որ յուրաքանչյուր պետությունում կրթությունը կարևորագույն տեղ է զբաղեցնում հասարակության կայացման հարցում: Եվ միայն պետությունից է կախված ի բարօրություն խաղաղության, թե ի շահ օտարամերժության տարածման կրթության ուժի օգտագործումը:

Ուսումնասիրելով Ադրբեջանում կրթության զարգացման արդի միտումներն ու առանձնահատկությունները, դպրոցում ուսուցիչներին վախեցնելու, երեխաների իրավունքները կոպիտ խախտելու փաստերը՝ հանգել ենք եզրակացության, որ Ադրբեջանում հայատյացության քարոզը կրթության ասպարեզում զբաղեցնում է առաջնային տեղ: Ներկայացնենք մի փաստ.

«Դեկտեմբերի վերջին, ազգայնական կազմակերպության մի խումբ անդամներ ներխուժեցին Բաքվի ավագ դպրոցներից մե-

---

45 Адибекян А., Элибегова А., “Армянофобия в Азербайджане”, Ереван, 2013, стр. 182.

46 https://vz.ru/news/2017/6/27/876167.html, “Васильева объяснила роль учебника в будущем”, 12.02.2018.

կը…: Նրանք աշակերտների առջև նվաստացրին Ազիզով ազգանունով մի ուսուցչի…: Վերջինիս խոսքերով հարձակվողները մեղադրում էին, որ նա հայ գործակալ է, ասում էին. «Հայաստանի հրամանով եկել եմ ոչնչացնելու Ադրբեջանը»: Բայց ես պարզապես ուզում էի ցույց տալ, որ խաղաղությունը հնարավոր է, որ մենք չենք կարող իրար սպանելով լուծել այս խնդիրը: Այսքանը»: Ազիզովը պատմում է. «Նրանք ասում էին ինձ, որ դու (Ազիզով) ավելի լավ է հեռանաս: Եթե դու մնաս, մեր երեխաների կյանքը վտանգի տակ կդնես: Եթե նրանք իսկապես հավատային, որ հայերը և ադրբեջանցիները կարող են ապրել կողք կողքի, նրանք կաջակցեին ինձ[47]»:

Խոսելով Ադրբեջանում տեղի ունեցած այս միջադեպի մասին՝ պետք է նշել, որ այստեղ առկա են Ադրբեջանի Հանրապետության «Կրթության մասին» օրենքի (մասնավորապես 33-րդ հոդվածի 33.3.4 կետի), Ադրբեջանի Հանրապետության «Երեխայի մասին» օրենքի, ինչպես նաև սահմանադրական նորմերի կոպիտ խախտումներ: Խոսքը գնում է, մասնավորապես Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության 47-րդ հոդվածի մասին: Համաձայն Ադրբեջանի Հանրապետության «Կրթության մասին» օրենքի 33-րդ հոդվածի (որը սահմանում է դասավանդողների իրավունքները և պարտականությունները) 33.3.4. կետի՝ դասավանդողը սովորող-

[47] https://eurasianet.org/node/86731, “Azerbaijani Teacher Fired After Call for Peace with Armenia”, 12.02.2018.

ների մոտ պետք է սեփական օրինակով կրթի հոգատարության զգացողություն և հարգանք Ադրբեջանի Հանրապետության անկախության, Սահմանադրության և օրենքների, պետական խորհրդանիշերի, պատմության, մշակույթի, լեզվի, ադրբեջանական ազգի սովորույթների և ավանդույթների, ազգային և համամարդկային արժեքների, հասարակության և շրջապատող միջավայրի նկատմամբ[48]»: Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության 47-րդ հոդվածով ամրագրված է, որ յուրաքանչյուրին տրված է մտքի և խոսքի ազատություն[49]»:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ պետք է նշել, որ խախտվել են Ազիզովի և աշակերտների իրավունքները: Որպես դասավանդող՝ Ազիզովը, փորձել է սեփական օրինակով կամ համամարդկային արժեքներով, որոնք իրենցից ենթադրում են այլատյացության և ռասիստական մոտեցման բացառում, ցույց տալ երեխաներին, որ հայերը թշնամիներ չեն, և, որ խաղաղությունը հնարավոր է: Սակայն ադրբեջանցի ազգայնականները սահմանափակել են Ազիզովի իրավունքները՝ որպես դասավանդողի, իսկ ինչ վերաբերում է աշակերտներին, ապա ինչպես Ազիզովն է նշում՝ ադրբեջանցի ազգայանականները երեխաների առջև նվաստացրել են իրեն, այսինքն՝ այստեղ երեխաները պաշտ-

---

48 Закон Азербайджанской Республики “Об Образовании”, 2009, стр. 17.
49 http://www.azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution_r.pdf, “Конституция Азербайджанской Республики”, 12.02.2018.

պանված չեն եղել պատվի և արժանապատվության նվաստացման և մարդու իրավունքների խախտման իրավիճակներից, ինչպես նշված է Ադրբեջանի Հանրապետության «Կրթության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 32.3.11 կետում: Հավելենք, որ նման իրավիճակները ստիպում են երեխայի մոտ առաջացնել օտարամերժ՝ հայատյաց նկրտումներ, այսինքն՝ եթե դասավանդողը նման վերաբերմունքի է արժանանում, ապա դասավանդողը սխալ է և, որ չպետք է հետևել նրա օրինակին: Հավելենք, որ ազգայնականները զրկել կամ սահմանափակել են նաև Ազիզովի սահամանադրական իրավունքը:

«Ուշադրության» է արժանի նաև Ալիսախիբ Էռոգուլին, ով Ադրբեջանում ճանաչված գրող-հրապարակախոս է, երեխաների համար պատմվածքների և միջնակարգ դպրոցի դասագրքերի հեղինակ[50]: «Կվերադառնա՞ն արդյոք արագիլներն իրենց բույնը» պատմվածքում, որը նախատեսված է 7-րդ դասարանի աշակերտների համար, նա շարադրում է.

«Երկխոսություն ադրբեջանցի պապիկի և թոռան միջև.

- Հայերը վատն են, այնպես չէ՞, պապի՛կ:

Պապը վրդովված պատասխանում է.

- Տղա՛ս, հայերը մեր թշնամիներն են: Այդ անիծվածներն արդեն 5 տարի է ինչ թունավորել են մեր կյանքը, այն վերածել են թույնի:

---

[50] http://azerichild.info/avtory.html#parvana, “Алисахиб Эрогул, Авторы, (Исрафилзаде Алисахиб Гияс оглы)”, 12.02.2018.

Այն ժամանակ մենք նրանց ընդունել ենք որպես օգնականների, ծառաների: Մեծացել են նրանք մեր հացի մնացորդների հաշվին: Ինչպես երես առած շներն են հաչում իրենց տերերի վրա, այնպես էլ նրանք են վճարում սև ապերախտությամբ նրանց, ովքեր իրենց ձեռք են մեկնել, աջակցել դժվար ժամանակ[51]»:

Ուսումնասիրելով վերոնշյալը՝ պարզ է դառնում, որ առկա է ոչ միայն էժանագին հայատյացություն, այլև երեխաների իրավունքների խախտում: Ադրբեջանի Հանրապետության «Երեխաների մասին» օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, որը սահմանում է երեխայի՝ դաստիարակություն ստանալու իրավունքը՝ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի զարգանալու և դաստիարակություն ստանալու համամարդկային և ազգային արժեքներով՝ հիմնված մարդասիրական և բարոյական սկզբունքների վրա: Արգելվում է երեխաների շրջանակում բռնություն, դաժանություն, էրոտիկ և պոռնոգրաֆիկ նյութեր քարոզող ֆիլմերի, գրականության և այլ միջոցների տարածումն ու ցուցադրումը, որոնք առաջացնում են վնասակար ազդեցություն երեխաների հոգեբանության և բարոյական զարգացման վրա, այդ թվում՝ երեխաների ներգրավումը նմանատիպ նյութերի պատրաստմանը[52]»:

---

[51] http://azerichild.info/hatred-from-childhood-literature-22.html, “Литература (проза и поэзия)”, 12.02.2018.

[52] Закон Азербайджанской Республики “О правах ребенка”, 2008, стр. 3.

Վերը նշված «պատմվածքը», որն օգտագործվում է 7-րդ դասարանի երեխաներին կրթելու համար, ակնհայտորեն նպատակ ունի սերմանելու հայատյացություն դպրոցական երեխաների մոտ: Նշենք, որ այսպիսի բովանդակություն ունեցող «աշխատությունները» երեխաների մոտ ձևավորում են օտարի նկատմամբ վախ, որն էլ հիմք է հանդիսանում ոչ միայն այլատյացության ձևավորման, այլև այլատյացությունից ծնվող հանցագործությունների, ինչպիսին, օրինակ՝ Ռամիլ Սաֆարովի բարբարոսությունն էր:

Նշենք նաև, որ վերը նշված օրինակում առկա է Ադրբեջանի Սահմանադրության 47-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում: Այդ կետի համաձայն՝ չի թույլատրվում ռասայական, ազգային, կրոնական և սոցիալական անհամաձայնությունը և թշնամանքը խրախուսող ագիտացիան և քարոզչությունը[53]»:

Այսպիսով, փաստերը ցույց են տալիս, որ Ադրբեջանում առկա է հայատյացության մասշտաբային և բացահայտ քարոզ:

Առանձնակի ուշադրության է արժանի Էլիան Զեյնալը, ով երիասարդ գրող է, ճանաչված ռեպ երգիչ և 2 գրքի հեղինակ՝ «Ա» և «Եթե ես ունենայի 1 միլիոն դոլլար», 2008թ. սպորտի և երիտասարդության նախարարության կողմից ճանաչված «Տարվա Երիտասարդ», գրողների միության անդամ, Ազգային մրցանակի

[53] http://www.azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution_r.pdf, “Конституция Азербайджанской Республики”, 12.02.2018.

առաջին դափնեկիր, ՀՕՍՏ խմբի երգիչ[54]: Նա իր «Ա» գրքում պատմում է ոմն Չինգիզի մասին, ով ղարաբաղցի փախստական է, ում ծնողները զոհվել են Խոջալուի դեպքերի ժամանակ, և ով այդ ժամանակ 7 տարեկան էր ու գրեթե ոչինչ չի հիշում, վերածվում է արյունարբու հայատյացի: Ահա թե պատմվածքում ինչպիսի հայատյացություն քարոզող հատվածներ են տեղ գտել.

«Չինգիզն ասաց.

- Ընկերնե՛ր, մենք միշտ անհիշաչար ազգ ենք եղել: Մեր և թյուրքերի ամենամեծ սխալը եղել է մոռացկոտությունը: Մենք այդ հայերին պետք է անպայման կոտորենք: ...Հայերը միշտ ստոր են եղել: ...Իրենց պետք չէ հավատալ…

- Հայաստանը հարկավոր է ոչնչացնել՝ վերջինիս վրա ռումբ նետելով: ...Նրանք բոլորը ատում են մեզ[55]»: Հավելեմ, որ պատմվածքում այսքանով չեն ավարտվում հայերի հանդեպ հնչող ռասիստական, հայատյացության կոչերը և սպառնալիքները:

---

[54] http://azerichild.info/avtory.html#qaraqan, “Эльхан Зейналлы (Гараган)”, Авторы, 12.02.2018.

[55] http://azerichild.info/hatred-from-childhood-literature-23.html, “Литература (проза и поэзия)”, 12.02.2018.





Xocali
fociasi
XOCALI

Ուսումնասիրելով երեխաների մոտ հայատյացության սերմանման դեպքերը, հանդիպեցինք հետևյալին (ներկայացված են *AzeriChild.info*[56] կայքում տեղ գտած նկարներից մի քանիսը).

Փաստացի վերոնշյալը վկայում է այն մասին, որ Ադրբեջանում առկա են երեխաների իրավունքների բազմակի խախտումներ, մասնավորապես, խախտվել են Ադրբեջանի Հանրապետության «Երեխաների իրավունքների մասին» օրենքի 8-րդ և 14-րդ հոդվածները:

«**Հոդված 8. Երեխայի կյանքի և զարգացման իրավունքը.**

Յուրաքանչյուր երեխա ունի նորմալ պայմաններում կյանքի, ֆիզիկական, մտավոր և բարոյական զարգացման իրավունք: Պետությունն իր վրա է վերցնում անհրաժեշտ տնտեսական, սոցիալ-իրավական և այլ միջոցների իրականացման պատասխանատվությունը, բարենպաստ պայմաններ ապահովող առողջ և անվտանգ միջավայրի ստեղծումը[57]»:

«**Հոդված 14. Երեխայի խղճի, մտքի և խոսքի ազատության իրավունքը.**

Յուրաքանչյուր երեխա ունի խղճի, մտքի և խոսքի ազատության իրավունք:

---

56 http://azerichild.info/childrens-creativity-hatred-from-childhood-azerbaijan.html, “Детское творчество”, 12.02.2018.

57 Закон Азербайджанской Республики “О правах ребенка”, 2008, стр. 2.

Ծնողներն, այլ անձինք և պետական մարմինները պարտավոր են հարգել երեխայի խղճի, մտքի և խոսքի ազատության իրավունքը:

Արգելվում է երեխային ներգրավել կրոնական ծեսերի կատարմանը, որոնք թողնում են վնասակար ազդեցություն երեխայի առողջության վրա[58]»:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ պետք է փաստել, որ պատումում Չինգիզը հանդես է գալիս իր ընթերցողներին ուղղված կոչով, որ «մենք այդ հայերին պետք է անպայման կոտորենք», «Հայաստանը հարկավոր է ոչնչացնել՝ վերջինիս վրա ռումբ նետելով» և հայատյացությանը բնորոշ այլ հայտարարություններով՝ խախտելով երեխայի խղճի և մտքի ազատությունը, ինչպես նաև սահմանափակելով երեխայի մտավոր և բարոյական զարգացման իրավունքը: Սրա մասին են վկայում նաև վերը ցուցադրված նկարները, որոնցում պատկերված են դաժանության և բռնության բացահայտ իրավիճակներ: Մի բան պարզ է, որ երեխաներն այդ տարիքում ունակ չեն գիտակցելու, թե ինչ է իրենից ներկայացնում բազմակարծության գոյությունը, և փաստացի ստացվում է, որ երեխաներին ինչ մատուցվում է գրականության, պատումների և այլ եղանակներով, ազդում է երեխայի մտքի և խղճի վրա՝ տալով այնպիսի արդյունք, ինչպիսին պատկերված է նկարներում:

---

[58] Закон Азербайджанской Республики “О правах ребенка”, 2008, стр. 4:

Նկարներում առկա է, ըստ մեզ, երկու իրավիճակ՝

1. Մի դեպքում երեխաները ներկայացնում են իրենց զոհի կարգավիճակում, իսկ հայերին որպես բռնի, անխիղճ և բարոյական արժեքներից զուրկ մարդկանց:

2. Երեխաների նկարներից կարելի է եզրակացնել, որ վերջիններս, ընկնելով ազդեցության տակ, իրավիճակը ընկալում են վրեժխնդրության տեսանկյունից:

Այսպիսով, ելնելով վերը նշված մի շարք օրինակներից՝ կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի ներպետական իրավունքը կրում է ուղղակի ձևական բնույթ: Ցավալի փաստ է այն իրականությունը, որ շատ դեպքերում Ադրբեջանի հասարակության մեջ մարդկային արժեքները՝ որպես այդպիսին, գոյություն չունեն, նրանք միայն արտահայտված են ֆորմալ բնույթով՝ ամրագրված համապատասխան փաստաթղթային տարբերակով:

III ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ.

Ադրբեջանում հայատյացության տարածման 3-րդ ուղղության քննարկման շրջանակներում փորձել ենք անդրադառնալ տեղեկատվական քարոզչությանը, որն իրականացվում է զանգվածային լրատվության միջոցների, մասնավորապես հեռուստատեսային հաղորդումների, համացանցային կեղծ տեղեկույթի միջոցով, ստահոդ լուրերի տարածմամբ: Պետք է փաստել, որ ադրբեջանական լրատվությունը գնում է ամեն հնարքի՝ սու-

տը հնարավորինս գունեղ ներկայացնելու համար, ինչի մասին վկայում են ստորև բերված փաստերը:

Պետք է նշել, որ, եթե տպագիր լրատվամիջոցները տեղեկատվություն հաղորդելու համար օգտագործում են չոր իրողություններ կամ ապատեղեկատվություն տարածում տպագիր տեսքով, ապա հեռուստատեսության դեպքում օգտագործվում են այլ ազդող գործոններ, ինչպես օրինակ տեսողական, լսողական և զգայական: Ֆոտոլրագրող, արդի ժամանակների մեծագույն մտածողներից Էլվին Թոֆլերը գրում է, որ հեռուստատեսությունը, որպես հաղորդակցության նոր միջոց, ավելի բանավոր է և հուզական: Սակայն այն տարբերվում է նախկինում առկա գյուղական ոչ գրագետ բանավոր անմիջական հաղորդակցությունից[59]: «Լրատվամիջոցները և հատկապես հեռուստատեսությունը ոչ ֆորմալ կրթության, սոցիալականացման հիմնական ինստիտուտներից են, իսկ որոշ մասնագետների համոզմամբ՝ դրանցից *ամենազլխավորը*[60]»: Փաստորեն, ստացվում է, որ հեռուստատեսությունը և այն տեղեկատվական միջոցները, որոնք պարունակում են տեսողական, լսողական և զգայական տեղեկություն, կարող են հանգեցնել, թե՛ դրական և, թե՛ բացասական հետևանքների:

---

[59] Միրաքյան Վ., Ագրեսիվ հեռուստատեսության հետևանքները, Երևան, 2012, էջ 7:

[60] Кравченко А.И., Общая социология, Москва, 2002, стр. 178.

Լրատվամիջոցների ազդեցությամբ ագրեսիվ դրսևորումների առաջացման դեպքերը նկատել է ֆրանսիացի սոցիոլոգ Գաբրիել Թարդը (Tarde) դեռ 19-րդ դարի վերջում: Թարդը նշում է. «Խոշոր հանցագործության լայն լուսաբանումը առաջացնում է նմանատիպ հանցագործությունների կրկնություն ողջ աշխարհում[61]»: Իսկ ինչպես նշում է հոգեբան Ա. Բանդուրան՝ իր սոցալական ուսուցման տեսության մեջ. «Մենք ձեռք ենք բերում ագրեսիվ վարք ոչ միայն սեփական փորձի արդյունքում՝ տեսնելով, որ ագրեսիան կարող է դրական արդյունք ունենալ, այլև դիտելով, կրկնօրինակելով այլոց ագրեսիվ վարքը[62]»:

Ցավոք, արդի ժամանակները դեռևս աչքի են ընկնում ԶԼՄ-ների և ագրեսիվ ֆիլմերի քարոզով, որոնք հասարակության մեջ ծնում են այլատյացություն և վրեժխնդրության ցանկություն:

Անդրադառնալով Ադրբեջանում հայատյացության քարոզչության հիմնական ուղղություններին ու միջոցներին և դրանց օգտագործման հակաօրինականությանը՝ պետք է նշել, որ Ադրբեջանում հայատյացությունը հիմնականում հիմնվում է կեղծ տեղեկությունների վրա: Այդ հարցում իրենց առանձնակի տեղն են զբաղեցնում Ադրբեջանի ԶԼՄ-ները, որոնք, խախտելով ներպետական և միջազգային իրավունքը, գիտակցված տարածում

---

61 Берковиц Л., Агрессия. Причины, последсвия и контроль, Москва, 2001, стр. 242.

62 Майерс Д., Социология психология, Москва, 2009, стр. 456.

են ապատեղեկատվություն՝ մոլորության մեջ գցելով Ադրբեջանի քաղաքացիներին: Այդ երևույթը բավական մատչելի նկարագրված է «Ходжалу: пропаганда посредством трагедии» գրքում, որտեղ խոսվում է ադրբեջանական ԶԼՄ-ների կեղծ տեղեկատվության տարածման փաստերի, մասնավորապես նկարների տեսքով, որտեղ իբր պատկերված են Խոջալուում տեղի ունեցածի մասով փաստեր: Սակայն, այդ նկարները վերաբերում են 1978թ. դեպքերին, ալևիների արյունալի կոտորածներին, որոնք իրականացվել են թուրքական ծայրահեղական «Գորշ գայլեր» խմբավորման կողմից դեկտեմբերի 10-24-ը Մարաշ քաղաքում: Իսկ ադրբեջանական մեկ այլ կայքը, Խոջալուի «զոհ»-երին փորձել էր ներկայացնել ոչ ավելի և ոչ պակաս…Համասի զոհված գրոհայինների նկարը կայքում որպես «փաստ» տեղադրելով[63]:

Պետք է նշել, որ, համաձայն Ադրբեջանի քրեական օրենսգրքի 101.2, 147.1, 283.1 հոդվածների՝ ԶԼՄ-ներում տեղ գտած այլատյացության քարոզը, տարածումը, ինչպես նաև զրպարտությունը, այսինքն՝ գիտակցված կեղծ տեղեկության տարածումը ենթակա է քրեական պատասխանատվության: Սակայն, ինչպես ուսումնասիրություններն են ցույց տալիս, Ադրբեջանում ներպետական իրավունքի կիրառելիությունը բացակայում է: Դրա վառ ապացույցն

[63] Общественная организация “Против ксенофобии и насилия”, “Ходжалу: пропаганда посредством трагедии”, Ереван, 2011, стр.14-20.

այն է, որ վերը նշված I, II և III ուղղություններում առկա բազմաթիվ փաստերը, որոնք վկայում են Ադրբեջանում այլատյացության՝ հայատյացության մասին, չեն կրում իրավական հետևանք: Այսպես, Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված ագրեսիվ պատերազմ վարելու հանրային կոչերի համար: Ըստ այդ հոդվածի 2-րդ մասի՝ նույն արարքները, իրականացված պաշտոնատար անձի կողմից կամ զանգվածային լրատվական միջոցների օգտագործմամբ, պատժվում են 2-ից 5 տարի ազատազրկմամբ՝ զրկվելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից՝ մինչև 3 տարի ժամկետով կամ առանց դրա[64]: Նույն օրենսգրքի 147-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված զրպարտության համար: Ըստ այդ հոդվածի 1-ին մասի՝ զրպարտությունն, այսինքն՝ գիտակցված կեղծ տեղեկության տարածումը, մեկ այլ անձի պատիվն ու արժանապատվությունը վարկաբեկող կամ նրա հեղինակությանը հանրային ելույթներում խոչընդոտող, հասարակայնորեն հրատարակվող աշխատություններում, ԶԼՄ-ներով կամ զանգվածային տարածմամբ՝ տեղեկատվական ռեսուրսի՝ ինտերնետի միջոցով, պատժվում է 100-ից մինչև 500 մանաթ տուգանքով կամ հասարակական աշխատանքով՝ 240-ից մինչև 480 ժամ ժամկետով կամ ուղղիչ-կարգապահական աշխատանքով՝ մինչև 1 տարի ժամկետով

---

[64] “Уголовный кодекс” Азербайджанской Республики, 2013, стр. 50.

կամ 6 ամիս ազատազրկմամբ[65]»: Նշված օրենսգրքի 283-րդ հոդվածը վերաբերում է ազգային, ռասայական, սոցիոլոգիական կամ կրոնական ատելության կամ թշնամանքի հրահրմանը: Հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ այն գործողությունները, որոնք ուղղված են ազգային, ռասայական, սոցիալական կամ կրոնական ատելության և թշնամանքի հրահրմանը, ազգային արժանապատվության նվաստացմանը, ինչպես նաև գործողությունները, ուղղված քաղաքացու իրավունքների սահմանափակմանը կամ քաղաքացիների գերակայության հաստատմանը իրենց ազգային կամ ռասայական առանձնահատկության, սոցիալական պատկանելիության, կրոնական վերաբերմունքի հիման վրա, եթե այդ գործողությունները իրականացվել են հրապարակայնորեն կամ ԶԼՄ-ների օգտագործմամբ, պատժվում են 1000-ից մինչև 2000 մանաթ տուգանքով կամ ուղղիչ-կարգապահական աշխատանքով՝ մինչև 2 տարի ժամկետով կամ 2-ից 4 տարի ազատազրկմամբ[66]»:

---

65 “Уголовный кодекс” Азербайджанской Республики, 2013, стр. 73.

66 Նույն տեղում, էջ 157:

1.4 ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանում առկա հայատյացության քարոզի և հայաոչնչացման նկրտումների կապակցությամբ պետք է հավելել, որ այդ երկրում առկա են հայատյացության այնպիսի դրսևորումներ, որոնք աչքի են ընկնում թե՛ տեսակով և թե՛ յուրօրինակությամբ, իսկ երբեմն նաև հանցանքի կատարման առանձնակի դաժանությամբ: Խոսքը վերաբերում է, մասնավորապես հայ սպա Գուրգեն Մարգարյանի դաժան սպանությանը, Աքրամ Այլիսլիի նկատմամբ թշնամանքի դրսևորմանը, ինչպես նաև այն փաստերին, երբ հայերը, հանդիսանալով երրորդ պետության քաղաքացի, չեն կարողացել մուտք գործել Ադրբեջան: Նշենք, որ թվարկված օրինակների հիմքում ընկած են իրավական նորմերի կոպիտ խախտումներ, որոնք արտահայտվել են այլատյացության և խոշտանգման բացահայտ դրսևորումներով: Սակայն պետք է հավելել, որ Ադրբեջանում հայատյացության առանձին դրսևորումները վերը նշվածով չեն սահմանափակվում, ուստի առանձնացրել և իրավական վերլուծության ենք ենթարկել դրանցից մի քանիսը:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

2004թ. փետրվարի 19-ին Բուդապեշտում սպանվեց հայ սպա Գուրգեն Մարգարյանը: Սպանությունն իրականացնողը ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովն էր, որը նախապես ծրագրել էր հանցանքը և իրականացրել առանձնակի դաժանությամբ: Դեպքը տեղի էր ունեցել այդ ժամանակ Բուդապեշտում անցկացվող անգլերեն լեզվի վերապատրաստման դասընթացի ժամանակ, որն իրականացվում էր ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Այս ծրագրին Հայաստանից մասնակցում էր երկու հայ սպա՝ Հայկ Մակուչյանը և Գուրգեն Մարգարյանը:

Հարկ է նշել այն, որ Գուրգեն Մարգարյանի սպանությունը որակվեց առանձնակի դաժանությամբ սպանություն, քանի որ այն բացառապես տուժողի նկատմամբ դիտավորյալ դաժանության դրսևորմամբ հանցանք էր: Գուրգենը սպանվել էր քնած ժամանակ կացնի հարվածից, ապա գլխատվել էր, կրծքավանդակին և ոտքերին խորը վերքեր էին հասցվել: Այս դեպքի մասին Բուդապեշտի ոստիկանապետը ասել է. «Մենք կասկածում ենք, որ Ռամիլ Սաֆարովն անսովոր դաժանությամբ կատարել է սպանություն…: Մենք ասում ենք անսովոր դաժանություն, որովհետև իր (Գուրգեն Մարգարյանի), կրծքավանդակին դանա-

կով հասցված բազմակի վերքերից բացի, զոհի գլուխը ուղղակի առանձնացված էր մարմնից[67]»:

Դատավարության ժամանակ հարցաքննվեցին ամբաստանյալ Ռամիլ Սաֆարովը, Գուրգեն Մարգարյանի սենյակակից՝ Կուտի Բալաշը, հայ սպա՝ Հայկ Մակուչյանը և գործի համար էական նշանակություն ունեցող այլ անձինք:

Ստորև ներկայացված են հատվածներ Հայկ Մակուչյանի և Կուտի Բալաշի ցուցմունքներից, ինչպես նաև Ռամիլ Սաֆարովի հարցաքննություններից, որոնք վկայում են մարդասպան Ռամիլ Սաֆարովի մոտ հայատյացության աստիճանի մասին:

Վկա Հայկ Մակուչյանն իր ցուցմունքում նշել է, մասնավորապես. «Հանցագործության կատարման պահին՝ առավոտյան 05:00-ի սահմաններում, քնած է եղել իր սենյակում, երբ զարթնել է սենյակի դռան բռնակի ուժեղ ցնցումից, դռան հարվածի ձայնից և միաժամանակ ադրբեջանական ակցենտով ռուսերեն բղավոցներից. – Բացի՛ր, հայ, բացի՛ր, եկել ենք ձեր կոկորդները կտրելու: Աղմուկից քնից արթնացավ նաև նրա (Հայկ Մակուչյանի) սենյակակից Պաուլյուս Սաուլյուսը, ով չթողեց բացել դուռը:…[68]»:

---

[67] http://www.washingtonpost.com/wp-dyn/articles/A54979-2004Feb19.html, “Azerbajani Kills Armenian at Peace Program”, 12.02.2018.

[68] https://regnum.ru/news/1590178.html, “Появился текст приговора азербайджанского офицера Рамиля Сафарова на русском языке”, 12.02.2018.

Վկա Բալաշ Կուտին նշել է. «Դեպքի օրը՝ վաղ առավոտյան, քնից զարթնել է միացված լույսի և ինչ-որ բութ հարվածի ձայնի պատճառով: Անկողնու մեջ շրջվելուց հետո է միայն նկատել, որ մեղադրյալը կացինը ձեռքը կանգնած էր կողքի մահճակալի դիմաց և դրանում պառկած մարդուն հարվածներ էր հասցնում: Բղավել է, որ հանցագործը դադարեցնի պառկած մարդուն հարվածելը, բայց մեղադրյալը գլուխը շրջել է վկայի ուղղությամբ և ասել, որ իր հետ կապված նա հաշիվներ/խնդիրներ չունի, որից հետո շարունակել տուժողին կացնահարելը: Դրանից հետո մեղադրյալը ծխել է ծխախոտը, իսկ վկան դուրս գալով սենյակից՝ պատահածի մասին զեկուցել հերթապահ սպային, ով էլ իր հերթին ոստիկանություն է կանչել[69]»:

Ռամիլ Սաֆարովն իր հարցաքննության ժամանակ նշել է, որ հայերի հանդեպ իր հակակրանքն առաջացել է Ղարաբաղի պատերազմի ժամանակ, որի հետևանքով կորցրել է իր բարեկամների մի մասին…: Բուդապեշտում դասընթացների ժամանակ երկու հայի հանդեպ հակակրանքը ատելության վերաճեց՝ չնայած իր արարքը ծրագրել էր իրականացնել 2004թ փետրվարի 26-ին...: Ամբաստանյալը պատմեց, որ իր սենյակում կացինը սրելուց հետո, լուսաբացին, ժամը 05:00 սահմաններում, իր հետ վերցնելով սրված կացինը և դաշույնը, մտել է այն սենյակ, որ-

[69] https://regnum.ru/news/1590178.html, “Появился текст приговора азербайджанского офицера Рамиля Сафарова на русском языке”, 12.02.2018.

տեղ այդ ժամանակ քնած էր տուժող Գուրգեն Մարգարյանը: Լույսը վառելուց հետո, երբ այդ ժամանակ տուժողը փորձում էր քնից արթնանալ, կացնով հարվածել է ճակատի կենտրոնին, որից հետո ևս մի քանի հարված հասցրել պարանոցի մեջտեղի հատվածին և կրծքավանդակին: Ընդհանուր առմամբ հասցրել է 6-7 հարված, որոնք հասցվել են ոչ միայն գլխին, այլ նաև ձեռքին և ոտքին: Դրանից հետո նա փորձ է արել ներս մտնել այն սենյակ, որտեղ ապրում էր Հայկ Մակուչյանը, բայց դուռը փակ է եղել: Այնուհետև, նա փորձել է կոտրել դուռը, հասցնելով կացնի մի քանի հարվածներ, բայց նրան այդպես էլ չի հաջողվել այն բացել:

Հետագա հարցաքննությունների ընթացքում մարդասպանը հաստատել իր ցուցմունքները:

Դատական նիստի ժամանակ մեղադրյալը հիմնականում ընդունել իր մեղքը, սակայն, միաժամանակ հայտարարել, որ, գնելով կացինը, չի ցանկացել սպանել երկրորդ հայ սպային[70]:

Ռամիլ Սաֆարովի դատավարությունը տևել է 2 տարի և միայն 2006թ. ապրիլի 13-ին է Բուդապեշտի քաղաքային դատարանը հրապարակել Ռամիլ Սաֆարովի դատավճիռը՝ դատապարտելով ցմահ ազատազրկման, մասնավորապես նրան զրկելով ներում շնորհելու իրավունքի հայցումից մինչև 30 տարի

[70] https://regnum.ru/news/1590178.html, “Появился текст приговора азербайджанского офицера Рамиля Сафарова на русском языке”, 12.02.2018.

ժամկետով, այդ թվում պատժի 10 տարին լրանալուց հետո մեղադրյալին զրկել Հունգարիայի Հանրապետություն այցելելու իրավունքի իրացումից:

2012թ. օգոստոսի 31-ին, երբ արդեն շուրջ 8 տարի էր անցել Սաֆարովի բանտարկությունից՝ Հունգարիայի իշխանությունները վերջինիս արտահանձնեցին Ադրբեջանին, այն պայմանով, որ Սաֆարովը պատիժը շարունակի կրել Ադրբեջանում: Սակայն, պատիժը շարունակելու փոխարեն, Սաֆարովին՝ Ադրբեջան ժամանելուն պես Իլհամ Ալիևի կողմից ներում շնորհվեց: Ավելին, «Սեպտեմբերի 1-ին Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը Սաֆարովի ռազմական կոչումը լեյտենանտից բարձրացրեց մայորի կոչման: Պաշտպանության նախարարությունը Սաֆարովին նվիրեց բնակարան, ինչպես նաև պարգևատրեց շուրջ 8 տարվա աշխատավարձով[71]»:

Ռամիլ Սաֆարովի արտահանձնման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են երկու պետության միջև ձեռք բերված համաձայնությամբ, ինչպես նաև «Դատապարտված անձանց հանձնման» մասին կոնվենցիայով, որով սահմանված է, որ ընդունող պետությունը պետք է պատշաճ կատարի բոլոր միջազգային պարտավորությունները: Հիմք ընդունելով այդ

[71] https://www.rferl.org/a/armenia-protest-azerbaijani-killer-pardon-to-osce-minsk-group/24694817.html, “As Armenia Protests Killer's Pardon, Azerbaijan Promotes Him”, 17.02.2018.

հանգամանքն, ինչպես նաև այն, որ սույն կոնվենցիան (ընդունված 1983թ. մարտի 21-ին) Ադրբեջանում ուժի մեջ է մտել 2001թ. մայիսի 1-ին, և այն, որ Սաֆարովին ներում է շնորհել վկայում է այն մասին, որ կատարվել է միջազգային պարտավորության բացահայտ խախտում, մասնավորապես խախտվել է նշված կոնվենցիայի 3-րդ հոդվածի «բ» կետը: Համաձայն այդ կետի՝ դատապարտված անձը կարող է հանձնվել միայն, եթե դատավճիռը վերջնական է[72]»: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Բուդապեշտի քաղաքային դատարանն արդեն ուներ դատավճիռ Ռամիլ Սաֆարովի կողմից կատարված հանցանքի վերաբերյալ և չկար տվյալ ժամանակ որևէ բողոքարկման գործընթաց, այսինքն՝ դատարանի դատավճիռը վերջնական էր, կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանն անտեսել է Բուդապեշտի քաղաքային դատարանի վերջնական որոշումը՝ ներում շնորհելով մարդասպանին և ավելի ուշ վերջինիս արժանացնելով պարգևատրումների:

Ադրբեջանի իշխանությունների արարքից ոգևորվելով՝ հայատյացության՝ զավեշտի հասնող կոչերով հանդես եկան տաբեր անձինք և կառույցներ: Այսպես, Ադրբեջանի օմբուցմեն Էլմիրա Սուլեյմանովան հայտարարեց. «Ռ. Սաֆարովը պետք է դառնա ադրբեջանցի երիտասարդների հայրենասիրության օ-

[72] Convention on the “Transfer of Sentenced Persons”, 1983, pag. 2.

ինակ[73]»: Իսկ համաձայն մեկ այլ աղբյուրի. «Երիտասարդությունը խորը երախտագիտություն հայտնեց Գերագույն Գլխավոր հրամանատարին՝ գնահատելով Ռ. Սաֆարովին ներում շնորհելը որպես յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ հոգատարության և ուշադրության արդյունք[74]»:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանում հերոսացվելու, զինվորական կոչում կամ պարգևատրում ստանալու համար հարկավոր է, օրինակ՝ սպանել հայի: Այս սարսափելի իրականությունը, որը 21-րդ դարում տիրում է Ադրբեջանի հասարակությունում, ուղղակի ապացույց է այն բանի, որ Ադրբեջանը չի հրաժարվել հայաոչնչացման իր «պետական ծրագրից»:

Վերոգրյալը հիմք է տալիս նաև եզրակացնելու, որ Ադրբեջանի Սահմանադրությունը, որը սահմանում է իրավահավասարություն, մարդու իրավունքի պաշտպանության երաշխիքներ և այլն, ոչ այլ ինչ է, եթե ոչ թղթի վրա առկա և ընտրովի կիրառվող ձևական ակտ[75]:

---

[73] Адибекян А., Элибегова А., “Армянофобия в Азербайджане”, Ереван, 2013, стр 132.

[74] http://ru.salamnews.org/ru/news/read/162074/molodej-azerbaydana-virazila-blagodarnost-prezidentu-straninbspnbsp//, “Молодежь Азербайджана выразила благодарность президенту страны за помилование Рамиля Сафарова”, 17.02.2018.

[75] Ադրբեջանի Սահմանադրության 25-րդ I և III կետերի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև: Պետությունը երաշխավորում է յուրաքանչյուրի իրավունքի և ազատության հավասարությունը՝ անկախ

Զնական բնույթ է կրում նաև այդ երկրի քրեական օրենսգիրքը, որի 120-րդ հոդվածի 120.2.12-րդ կետը պատասխանատվություն է սահմանում դիտավորյալ սպանության համար՝ ազգային, ռասայական, կրոնական անհանդուրժողականության կամ թշնամանքի դրդապատճառներով: Այս իրավական ակտը ուղղակիորեն վերաբերում է Ռամիլ Սաֆարովի կողմից Գուրգեն Մարգարյանի սպանությանը և սահմանում պատիժ՝ 12-ից 15 տարի ժամկետով ազատազարկում կամ ցմահ ազատազրկում[76]:

Այսպիսով՝ ադրբեջանական իշխանությունները, Ռամիլ Սաֆարովին ներում շնորհելով, ոտնահարել են ոչ միայն միջպետական պայմանավորվածությունները, այլև ցեխ են նետել թե՛ միջազգային հանրության և թե՛ սեփական երկրի մայր օրենքի՝ Սահմանադրության վրա: Ալիևյան իշխանությունը, քաջ գիտակցելով, որ Սահմանադրությունը և դրանից բխող ներպետական իրավական ակտերն արգելում և խիստ դատապարտում են

ռասայից, ազգությունից, կրոնից, լեզվից, սեռից, ծագումից, նյութական դիրքից, ծառայողական դիրքից, համոզմունքներից, քաղաքական կուսակցությունների պատկանելությունից, արհմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների պատկանելությունից: Արգելվում է սահմանափակել մարդու և քաղաքացու ազատությունները և իրավունքները՝ելնելով ռասայական, ազգային, կրոնական, լեզվական պատկանելությունից, սեռական պատկանելիությունից, ծագումնաբանությունից, համոզմունքների, քաղաքական և սոցիալան պատկանելությունից / Конституция Азербайджанской Республики, 1995, стр. 6.

[76] “Уголовный кодекс” Азербайджанской Республики, 2013, стр. 58-59.

հանցանքը, հատկապես սպանությունն ազգային, ռասայական, կրոնական անհանդուրժողականության կամ թշնամանքի դրդապատճառներով, գիտակցաբար ամենաթողության են մատնել երկրի մայր օրենքը: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ Ադրբեջանի Սահմանադրությունը չի ծառայում իր նպատակին և կրում է ձևական բնույթ:

ԱՔՐԱՄ ԱՅԼԻՍԼԻԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ.

Հայատյացության դրսևորումներից հատկանշական է ադրբեջանական իշխանությունների կողմից իրենց երկրի քաղաքացի, բանաստեղծ, ազգային գրող, Ադրբեջանի վաստակավոր գործիչ, ազգային բարձրագույն «Իստիգլալ» և «Շոխրատ» շքանշանների կրող, թարգմանիչ Աքրամ Այլիսլիին հետապնդելու դեպքը[77]:

2012թ. Ադրբեջանում լույս տեսավ ադրբեջանցի բանաստեղծ, գրող Աքրամ Այլիսլիի «Քարե երազներ» (Каменные сны[78]) վեպը, որը հեղինակը նվիրել էր Ադրբեջանում և դրա կազմում գտվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում ժամանակին ապրող այն հայերին, որոնց մի մասը զոհ դարձավ Ադրբեջանի իշխանության կողմից սանձազերծած էթնիկ զտումների, մի մասը, չունենալով երաշխիք կյանքի և առողջության համար,

---

[77] http://akramaylisli.info/bio/, “Акрам Айлисли”, 17.02.2018.
[78] http://magazines.russ.ru/druzhba/2012/12/aa5-pr.html, “Каменные сны”, 17.02.2018.

ստիպված եղավ լքել Ադրբեջանը: Ահա այսպես է գրողը գրքում դիմում հայերին. «Նվիրում եմ իմ հայրենակիցների հիշատակին, ովքեր իրենցից հետո թողել են աննկարագրելի ցավ[79]»:

Վեպում գրողն անդրադարձ է կատարել Նախիջևանի 1919թ. և Բաքվի 1990թ. հայերի ջարդերին: Հանգամանալից նկարագրել է հայերի հանդեպ կիրառվող այն բիրտ և անմարդկային մեթոդներով հալածանքները, որոնք, մինչ օրս մնալով անպատիժ, այսինքն՝ առաջացնելով անպատժելիության մթնոլորտ, հող են նախապատրաստում Ադրբեջանի երիտասարդ սերնդի համար նման դեպքերի ծրագրման և իրականացման համար: Մեջբերենք գրքից մի հատված, որտեղ նկարագրվում են այն վայրագությունները, որոնց արժանացել են Ադրբեջանում և Նախիջևանում այն ժամանակ ապրող հայերը.

«Գլուխ Առաջին: Մոխրագույն տարօրինակ տեղ: Խոնավությունը հասնում էր մինչև ոսկորներ: …աշխարհում ոչինչ չկար, բացի արյան սև լճակներից: Գրետա Սարգիսովնան, ասես փոքրիկ կրիա, որը նոր էր դուրս գալիս ձվից, սողեսող դուրս եկավ սեփական արյան լճակից: Նրա մեռած և միևնույն ժամանակ կենդանի, վնասված մերկ մարմնի մաշկն այնքան տգեղ էր և

[79] http://magazines.russ.ru/druzhba/2012/12/aa5-pr.html, “Каменные сны”, 17.02.2018.

սարսափելի, որ հնարավոր է, որ երկրի արարման պահից ոչ ոք ականատես չէր եղել նման սարսափելի տեսարանի[80]»:

«Քարե Երազներ» (Каменные сны) վեպի ստեղծման նպատակը կայանում էր նրանում, որ, ինչպես հեղինակն է նշում. «Դեռ ամեն ինչ կորած չէ, որ նրանք հասկանան, որ մենք դեռ Լեռնային Ղարաբաղը համարում ենք մեր հայրենիքի մի մաս, և ղարաբաղցի հայերին մեր քաղաքացիներն ենք համարում: …մենք կարող ենք միասին ապրել մեկ երկրում: …մենք պատրաստ ենք ընդունել շատ բաներ, որոնցում նրանք մեզ մեղադրում են[81]»:

Բնականաբար պետք է փաստել, որ այս վեպը չէր կարող մեծ բողոքի ալիք չբարձացնել Ադրբեջանում. չէ՞ որ այն աշխատում է Ադրբեջանի իշխանության հակահայկական քարոզչական մեքենայի դեմ, չէ՞ որ սա ուղղակի հակապատկերն է այն ստերի, որոնք հրամցնում է Ադրբեջանի իշխանությունն իր հասարակությանը: Այլիսլիի վեպի վերաբերյալ շատ բացասական կարծիքներ հնչեցին, մասնավորապես խոսքը Ֆաիգ Շախբազլի՝ Կրթության և գիտության նախարարության դասագրքերի և տպարանի բաժնի վարիչի մասին է, ով հայտարարեց. «Դասագրքի գրման ժամանակ Աքրամ Այլիսլին եղել է ազգային գրող և ունե-

---

80 http://magazines.russ.ru/druzhba/2012/12/aa5-pr.html, “Каменные сны”, 17.02.2018.

81 http://bs-kavkaz.org/2013/02/kamennye-sny-ailisly-pokayanie-pered-geopoliticheskim-kollapsom/?utm_source=warfiles.ru, “«Каменные сны» Акрама Айлисли: покаяние перед геополитическим коллапсом?”, 17.02.2018.

ցել է կոչում: Մենք այն ժամանակ չգիտեինք, որ իր հաջորդ քայլերը կրթական գործընթացում խնդիրներ կառաջացնեն: Գրքի վերահրատարակման դեպքում Աքրամ Այլիսլիի ստեղծագործությունները կհանվեն: Ես կարծում եմ, որ նրա ստեղծագործությունները դասագրքերում թողնելը ստորություն կլինի: Ադրբեջանական դասագրքերում տեղ չկա Աքրամ Այլիսլիի համար[82]»:

Աքրամ Այլիսլիի դեմ ալիքը լի էր սպառնալիքներով և նվաստացուցիչ վերաբերմունքով, մասնավորապես Այլիսլիի կյանքի և առողջության հանդեպ սպառնալիքներով: Այսպես, «Ժամանակակից Մուսավաթ» կուսակցության նախագահ Հաֆիզ Հաջիևը՝ կոչ արեց իր կուսակցության երիտասարդ թևին, կտրել Այլիսլիի ականջը՝ որպես պարգև նրանց խոստանալով 10.000 մանաթ: Ավելի ուշ վերջինս հայտարարեց. «Մեզ պետք չէ Ալիլիսլիի ականջը, ինքն արդեն իսկ Աստծո կողմից պատժված մարդ է[83]»: Այնուամենայնիվ կարծում ենք, որ ադրբեջանական իշխանությունները, բավական լավ գիտակցելով, որ Աքրամ Այլիսլիի հետ կապված զարգացումներին հետևում է միջազգային հանրությունը, և, եթե նրա հետ որևէ բան պատահի այս հայտարարութ-

---

82 Адибекян А., Элибегова А., “Армянофобия в Азербайджане”, Ереван, 2013, стр. 136.

83 http://www.1news.az/news/hafiz-gadzhiev-peredumal-otrezat-uho-akrama-aylisli, “Хафиз Гаджиев передумал отрезать ухо Акрама Айлисли”, 20.02.2018.

յան համատեքստում, ապա իշխանությունները բավական բարդ իրավիճակի մեջ կհայտնվեն, այդ իսկ պատճառով, բացահայտ սպառնալիքներին ընթացք չտալու նպատակով որոշակի քայլեր արվեցին:

Վերլուծելով վերը նշվածը՝ տեղին է մեջբերել Ադրբեջանի Սահմանադրության 51-րդ հոդվածը, որը նվիրված է ստեղծագործական ազատության իրավունքին.

«**Հոդված 51. Ստեղծագործական ազատությունը.** I. Յուրաքանչյուրն օժտված է ստեղծագործական ազատությամբ: II. Պետությունը երաշխավորում է գրական և գեղարվեստական, գիտատեխնիկական և այլ տեսակի ստեղծագործական ազատությունը[84]»:

Ի լրումն Այլիսլիի հալածանքների պատմությանը՝ հավելենք, որ 2012թ. փետրվարի 1-ին Ադրբեջանի Միլլի-մեջլիսի հերթական գարնանային նստաշրջանի ժամանակ իշխող «Յենի Ադրբեջան» կուսակցության քարտուղար, պատգամավոր Ալի Ահմեդովը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով. «Եթե թշնամին գովաբանում է քեզ, ուրեմն դու մեղավոր ես քո ազգի առաջ[85]»:

---

[84] “Конституция” Азербайджанской Республики, 1995, стр. 12.

[85] http://bs-kavkaz.org/2013/02/kamennye-sny-ailisly-pokayanie-pered-geopoliticheskim-kollapsom/?utm_source=warfiles.ru, “«Каменные сны» Акрама Айлисли: покаяние перед геополитическим коллапсом?”, 20.02.2018.

Այսպիսով, Աքրամ Այլիսլիի նկատմամբ ճնշումները ցույց են տալիս, որ ճշմարտության բարձրաձայնումն Ադրբեջանում համարվում է մեղսագործություն ազգի և երկրի դեմ: Դժվար չէ պատկերացնել, թե ճշմարտությունից խուսափելով՝ ինչպիսի ստի և հորինված պատմությունների մեջ է թաթախված Ադրբեջանի հասարակությունը: Կարծում ենք, որ նման մոտեցումը հնարավորություն է տալիս Ադրբեջանի իշխանություններին հայատյացության արդյունավետ քարոզչություն ծավալել և նպաստում սեփական հասարակության ենթագիտակցության մեջ հայերին որպես թշնամու կերպարի և ոչնչացման օբյեկտի ձևավորմանը: Այդ ամենն արվում է ոչ միայն պոպուլիզմի, այլև, գուցե առաջին հերթին սեփական հասարակությանը ներքին խնդիրներից դեպի արտաքին թշնամի շեղելու նպատակով:

Ալիլսլիի նկատմամբ թշնամական վերաբերմունք դրսևորվեց նաև 2013թ. մարտի 13-ին, երբ Ադրբեջանի գրողների միությունում տեղի ունեցավ ընդհարում. «Քննադատների և գրողների միջև տեղի ունեցած հանդիպման ժամանակ, քննադատներից Ասադ Ջահանգիրն աջակցեց Աքրամ Այլիսլիին, ինչը գրող Էլչինու Հուսեյնբեկլուին դուր չեկավ: Վերջիններիս միջև սկսվեց վիճաբանություն, որը վերաճեց միջանձնային վիրավորանքների[86]»: Հատկանշական է այն հանգամանքը, որ, չնայած թշնամա-

[86] https://www.ekhokavkaza.com/a/24927111.html, “В Союзе писателей Азербайджана произошел инцидент из-за романа Айлисли”, 20.02.2018.

կան մթնոլորտին և սպառնալիքներին, Այլիսլին չլքեց Ադրբեջանը և շարունակեց իր պայքարը:

Չնայած Այլիսլիի բոլոր ջանքերին՝ Ադրբեջանում արդարությունն աշխատում է ճիշտ հակառակ ուղղությամբ և կրում է կամայական բնույթ: «2013թ. թողարկվեց Զաֆար Ալիևայի, այսպես կոչված, պատասխան պատմվածքը՝ «Каменные Истины[87]», որտեղ հեղինակը Աքրամ Այլիսլիի նկարագրությունները վերարտադրեց հայելապես հակառակ ձևով: Բովանդակությունը կառուցված է այն տեսության վրա, որ Այլիսլին հայ է՝ դաշնակի որդի[88]»:

Ա. Այլիսլիի ազատությունները սահմանափակելու տարբեր փորձեր ձեռնարկվեցին նաև հաջորդ տարիներին, սակայն առավել հատկանշական է 2016թ. ապիլին Այլիսլիի նկատմամբ քրեական գործի հարուցումը:

Վզգլյադ.ազ կայքի՝ «Աքրամ Այլիսլու հանդեպ քրեական գործ է հարուցվել» հոդվածում նշվում էր. «Աքրամ Այլիսլիից Ադրբեջանը չլքելու վերաբերյալ ստորագրություն է վերցրել: Փաստաբանը հայտնեց, որ քննությունն այս պահին շարունակվում է: Աքրամ Այլիսլիի հանդեպ հարուցվել է քրեական գործ խուլիգանության հատկանիշներով: Նա մեղադրվում է 2016թ.

---

87 http://vesti.az/news/161034, “Каменные Истины”, 20.02.2018.

88 Адибекян А., Элибегова А., “Армянофобия в Азербайджане”, Ереван, 2013, стр. 136.

մարտի 30-ին Հեյդար Ալիևի միջազգային օդանավակայանում սահմանապահ ծառայության աշխատակից Նիխալա Սեյդովային հարվածելու մեջ[89]»:

Չնայած հնչող մեղադրանքներին՝ Այլիսլին հանդես եկավ հայտարարությամբ, մասնավորապես նշելով, որ իրեն ներկայացված մեղադրանքները՝ ոստիկանության սպայի վրա հարձակման վերաբերյալ, ծիծաղելի են, իր դեմ հարուցված քրեական գործը շինծու է, և օդանավակայանում իր ձերբակալությունն Ադրբեջանի իշխանությունների կողմից փորձ է՝ ձախողելու գրականության միջազգային փառատոնին իր մասնակցությունը[90]:

Այսպիսով, վերոնշյալը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ Ադրբեջանը պատրաստ է, ոտնահարելով սեփական ներպետական իրավունքը, անտեսելով սեփական ժողովրդի խաղաղ և բարեկեցիկ ապագայի կառուցման ձգտումները, միտումնավոր ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք տարածաշրջանում առաջացնում կամ զարգացնում են պատերազմական գործողություններ սկսելու հավանականություն: Սակայն, հաշվի առնելով

---

89 vzglyad.az/news/58969/В-отношении-Акрама-Айлисли-возбуждено-уголовное-дело.html, “В отношении Акрама Айлисли возбуждено уголовное дело.” 20.02.2018.

90 http://novostink.ru/azerbaijan/172770-opisavshiy-pogromy-armyan-v-azerbaydzhane-pisatel-akram-aylisli-moy-arest-mozhet-stat-smertnym-prigovorom.html?fb_comment_id=1074864979287-777_1075090362598572, “Описавший погромы армян в Азербайджане писатель Акрам Айлисли: Мой арест может стать смертным приговором”, 20.02.2018.

այն հանգամանքը, որ Ադրբեջանում բացակայում է իրական իրավահավասարությունը, իսկ մարդասիրության և բարոյականության արժեքներն առավելապես ձևական բնույթ են կրում, պետք է փաստել, որ հայատյացության դրսևորումներն այդ երկրում շարունակական բնույթ են կրում:

Փորձենք առանձնացնել նաև այնպիսի դեպքերը, որոնցից տուժել են այն հայերը, ովքեր, հանդիսանալով երրորդ պետության քաղաքացի, կրելով հայի ազգանուն, չեն կարողացել մուտք գործել Ադրբեջան:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է «2011թ. հոկտեմբերին «Դոմոդեդովո» օդանավակայանի «Ադրբեջանական ավիաուղիներ»-ի ներկայացուցիչների կողմից Մոսկվա-Բաքու չվերթով Ադրբեջանի Հանրապետություն «ԼԱԴԱ» մեքենաների ներմուծման նպատակով Բաքու մեկնող պատվիրակության անդամներից «Ավտովազ» ընկերության ներակայացուցիչ, ՌԴ քաղաքացի Սերգեյ Գյուրջյանին և նրա գործընկեր Իսրայելի քաղաքացի, «ԼԱԴԱ Ինթերնեյշնլ Լիմիթիդ» ընկերության ներկայացուցիչ Շուիմահեր Դիմիտրիայի մեկնումն արգելելու մասին[91]: Համաձայն «Կոմերսանտ» թերթի՝ «Ազգանունը ճանաչվել է ոչ թռիչքային» հոդվածի՝ «Նրան (Սերգեյ Գյուրջյանին) մերժել է օդանավակայանի աշխատակցուհին, իսկ ավելի ուշ «Ադրբե-

[91] https://vz.ru/society/2011/10/29/534474.print.html, “Отчеством не вышел”, 22.02.2018.

ջանական ավիաուղիներ»-ը պարզաբանել են, որ ղեկավարության կողմից կա ցուցում՝ թռիչքի չգրանցել հայկական ազգանուն ունեցող ուղևորներին[92]»: Նման դրսևորումները շարունակվել են նաև հետագայում: Ինչպես վկայակոչում է Lenta.ru կայքը՝ «Ռուս լրագրողը հայկական ազգանունով արտաքսվել է Բաքվից» հոդվածում, Աննա Սահակյանը չի կարողացել մուտք գործել Բաքու: Միջադեպի մասին կայքը փաստում է հետևյալը. «Ինչպես պատմել է Սահակյանը, վերջինս Մոսկվայից Ադրբեջանի մայրաքաղաք է մեկնել 2013թ. օգոստոսի 12-ին: …Նույն օրվա երեկոյան լրագրողը հայտնել է, որ իրեն փաստացի «արտաքսել են բավական նուրբ ձևով»: Սահակյանի խոսքերով, Բաքվի օդանավակայանի Մաքսային բաժնի պետը «բարեկիրթ ձևով թեյ առաջարկելով, այդպես էլ թույլ չտվեց հատել սահմանը և առաջարկեց փոխել ազգանունս և նոր վերադառնալ[93]»»: Նման դրսևորումները շարունակում են անպատիժ մնալ: Լինում են անգամ զավեշտի հասնող դեպքեր: Օրինակ՝ ծնողները այլազգի են և չունեն հայկական ծագում, սակայն երեխայի ազգանունը հայկականին նման է, որի պատճառով երեխային չի թույլատրվել մուտք գործել Ադրբեջան: Նման դեպք է գրանցվել 2016թ.:

---

92 https://www.kommersant.ru/doc/1807171, “Фамилию признали нелетной”, 22.02.2018.

93 https://lenta.ru/news/2013/08/14/baku/, “Российскую журналистку с армянской фамилией депортировали из Баку”, 22.02.2018.

Համաձայն «ՊանԱրմենիան» (PanARMENIAN) կայքի «Հայկական ազգանունով 8-ամյա երեխայի մուտքն Ադրբեջան արգելել են» հոդվածի՝ Բաքվի Հեյդար Ալիևի անվան օդանավակայանում աշխատակիցները թույլ չեն տվել 8-ամյա երեխային մուտք գործել Ադրբեջան՝ հայկական ազգանուն ունենալու պատճառով: Երեխայի մայրը դեպքի առիթով նշել է. «Հայրը ռուս է, մայրը՝ ռուս, իսկ երեխայի ազգանունը հայկական է: Բոլոր փաստաթղթերը, որոնք հաստատում են, որ ծնողները ՌԴ քաղաքացիներ են, առկա են: Բայց հայերն Ադրբեջանի թշնամիներն են, ու երեխան հավանաբար ևս: 8 տարեկան երեխան[94]»:

Հիմք ընդունելով վերոնշյալ դեպքերը և ուսումնասիրելով Ադրբեջանի ներպետական իրավունքը մասնավորապես Ադրբեջանի Հանրապետության «Սահմանի մասին» օրենքը[95], ինչպես նաև «Երկիր մուտք գործելու և երկրից դուրս գալու մասին» օրենքը[96], պարզ է դառնում, որ նշված օրենքներում չկան այնպիսի դրույթներ, որոնք հիմք են տալիս սահմանափակելու հայկական ազգանուն ունեցող անձանց Ադրբեջան մուտք գործելու ի-

---

94 http://www.panarmenian.net/arm/news/213416/, «Հայկական ազգանունով 8-ամյա երեխայի մուտքն Ադրբեջան արգելել են», 22.02.2018.

95 http://www.carim-east.eu/media/legal%20module/natfr/AZ_2.2%20Law%20of%20AR%20-on%20state%20border_RU.pdf

96 http://mia.gov.az/index.php?/ru/content/29408/, “Закон Азербайджанской Республики о выезде из страны, въезде в страну и паспортах”, 22.02.2018.

ռավունքը: Դա թույլ է տալիս եզրակացնել, որ նշված երևույթներն ադրբեջանական օրենքների կոպիտ խախտումներ են:

Չպետք է մոռանալ նաև Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության կողմից կազմված՝ «Օտարերկրյա քաղաքացիների անօրինական մուտքը Ադրբեջանի Հանրապետության օկուպացրած տարածքներ» ցուցակի մասին, որը 2013թ. դրությամբ ներառում էր 335 մարդու տվյալ[97], իսկ ներկայումս՝ 707[98]: Այդ անձանց, այսպես ասած, «սև ցուցակ»-ում հայտնվելը հիմնավորվում է հետևյալով՝

- Արցախի Հանրապետություն այցելությամբ,
- Հայաստանի Հանրապետություն այցելությամբ,
- Արցախի Հանրապետության խորհրդարանական, նախագահական ընտրություններին որպես դիտորդ կամ այլ կարգավիճակով մասնակցությամբ,
- Արցախի Հանրապետություն որպես զբոսաշրջիկ այցելությամբ,
- Այլ պատճառներով:

Ամփոփելով վերոնշյալը՝ փաստենք այն, որ Ադրբեջանում առկա այլատյացության հատկանիշները կրում են միայն ուղ-

---

97 Адибекян А., Элибегова А., “Армянофобия в Азербайджане”, Ереван, 2013, стр. 67.

98 http://mfa.gov.az/folder/media/Updated%2028.02.2018.pdf, “List of foreign citizens illegally visited occupied territories of the Republic of Azerbaijan”, 22.02.2018.

ղորդված բնույթ, այսինքն՝ դրանք ուղղված են հայերի հանդեպ թշնամանքի և մերժողական մթնոլորտ ստեղծելուն՝ այդ թվում շրջանցելով թե՛ ներպետական իրավունքը և թե՛ Ադրբեջանի կողմից միջազգայնորեն ստանձնած պարտավորությունները: Ավելին, Ադրբեջանը մշակում է հայատյացության նոր ճանապարհներ, խոսքը «սև ցուցակ»-ի մասին է, որը հնարավորություն է տալիս ճնշում գործադրել և ստիպել օտարերկրյա քաղաքացիներին հրաժարվել Արցախի կամ Հայաստանի Հանրապետություն այցելելու իրենց ցանկությունից:

ԳԼՈՒԽ 2. ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՈՒՄԸ

2.1 ԱՅԼԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Այլատյացության համար պատասխանատվություն նախատեսող միջազգային քրեաիրավական նորմերի աղբյուրները միջազգային-իրավական հիմնարար փաստաթղթերն են, որոնց դերը միջազգային իրավական ոլորտում անփոխարինելի է:

Այդ փաստաթղթերի միջոցով արտահայտվում և ամրագրվում են միջազգային քրեաիրավական և այլ բնագավառների նորմերը: Միջազգային իրավունքի աղբյուրներն ամրագրված են՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի ստատուտում՝ միջազգային պայմանագրում, որոնց մասնակիցն են դարձել աշխարհի գրեթե բոլոր պետությունները: ՄԱԿ-ի Միջազգային դատարանի ստատուտի 38-րդ հոդվածում ասվում է, որ դատարանն իրեն հանձնված վեճերը լուծելիս կիրառում է.

ա) միջազգային պայմանագրերը,

բ) միջազգային սովորույթները,

գ) քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները,

դ) դատական վճիռները և հանրային իրավունքի հարցերով առավել որակյալ մասնագետների դոկտրինները՝ որպես օժանդակ միջոցներ[99]:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում միջազգային իրավունքի աղբյուրներ կարող են համարվել միջազգային կազմակերպությունների և կոնֆերանսների որոշումները և բանաձևերը, սակայն հիմնական աղբյուրներ են համարվում միջազգային պայմանագրերը և միջազգային իրավական սովորույթները:

Միջազգային իրավունքի աղբյուրներից է միջազգային պայմանագիրը, որը կայացած ակնհայտ համաձայնությունն է միջազգային իրավունքի սուբյեկտների միջև՝ նրանց փոխադարձ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Որպես միջազգային իրավունքի աղբյուր դիտվող միջազգային սովորույթը, միջազգային շփման պրակտիկայում տարերայնորեն ծագող միջազգային իրավունքի նորմերի գոյության ձև է, որը գրավոր չէ[100]:

Ինչ վերաբերում է դատական վճիռների և հանրային իրավունքի հարցերով առավել որակյալ մասնագետների դոկտրիններին՝ հարկ է նշել, որ դրանք կարևոր դեր են խաղում որպես օժանդակ միջոց իրավական նորմերը սահմանելու համար: Դա-

---

99 Վ. Քոչարյան, Միջազգային իրավունք, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ, 2002, Երևան, էջ 2:

100 Նույն տեղում, էջ 24:

տական որոշումներն այն տարածված միջոցներից են, որոնք թույլ են տալիս բացահայտել միջազգային իրավունքի սովորութային նորմերի գոյությունը անկախ նրանից՝ դրանք ընդունվել են միջազգային, թե ներպետական դատական մարմինների կողմից: Մասնագետների դոկտրինները զգալի դեր են խաղում միջազգային իրավունքի աղբյուրները մեկնաբանելիս: Դրանք չեն կարող իրավական պարտադիր ուժ ունենալ, մինչև որ պետությունները այդ հարցում համաձայնության չգան, և այդ կանոնները միջազգային ճանաչում չստանան:

Միջազգային կազմակերպությունների և կոնֆերանսների որոշումները և բանաձևերը, այդ կազմակերպությունների հիմնադիր փաստաթղթերի համաձայն՝ ունեն պարտադիր բնույթ: Դրանք պարունակում են բազմակի կիրառման համար նախատեսված կանոններ, որոնք միջազգային իրավական նորմատիվ ակտերն են:

Այսպիսով՝ հաշվի առնելով, որ միջազգային իրավունքի աղբյուրները իրականացնում են ամենակարևոր դերերից մեկը, թե՛ միջազգային անվտանգության և, թե՛ համամարդկային արժեքների պահպանման, այդ թվում՝ այլատյացության կանխման ուղղությամբ, շարունակում են հիմք հանդիսանալ աշխարհում իրավունքի կիրառման և դրա գերակայության ապահովման հարցում:

Միջազգային պրակտիկայում միջազգային իրավունքի աղբյուրներն ունեն տարբեր նպատակային նշանակություն՝ քրեականացնող, արգելող, կանխարգելող և այլն: Դրանք ընդունվում են միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ՄԱԿ-ի, Եվրոպական Միության, Եվրոպական Հանձնաժողովի, Եվրոպայի Խորհրդի, ԵԱՀԿ-ի և այլ կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային այլ սուբյեկտների՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, Արդարադատության միջազգային դատարանի և այլ կառույցների շրջանակներում:

Միջազգային իրավունքի թվարկված աղբյուրներից յուրաքանչյուրն ունցել և շարունակում է կարևոր դեր ունենալ աշխարհում զարգացող վտանգների դեմ արդյունավետ պայքարի հարցում: Գոյություն ունեն տարբեր միջազգային փաստաթղթեր՝ որոշումներ, բանաձևեր, կոնվենցիաներ, զեկույցներ և այլն, որոնց ստեղծումը նպատակ է ունեցել կանխել, կանխարգելել և դատապարտել միջազգային հարաբերություններում մեծ թափով զարգացող վտանգները, մասնավորապես այլատյացությունը:

Չնայած հակազդեցության առկա մեխանիզմներին՝ այլատյացությունը շարունակում է մեծ թափով զարգանալ և որպես չարիք պետությունների միջև առաջացնել անդառնալի հետևանքներ, ինչպես օրինակ՝ Ադրբեջանում օրեցօր զարգացող հայատյացությունը, որը, լայն աջակցություն ստանալով պետությունից, ծրագրվում և իրականացվում է իշխանամետ կա-

ռույցների և հաստատությունների կողմից կամ ուղղակիորեն պետական մակարդակով:

Այլատյացության դեմ պայքարում կարևոր տեղ է զբաղեցնում Եվրոպական Միությունը, որի կողմից ընդունվել են հետևյալ փաստաթղթերը՝

- «Ռասիզմի և այլատյացության դեմ պայքարելու համախմբված գործողությունը», 1996թ., Բրյուսել[101],
- Խորհրդի շրջանակում ընդունված որոշումը «Ռասիզմի և այլատյացության դրսևորումների և որոշ այլ ձևերի դեմ պայքարը քրեական իրավունքի միջոցով», 2008թ. նոյեմբերի 28, Բրյուսել[102],
- Եվրոպական Միության Խորհրդի շրջանակում ընդունված որոշումը «Ռասիզմի և այլատյացության դրսևորումների և որոշ այլ ձևերի դեմ պայքարը քրեական իրավունքի միջոցով», 2014 հուլիսի 15, Բրյուսել[103]:

Պետք է փաստել նաև, որ միջազգային հանրությունը մեծ ուշադրություն է դարձնում մարդու իրավունքների պաշտպանությանը: Այդ իսկ պատճառով, II-րդ համաշխարհային պատերազմից հետո Միավորված ազգերի կազմակերպությունը շարունակում է

---

101 “Joint action to combat racism and xenophobia”, July 15 of 1996, Brussels.

102 “Council framework decision on combating certain forms and expressions of racism and xenophobia by means of criminal law”, November 28 of 2008, Brussels.

103 “Framework decision on combating certain forms and expressions of racism and xenophobia by means of criminal law”, July 15 of 2008, Brussels.

մեծ աշխատանք կատարել մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ, մասնավորապես խոսքն այլատյացության դեմ ընդունած մի շարք փաստաթղթերի մասին է՝

- Բանաձև, ընդունված Գլխավոր Ասամբլեայի կողմից «Միասին ընդդեմ ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և հարակից այլ անհանդուրժողականությունների», 2011թ., Նյու Յորք[104],
- «Համաշխարհային կոնֆերանս ընդդեմ ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և հարակից այլ անհանդուրժողականությունների», 2001, Դուրբան[105],
- «Ռասայական խտրականության բոլոր տեսակների վերացման մասին հռչակագիր», 2001թ. օգոստոսի 31- սեպտեմբերի 8, Դուրբան[106],
- «Ռասայական խտրականության բոլոր տեսակների վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագիրը», 1965թ., Նյու Յորք[107]:

Միջազգային կառույցներից ոչ պակաս կարևոր տեղ է զբաղեցրել նաև Եվրոպական հանձնաժողովը, որը, մեծ ներդրում ունենա-

---

104 Резолюция, принятая Генеральной Ассамблеей, “Вместе против расизма, расовой дискриминации, ксенофобии и связанной с ними нетерпимости”, 22 сентября 2011 года, Нью-Йорк.

105 http://www.un.org/WCAR/durban.pdf, “World Conference against Racism, Racial Discrimination, Xenophobia and Related Intolerance”, 01.03.2018.

106 http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/2002decl.shtml, “Декларация о ликвидации всех форм расовой дискриминации”, 01.03.2018.

107 Декларация Организации Объединенных Наций “О ликвидации всех форм расовой дискриминации”, 1963, Нью-Йорк.

լով մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, շարունակում է իր պայքարը անմարդկային դրսևորումների դեմ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Եվրոպական հանձնաժողովը պարբերաբար իրականացնում է մոնիթորինգային արշավներ տարբեր պետություններում, որոնց հիման վրա կազմվում են զեկույցներ, այդ թվում՝ Ադրբեջանում հայատյացության դրսևորումների վերաբերյալ: Չնայած այն հանգամանքին, որ այդ զեկույցները չեն կարող միջազգային իրավունքի աղբյուր հանդիսանալ, այնուամենայնիվ, հարկ է համառոտ անդրադառնալ դրանց՝ հիմք ընդունելով այն, որ վերջիններս իրենց բովանդակությամբ և մոտեցումով կրում են անկողմնակալ բնույթ: Այդ զեկույցներում ներկայացված են Ադրբեջանում հայերի նկատմամբ թշնամանքով, անհանդուրժողականությամբ և այլատյացությամբ արտահայտված գործողությունները, որոնք միջազգային հանրությանը հասանելի են դարձնում Ադբեջանում տեղի ունեցող անմարդկային դրսևորումները: Այդ զեկույցներն են՝

- «Եվրոպական հանձնաժողովն ընդդեմ ռասիզմի և անհանդուրժողականության». զեկույց Ադրբեջանի մասին (մոնիթորինգային հինգերորդ փուլ), 2016, Ստրասբուրգ[108], (նման զեկույցներ ներկայացվել են 2002, 2006 և 2011թթ.),

---

108 European Commission against Racism and Intolerance, “Report on Azerbaijan (fifth monitoring cycle)”, 2016, Strasbourg.

- Եվրոպական հանձնաժողովն ընդդեմ ռասիզմի և անհանդուրժողականության ընդհանուր ռազմավարության N10 հանձնարարական՝ «Պայքար ընդդեմ ռասիզմի և ռասայական խտրականության դպրոցում և դպրոցական կրթության միջոցով», 2006, Ստրասբուրգ[109],

- Եվրոպական հանձնաժողովն ընդդեմ ռասիզմի և անհանդուրժողականության ընդհանուր ռազմավարության N2 հանձնարարական՝ «Մասնագիտացված մարմինների պայքարը ազգային մակարդակով ընդդեմ ռասիզմի, այլատյացության, անտիսեմիտիզմի և անհանդուրժողականության», 1997, Ստրասբուրգ[110],

- Եվրոպական հանձնաժողովն ընդդեմ ռասիզմի և անհանդուրժողականության ընդհանուր ռազմավարության N1 հանձնարարական. «Պայքարն ընդդեմ ռասիզմի, այլատյացության, անտիսեմիտիզմի և անհանդուրժողականության», 1996, Ստրասբուրգ[111]:

---

109 European Commission against Racism and Intolerance General Policy Recommendation N2: “On combating racism and racial discrimination in and through school education”, 2006, Strasbourg.

110 European Commission against Racism and Intolerance General Policy Recommendation N2: “On specialized bodies to combating racism, xenophobia, anti-Semitism and Intolerance at national Level”, 1997, Strasbourg.

111 European Commission against Racism and Intolerance General Policy Recommendation N1: “On combating racism, xenophobia, anti-Semitism and Intolerance”, 1996, Strasbourg.

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ պետք է արձանագրել, որ միջազգային հանրության կողմից իրականացվում են համապատասխան միջոցառումներ՝ ուղղված համամարդկային արժեքների պահպանմանը և տարածմանը: Սակայն, չնայած միջազգային իրավունքի առկա մի շարք աղբյուրների, որոնց նպատակն է պայքարել ռասիզմի, այլատյացության, անտիսեմիտիզմի և այլ հարակից անհանդուրժողականությունների դեմ, այլատյացության դրսևորումները շարունակում են զարգանալ և պարարտ հող հանդիսանալ ռասիզմի և այլատյացության զարգացման համար:

Ամփոփելով՝ նշենք, որ Ադրբեջանը, անտեսելով միջազգային իրավունքի նորմերը և միջազգային հանրության կոչերը, շարունակում է հակահայկական քարոզչությունը՝ այլատյացության, ռասիզմի, թշնամանքի և անհանդուրժողականության այն նախագծի միջոցով, որ ծրագրվում և համակարգվում է իշխանությունների մակարդակով: Այս ամենը կրկին վկայում է այն մասին, որ Ադրբեջանում համամարդկային արժեքները չեն կարևորվում, այլ կրում են ձևական, դիպվածային բնույթ:

2. 2 ԱՅԼԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային իրավունքի աղբյուրները՝ կատարելով կարևորագույն առաքելություն, իրավական հիմքեր են ստեղծում խաղաղության և միջազգային անվտանգության, պետությունների միջև հավասարության ապահովման համար: Դրանք անփոխարինելի են, քանի որ ընդունվել են ի շահ բոլոր մարդկանց իրավունքների պաշտպանության:

Միջազգային իրավունքի աղբյուրները ներառում են մի շարք պարտավորություններ, որոնց կատարումը բխում է համամարդկային արժեքներից և նպաստում պետությունների միջև կայուն փոխհարաբերությունների զարգացմանը: Դրանք էական դերակատարություն ունեն պետությունների ներպետական իրավունքում դինամիկ փոփոխությունների իրականացման հարցում:

Անդրադառնալով այլատյացության համար պատասխանատվություն նախատեսող միջազգային քրեաիրավական նորմերի ընդհանուր բնութագրին և վերլուծությանը՝ տեղին է մեջբերել Եվրոպական Միության խորհրդի կողմից 1996թ. հուլիսի 15-ին ընդունված՝ «Ռասիզմի և այլատյացության դեմ պայքարելու հա-

մախմբված գործողություն[112]» անվամբ փաստաթուղթը: Վերջինս Եվրոպական Միությունում հիմնարար փաստաթուղթ է և իրավական հիմք՝ այլատյացության, ռասիստական և այլ դրսևորումների քրեականացման համար: Փաստաթղթի 1-ին բաժնում նշվում է, որ ԵՄ բոլոր անդամ պետությունները, ելնելով ռասիզմի և այլատյացության դեմ պայքարի մտադրությունից, համաձայն 2-րդ բաժնում տեղ գտած ընթացակարգի, պետք է ապահովեն արդյունավետ միջպետական դատական համակարգի համագործակցություն: Հատկանշական է այն հանգամանքը, որ հարկ եղած դեպքում, համագործակցության նպատակներից ելնելով, պետությունները պետք է այնպիսի քայլեր իրականացնեն, որ նման դեպքերը (խոսքը ռասիզմի և այլատյացության մասին է) կամ պատժվեն որպես քրեական հանցագործություն, կամ հետագայում համապատասխան դրույթների ընդունման միջոցով՝ նման դրսևորումների նկատմամբ կիրառվի կրկնակի հանցագործության սկզբունքը:

ԵՄ-ն քայլ է կատարել ոչ միայն ռասիստական կամ այլատյացությամբ արտահայտված դրսևորումների համար պատասխանատվությունը խստացնելու ուղղությամբ, այլև մշակել այդ դրսևորումները քրեականացնելու նպատակով կանխարգելող միջոցառումների ցանկ: Փաստաթղթում սահմանված ցանկը տեղ է գտել 1-ին բաժնի «ա»-ից «ե» ենթակետերում, օրինակ՝ նման կանխարգելող միջոցառումներից է «դ» ենթակետը՝ թռու-

[112] “Joint action to combat racism and xenophobia”, 1996, Brussels.

ցիկների, նկարների կամ ռասիստական և այլատյացության արտահայտություններ պարունակող նյութերի հրապարակային տարածումն արգելելը[113]:

«Ռասիզմի և այլատյացության դեմ պայքարելու համախմբված գործողություն» փաստաթուղթը, առանձնակի կարևորություն տալով ռասիստական կամ այլատյացությամբ արտահայտված դրսևորումների դեմ պայքարին, հետաքննության նոր ձևեր է առաջարկում ԵՄ անդամ պետություններին, որոնք, ամրագրված լինելով սույն փաստաթղթի Բ կետի «ա»-ից «դ» ենթակետերում, կառուցողական և ամբողջական նշանակություն են տալիս փաստաթղթին: Ենթակետերում առաջարկվում է պայքար մղել այլատյացությամբ արտահայտված դրսևորումների դեմ՝ առգրավելով այն բոլոր նկարները, պաստառները, թռուցիկները, որոնք իրենց մեջ պարունակում են անհանդուրժողականության դրսևորումներ: Առաջարկվում է նաև պայքարի այնպիսի արդյունավետ միջոց, ինչպիսին է անդամ պետությունների կողմից միմյանց առգրավված իրերի մասին տեղեկություններ տրամադրելը: Այս պայքարի ձևը նախ միտում ունի տեղեկացնելու, որ անհանդուրժողականության նման դրսևորում է տեղի ունեցել ԵՄ անդամ պետությունում, այնուհետև միջոցառումների ձեռնարկման խթան է հանդիսանում՝ անհանդուրժողականության դրսևորումները կանխարգելու համար:

---

113 “Joint action to combat racism and xenophobia”, 1996, Brussels, page 2.

ԵՄ-ի կողմից ընդունվել են նաև մի շարք կոնվենցիաներ, բանաձևեր, որոշումներ և այլ փաստաթղթեր ռասիզմի և այլատյացության դրսևորումների դեմ պայքարելու նպատակով: Դրանցից կարելի է առանձնացնել «Ռասիզիմի և այլատյացության դրսևորումների և որոշ այլ ձևերի դեմ պայքարը քրեական իրավունքի միջոցով[114]» որոշումը, որն ընդունվել է ԵՄ խորհրդի կողմից 2008թ. նոյեմբերի 28-ին, իսկ նույն թվականի դեկտեմբերի 8-ին՝ հրապարակվելով Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում, մտել է ուժի մեջ:

Վերոնշյալ որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռասիզմի և այլատյացության դրսևորումները համարվում են Եվրոպական Միության սկզբունքների՝ ժողովրդավարության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և օրենքի գերակայության, այդ թվում՝ այլ սկզբունքների կոպիտ խախտում, որոնց պահպանումը և կիրառումը բխում է ԵՄ-ի հիմնարար փաստաթղթից՝ դաշնագրից: Ավելին՝ փաստաթղթում կոչ է արվում անդամ պետություններին քրեականացնող նորմեր ընդունել ռասիզմի և այլատյացության դրսևորումների և որոշ այլ ձևերի դեմ պայքարելու համար, որոնց միջոցով համաչափ և արդյունավետ պատիժներ կնախատեսվեն նման դրսևորումների հանդեպ:

---

114 “Council framework decision on combating certain forms and expressions of racism and xenophobia by means of criminal law”, November 28 of 2008, Brussels.

«Ռասիզմի և այլատյացության դրսևորումների և որոշ այլ ձևերի դեմ պայքարը քրեական իրավունքի միջոցով» որոշումը առանձնակի դերակատարություն ունի ԵՄ անդամ պետությունների համար նաև այն պատճառով, որ փաստաթղթում տեղ են գտել ռասիզմի և այլատյացության դրսևորումների քրեաիրավական որակում տալու հոդվածները: Մասնավորապես, խոսքը ռասիզմի և այլատյացության դրսևորումներ պարունակող հանցանքների համար պատասխանատվություն սահմանող 1-ին հոդվածի մասին է: Ավելին, փաստաթղթում կոչ է արվում բոլոր անդամ պետություններին անհրաժեշտ քայլեր կատարել պատժելու բոլոր այն արարքները, որոնք նկարագրված են նշված հոդվածի 1-ին կետի «ա»-ից «դ» ենթակետերում, այդ թվում՝

«ա) Բռնության կամ ատելության հրապարակայնորեն հրահրումներն՝ ուղղված մարդկանց այն խմբին կամ այդ խմբի անդամին՝ կախված ռասայից, կրոնից, ազգային կամ էթնիկական ծագումից.

բ) Գործողության ձեռնարկում՝ «ա» ենթակետում, նշված դրույթի հիմքով թռուցիկների, նկարների կամ այլ նյութերի հրապարակային տարածման միջոցով[115]»:

---

115 “Council framework decision on combating certain forms and expressions of racism and xenophobia by means of criminal law”, November 28 of 2008, Brussels, page 2.

ԵՄ Խորհրդի կողմից ընդունված որոշման մեջ հոդված 3-ը, որը վերաբերում է քրեական պատիժներին, և հոդված 4-ը՝ ռասիստական և այլատյացության մոտիվացիային, նախատեսում են հստակ քայլեր ռասիստական և այլատյացության դրսևորումներին քրեաիրավական որակում տալու համար:

Այսպես՝ հոդված 3-ում կոչ է արվում բոլոր անդամ պետություններին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ 1-ին և 2-րդ բաժիններում տեղ գտած վարքագծերին համարժեք և արդյունավետ քրեական պատիժ սահմանելու համար: Մասնավորապես, փաստաթղթում կոչ է արվում առաձնակի ուշադրություն դարձնել 1-ին բաժնում տեղ գտած վարքագծերին, որոնք պատժվում են քրեական հանցագործության սկզբունքի կիրառման հիման վրա՝ նախատեսելով նվազագույնը մեկ տարուց, առավելագույնը երեք տարվա ազատազրկում: Իսկ 4-րդ հոդվածում, անդրադարձ կատարելով ռասիստական և այլատյացության դրսևորումներին, նշվում է, որ այն հանցանքերի նկատմամբ, որոնք թվարկված չեն 1-ին և 2-րդ բաժիններում, անդամ պետությունները պետք է անհրաժեշտ քայլեր կատարեն՝ համոզվելու, որ ռասիստական և այլատյացության մոտիվացիան համարվում է ծանրացուցիչ հանգամանք, և, որ նման մոտիվացիաները հաշվի կառնվեն դատարանի կողմից տուգանքներ սահմանելու ժամանակ:

Անդրադարձ կատարելով այլատյացության համար պատասխանատվություն նախատեսող միջազգային իրավունքի աղբյուրներին՝ հարկ է անդրադառնալ նաև, ՄԱԿ-ի կողմից ընդունված «Ռասայական խտրականության բոլոր տեսակների վերացման մասին» հռչակագրին[116]:

Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրումից ի վեր կառույցի գործունեության հիմքում դրվել է ոչ միայն աշխարհում խաղաղության և անվտանգության պահպանման տեսլականն, այլև գերակա է համարվել մարդու իրավունքների պաշտպանությունը:

Ռասիստական, այլատյացությամբ և այլ անհանդուրժողականությամբ արտահայտված դրսևորումների սրընթաց աճի առկայությունը առաջացրեց մարդու իրավունքների պաշտպանության սուր կարիք, որի արդյունքում 1963թ. նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունվեց «Ռասայական խտրականության բոլոր տեսակների վերացման մասին» հռչակագիրը:

Այդ փաստաթղթի հիմքում ընկած են ՄԱԿ-ի կանոնադրությունը և Մարդու իրավուքների համընդհանուր հռչակագիրը, որոնց կիրառումը ներպետական օրենսդրական համակարգում պարտադիր է անդամ պետությունների համար: Ավելին, հռչա-

---

116 Декларация Организации Объединенных Наций “О ликвидации всех форм расовой дискриминации”, 1963, Нью-Йорк.

կագրում ահազանգվում է, որ աշխարհի որոշ տարածաշրջաններում և առանձին որոշ պետություններում արմատացած է խտրականությունը՝ տեղ գտնելով, թե՛ օրենսդրական, թե՛ վարչական և, թե՛ այլ հնարավոր ճյուղերում:

Գլխավոր Ասամբլեան հռչակագրում կոչ է անում անդամ պետություններին խտրականությունների դեմ պայքարելու համար ընդունել միջպետական և միջազգային այնպիսի մեթոդներ, այդ թվում՝ կրթության և տեղեկատվական համակարգում, որոնք կապահովեն բոլոր այն նորմերի համընդհանուր և արդյունավետ պահպանումը, որոնք տեղ են գտել հռչակագրում:

«Ռասայական խտրականության բոլոր տեսակների վերացման մասին» հռչակագրի 4-րդ և 9-րդ հոդվածները պարտավորեցնում են ՄԱԿ-ի բոլոր անդամ պետություններին կիրառել արդյունավետ մեթոդներ՝ փոփոխելով պետական քաղաքականությունը, չեղյալ հայտարարել օրենքները և կանոնները, որոնք խտրականության առաջացման և ամրապնդման պատճառներ են հանդիսանում: Մասնավորապես, հռչակագրի 4-րդ հոդվածում կոչ է արվում բոլոր պետություններին. «Պետությունները պետք է ընդունեն օրենքներ, որոնք արգելում են խտրականությունը, և համապատասխան քայլեր ձեռնարկեն նման ռասայական խտրականության հանգեցնող նախապաշարմունքների

դեմ պայքարելու համար[117]»: Իսկ 9-րդ հոդվածի 3-րդ կետում նշվում է, որ հռչակագրում տեղ գտած նորմերի պահպանման և իրականացման համար պետությունները պարտավոր են դրական փոփոխություններ կատարել իրենց օրենսդրական և այլ համակարգերում, որպեսզի այն կազմակերպությունները, որոնք տարածում կամ աջակցում են ռասայական խտրականությանը, դրդում են բռնության կամ բռնություն են կիրառում ռասայի, մաշկի գույնի կամ էթնիկ ծագումնաբանության հիման վրա, ենթարկվեն քրեական հետապնդման:

Այլատյացության և նման այլ անհանդուրժողականությունների դեմ պայքարում մասնագիտանում են տարբեր միջազգային կառույցներ, որոնց նպատակները համընկնում են:

Ռասիզմի և ռասայական անհանդուրժողականության դեմ պայքարում առանձնահատուկ դեր ունի նաև միջազգային մանդատ ունեցող Եվրոպական հանձնաժողովը (ECRI): Հանձնաժողովը 2006թ. դեկտեմբերի 15-ին ընդունել է «Պայքար ընդդեմ ռասիզմի և ռասայական խտրականության դպրոցում և դպրոցական կրթության միջոցով» ընդհանուր ռազմավարության N10 հանձնարարականը[118]: Այս հանձնարարականը մեծ դերակա-

---

117 Декларация Организации Объединенных Наций “О ликвидации всех форм расовой дискриминации”, 1963, Нью-Йорк, стр. 4.

118 European Commission against Racism and Intolerance General Policy Recommendation N10: “On combating racism and racial discrimination in and through school education”, 2006, Strasbourg.

տարություն ունի, թե՛ դպրոցում ռասիզմի և ռասայական անհանդուրժողականության դրսևորումների դեմ պայքարի և, թե՛ դրանց կանխարգելման հարցում:

Հանձնարարականով հորդորվում է դպրոցի ղեկավար անձնակազմին նպաստել հավասարության սկզբունքի պահպանմանը, այդ թվում՝ դպրոցում հարկավոր է ընդունել և հարգել կրոնական, ազգային, մշակութային բազմազանությունը: Փաստաթղթի 2-րդ բաժնի 1-ին կետում առաջ քաշված «ա»-ից «զ» ենթակետերը հանգամանալից ներկայացնում են հնարավոր պայքարի ուղիները:

Այսպիսով՝ N10 հանձնարարականը էական նշանակություն ունի դպրոցում ահանդուրժողականության դեմ պայքարի հարցում: Այդ փաստաթղթի «բ» ենթակետով առաջարկվում է ներդնել ռասիստական միջադեպերի արձանագրման այնպիսի համակարգ, որը գրանցման միջոցով տեղեկատվություն կտրամադրի ռասիզմի և ռասայական խտրականությունների հետ կապված միջադեպերի վերաբերյալ: Այս համակարգը հնարավորություն է ընձեռելու նման անհանդուրժողականությունների դեմ մշակել երկարատև մարտավարություն: Իսկ, օրինակ 2-րդ կետում նշվում է, որ ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարում պետք է առաջնային նշանակություն ունենա դպրոցական համակարգը: Նույն կետի «դ» ենթակետում առաջարկվում է պայքարել նման դրսևորումների դեմ՝ դասագրքե-

րից հեռացնելով բոլոր այն ռասիստական նյութերը, որոնք ձևավորում են կարծրատիպեր կամ առաջացնում անհանդուրժողականություն փոքրամասնությունների նկատմամբ:

Ի գիտություն ընդունելով այն, որ Եվրոպական հանձնաժողովը լուրջ պայքար է մղում ռասիզմի և այլատյացության դրսևորումների դեմ, որոնց բացահայտման արդյունքում կազմվում են զեկույցներ, այդ համատեքստում հարկ է անդրադառնալ 2016թ. մարտի 17-ին միջազգային մանդատով ընդդեմ ռասիզմի և անհանդուրժողականության Եվրոպական հանձնաժողովի ընդունած Ադրբեջանի մասին (հինգերորդ մոնիթորինգային փուլի) զեկույցը:

Թեև զեկույցը չի կարող հանդիսանալ միջազգային իրավունքի աղբյուր, այդուհանդերձ, դրանում զետեղված տեղեկությունը հարուստ նյութ է Ադրբեջանում տիրող հայատյացության դրսևորումներն ուսումնասիրելու համար:

Մասնավորապես, զեկույցում անդրադարձ է կատարվում Ադրբեջանում առկա այլատյացության, մարդու իրավունքների խախտման, փոքրամասնությունների ճնշման տարբեր դեպքերին և առաջարկ է արվում տարբեր ոլորտներում բարեփոխումներ կատարել: Զեկույցում նշվում է, որ Ադրբեջանում գոյություն չունեն վիճակագրական հավաստի տվյալներ, մասնավորապես այն ոլորտներում, որոնք վերաբերում են ռասիզմի և այլատյացության դրսևորումների մասին Եվրոպական հանձնաժողովին

հետաքրքրող փաստերին: Ավելին՝ զեկույցում անդրադարձ է կատարվում Ադրբեջանում լայնածավալ հալածանքի արժանացած քաղաքացիական հասարակության բազմաթիվ ներկայացուցիչներին, ԶԼՄ-ներին, իսկ ավելի ուշ՝ Ադրբեջանում գտնվող ԵԱՀԿ գրասենյակի փակմանը:

Եվրոպական հանձնաժողովի համար մտահոգության առիթ է հանդիսացել նաև այն, որ Ադրբեջանի ո՛չ քաղաքացիական և ո՛չ էլ վարչական օրենսդրությունները չեն ներառում ուղղակի կամ անուղղակի դրույթներ ռասայական խտրականության սահմանման մասին և, որ այս ոլորտներում համապարփակ օրենսդրություն չեն ընդունել: Զեկույցում նաև նշվում է, որ հայերի հանդեպ ատելությունը շարունակում է տարածվել քաղաքական գործիչների, լրատվամիջոցների և կրթական հաստատությունների միջոցով:

Հատկանշական են զեկույցում տեղ գտած մի քանի կետեր, մասնավորապես 24-րդ և 25-րդ կետերը, որտեղ նշվում է, որ այլատյացության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ադրբեջանում 2014 թվականին 8679 լրատվական նորությունից 342-ը, այսինքն՝ 3.9%-ը արտահայտում է այլատյացություն: Այլատյացության դրսևորումներ են հայտնաբերվել նաև տպագիր նորությունների (8.8%), էլեկտրոնային նյութերի (4.9%), հեռուստատեսային հաղորդումների (2%) շրջանակներում: Բացի այդ, զեկույցի համաձայն՝ այլատյացությամբ արտահայտված մոտա-

վորապես 196 դրսևորումում թիրախավորվում են հայերը, իսկ 2012թ. հետազոտությունը պարզել է, որ Ադրբեջանում հասարակության 91%-ը հայերին համարում է ոխերիմ թշնամի:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ, չնայած ռասիզմի և այլատյացության դեմ մղվող միջազգային պայքարին՝ որոշ երկրներում և հատկապես Ադրբեջանում, այդ անհանդուրժողական դրսևորումները շարունակում են զարգանալ, իսկ դրանց հեղինակները՝ խուսափել պատասխանատվությունից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջազգային բոլոր կառույցները ինտենսիվ պայքար են մղում ռասիզմի, այլատյացության և անհանդուրժողականության այլ դրսևորումների դեմ: Վերջիններս հանդես են գալիս տարբեր նախաձեռնություններով, ինչպիսիք են փոփոխությունները ներպետական օրենսդրություններում, ինչպես նաև առաջարկելով պայքարի նոր մեթոդներ, որոնք կանխարգելում, արգելում կամ քրեական պատասխանատվության են ենթարկում դրանց կատարողներին:

Կարելի է եզրակացնել, որ, չնայած միջազգային տարբեր կառույցների զեկույցների, բանաձևերի և այլ միջազգային փաստաթղթերի ընդունմանը՝ Ադրբեջանը շարունակում է հակօրինականությունների շարքը՝ թիրախավորելով հայությանը՝ վերջիններիս ներկայացնելով որպես թշնամի, մշակելով «պետական ծրագրեր», որոնք հայաոչնչացման տարրեր են պարունակում:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՑԱՌԻԿ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼԱՊՇԻՆԻ ՀԵՏ. ՀԱՅԿԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔ ԵՎ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ «ՄԵՎ ՑՈՒՑԱԿԻՆ»

3.1 «ՄԵՎ ՑՈՒՑԱԿԻ» ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանում հայատյացությունը մեր օրերում վտանգավոր մարտահրավեր է հայերի համար: Այն մարտահրավեր է ոչ միայն Հայաստանում և Արցախում ապրող հայերի, այլև ամբողջ աշխարհում ապրող մարդկանց համար:

Ադրբեջանը բազմիցս հանդես է եկել հայաոչնչացման և հայատյացության հայտարարություններով, կաշառել բարձրադիր պաշտոնյաների, որոնք կողմ են քվեարկել հակահայկական բանաձևերին, ինչպես նաև մասնակից են եղել Ադրբեջանի կողմից իրականացված հակահայկական այլ նախաձեռնություններին:

Հայատյացության վառ օրինակներից է նաև Ադրբեջանի այսպես կոչված «Սև ցուցակ» նախաձեռնությունը, որը ինքնին վտանգի տակ է դնում ոչ միայն ամբողջ հայերին, այլև այլազգիներին:

Ադրբեջանը վերջին տարիներին ակտիվորեն ներառում և հազվադեպ ցուցակից դուրս է հանում հանրությանը հայտնի մարդկանց:

Սույն գլխում ներառել ենք «Սև ցուցակ»-ի մասին հնարավորինս ընդարձակ և զուգորդված փաստեր, ցուցակից դուրս եկած անձանց, ինչպես նաև սև ցուցակում գտնվող, ազգությամբ հայերի տվյալներ:

Խոսելով «Սև ցուցակ»-ի մասին՝ հարկ ենք համարում նշել, որ ուսումնասիրել ենք 2018թ-ի Ադրբեջանի Արտաքին գործերի նախարարության կայքում 17.01.2018, 28.02.2018 և 17.04.2018 ամսաթվերին տեղադրված «Սև ցուցակ»-ները: Պարզել ենք, որ ցուցակում ներառված են 5 տասնյակից ավելի պետությունների, մասնավորապես՝ Իսպանիայի, Սինգապուրի, ՌԴ-ի, Բելառուսիայի, ԱՄՆ-ի, Իսրայելի, Էստոնիայի, Բուլղարիայի, Լիտվայի, Թուրքիայի, Գերմանիայի, Լատվիայի, Ուկրաինայի, Ավստրիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Բոլիվիայի, Ավստրալիայի, Բրազիլիայի, Պակիստանի, Հորդանանի, Լեհաստանի, Ալժիրի, Էստոնիայի, Խորվաթիայի, Չեխիայի, Սլովենիայի և այլ երկրների քաղաքացիներ:

Այդ քաղաքացիները, որոնք ներառված են ցուցակում որպես անցանկալի անձ, զբաղվում են հասարակական և գիտական գործունեությամբ, մասնավորապես լրագրությամբ, իրավաբանությամբ, բժշկությամբ, նկարչությամբ և այլն: Ցուցակում նաև հայտնվել են աշխարհահռչակ լրատվական՝ «ԼայֆՆյուզ» «Գազետա.ռու», «Նյու Յորք Թայմզ» «Սի-Էն-Էն» «Կոսմոլենսկայա Պռավդա» «Պանոռամա», «Ռեպուբլիկա Նյուզփեյփր» ընկերությունների ներկայացուցիչներ: Հատկանշական է նաև այն հան-

գամանքը, որ Ֆրանսիայի Ներքին գործերի նախարար Բրունո լէ Ռունը, Հայաստանում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Էվընսը և մի շարք այլ պետական ներկա և նախկին պաշտոնյաներ նույնպես ներառված են այդ ցուցակում:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանը նպատակ ունի «Սև ցուցակ»-ում հանրային ճանաչում ունեցող մարդկանց ներգարվելով շահել մի շարք քաղաքական դիվիդենտներ, մասնավորապես «կանխարգելել» ճանաչում ունեցող անձանց այցելությունը Արցախ: Փաստ է, որ այդ այցելությունները ունեն բավական դրական ազդեցություն Ադրբեջանի հակահայական, իբր թե հայերը «ագրեսիվ», «ռազմատենչ» ազգ են, քաղաքականությունը հերքելու մասով: Իսկ օտարերկրացի անձանց այցը Արցախ, նպաստում է վերջինիս ճանաչողական տեղեկատվության լայն տարածմանը:

Պետական աշխատողներին այդ ցուցակում ներառելը նույնպես ունի նպատակային հիմք: Այստեղ Ադրբեջանը ցանկանում է պետականորեն ոչ ուղիղ ձևով ազդել 3-րդ պետության արտաքին քաղաքականության ծրագրի վրա՝ փորձելով չեզոքացնել Արցախի հետ հնարավոր համագործակցությունները: Ավելին, այս հանգամանքը, Ադրբեջանի համար հարմար հարթակ է հետագայում շանտաժի ճանապարհով հաջողություններ գրանցել իր իսկ արտաքին քաղաքականության շրջանակներում:

Ստորև ներկայացրել ենք ազգությամբ հայերի ցանկը, որոնք հանդիսանում են 3-րդ պետության քաղաքացի, ծավալել են կամ ծավալում են այդ՝ 3-րդ, պետության համար օգտակար գործունեություն, որոնցից ոմանք հանդիսանում են նաև պետական ծառայող:

Եվ այսպես, խոսելով «Սև ցուցակ»-ի նպատակի մասին, կարելի է հստակ արձանագրել այն, որ Ադրբեջանը այդ ցուցակը կարող է օգտագործել մի քանի ճանապարհով, մասնավորապես, որ ցուցակում ներառված հայերը համարվում են անցանկալի անձինք Ադրբեջանի համար կամ այսպես ասած սպառնում են Ադրբեջանի անվտանգությանը, և առաջ տանելով պետության շահը՝ հասնել շոշափելի քաղաքական հաղթանակների:

Ուստի օգտվելով այս հանգամանքից՝ Ադրբեջանը շանտաժի եղանակով, այն է, որ չի բանակցի կամ չի համագործակցի այս կամ այն պետության կամ այդ պետություններում գտնվող կազմակերպությունների հետ: Իսկ չհամագործակցության հիմքում կներկայացվի «Սև ցուցակ»-ում գտնվող հայերի հանգամանքը, ովքեր կապ ունեն կամ աշխատում են այս կամ այն կազմակերպության կամ պետության համակարգում:

Բանակցությունները հաջողացնելու նպատակով Ադրբեջանը, այսպես ասած արդարացված եղանակով, կարող է պահանջել տվյալ անձի՝ հայի, պաշտոնից ազատումը կամ բանակցությունների սեղանից հեռացումը: Պարզ է, որ այս շանտաժը կմեկ-

նաբանվի այն պարզ բացատրությամբ, որ սա ոչ թե հայատյացություն է՝ այլ քայլ՝ ուղղված Ադրբեջանի միաջազգային շահերի պաշտպանությանը:

«Սև ցուցակ»-ի ազդեցությունը իրենից ավելի մեծ վտանգ է ներկայացնում, քան վերջինիս ուղղակի հասարակ փաստաթղթի վերաբերվելը:

Ներկայումս Ադրբեջանը չի հրաժարվել իր զավթողական և ագրեսիվ արտաքին քաղաքականությունից և կարծում ենք, որ «Սև ցուցակ»-ը այն հերթական քայլերից մեկն է, որը հետագայում Հայաստանի և առավել ևս Արցախի համար դառնալու է լրջագույն խնդիր:

Բոլորին հայտնի է այն, որ պատերազմի դաշտում ինչքան ջլատվում և մի քանի ճակատով է կռիվը կազմակերպվում, այնքան ջլատվում են հակառակորդի ուժերը: Այս նույն մարտավարությունը գործում է նաև քաղաքականության ասպարեզում. «Սև ցուցակ»-ը ինքնին ունի բավական ներուժ Ադրբեջանի վարած արտաքին քաղաքականությունում որոշակի պոզիտիվ դերակատարություն ապահովելու հարցում:

«Սև ցուցակ»-ի մեկ այլ կարևոր մարտահրավերներից է Արցախի մեկուսացումը: Այս մեկուսացման վառ օրինակներից է Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմքում ընկած հակահայական քայլարշավը՝ ինչի մասին վկայում է 3-րդ պետության քաղաքացի, ազգությամբ հայերի սև ցուցակում ներառելը:

Ցուցակը ներկայացված է ստորև.

№	Name and Surname	Citizenship	Position	Date and Purpose of the Visit
1.	Adrin Nazarian	United States of America	Member, California State Assembly	October 4-9, 2017
2.	Dzovinar Melkonyan	French Republic	Representative, Institute of Democracy and Cooperation	Participated at the “parliamentary elections” as an observer held on May 23, 2010
3.	Eduardo Eurnekian	Argentine Republic	Armenian-origin millionaire, businessman	-
4.	Garineh Torosian	Australia	Student	July 2013
5.	Gladis Berejikyan (Gladys Berejiklian)	Australia	Member of the Parliament of New South Wales	July 2013
6.	Harut Çitilyan (Harout Chitilian)	Canada	Member, Montreal City Council	November, 2010
7.	Hovig Melkonian	Australia	Member of the Armenian Committee of Australia	July, 2013
8.	Hratch Karamanoukian	United States of America	Doctor	May 24 – June 3, 2012
9.	Jorge Murekian	Argentine Republic	Chairman of Argentinian Affiliate of	May, 2009

			“All Armenian Fund”	
10.	Joseph Simitian	United States of America	Senator of California State Senate	-
11.	Carlos Antaramian	United Mexican States	Scientist	Participated at the “parliamentary elections” as an observer on May 3, 2015
12.	Gaspar Karampetian	-	Chairman, “Hay Dat” Committee	October 13, 2014
13.	Greg Soghomonian	Australia	Member of Armenian committee of Australia	July 2013
14.	Levon Qaltsyan	Russian Federation or Georgia (Abkhazia)	Member, “Parliament” of Abkhazia	Participated at the so called “referendum”, February 20, 2017
15.	Leo Maumdjian	Argentine Republic	Anchor on news of international politics of “Channel 23”	July 2016
16.	Nobel Eduardoviç Arustamyan (Нобель Эдуардович Аррустамян)	Russian Federation	Correspondent, “NTV+” TV channel	2014
17.	Onnig Beylerian	Canada	Employee, Privy Council Office under	March, 1999

			the Cabinet of Ministers of Canada	
18.	Roman Babayan (Роман Бабаян)	Russian Federation	Journalist, "ТВ Центр"	March 13, 2017
19.	Rubik Sardaryan	Islamic Republic of Iran	Member, Parliament of the Islamic Republic of Iran	Participated at the “parliamentary elections” as an observer in May 23, 2010
20.	Samvel Arustamyan (Самвел Арустамян)	Russian Federation	Journalist	2014
21.	Sergio Nahapetyan	Argentine Republic	Former member, Parliament of the Argentine	Participated at the “parliamentary elections” as an observer held on May 23, 2010
22.	Spartak Arutunyan	Republic of Belarus	Sculptor	Participated at the Symposium held in Khankendi in August, 2012
23.	Stefan Abolakyan (Stephan Abolakian)	Australia	Member, Armenian Committee of Australia	July, 2013
24.	Tiqran Qasparyan (Тигран Гаспарян)	Russian Federation	Correspondent, “LifeNews” Channel	January 8, 2016

25.	Vache Kahramanian	Australia	Member, Armenian Committee of Australia	July, 2013
26.	Vighen Avetis	Republic of Italy	Operator-journalist	July, 2011

Ադրբեջանի «Սև ցուցակ»-ի արկածներ չեն ավարտվում ազգությամբ հայերին ցուցակում ներգրավելով:

Առանձնակի ուշադրություն է արժանի «Սև ցուցակից» դուրս եկած անձանց փաստը:

Ուսումնասիրությունների ընթացքում պարզել ենք, որ 2018թ-ի ապրիլի 17-ի դրությամբ սև ցուցակից դուրս եկած 5 հոգին՝ Դմիտրի Ուվարովը, Մարիա Նեմցովան, Վիտալի Վատուլյան, Յեվգենի Նովիկովան և Խուան Մանուել Դոմինգեզը, հանդիսանում են «Երաժշտությունը Խաղաղության համար» ծրագրի մասնակիցներ: Վերջիններս 2015թ. փետրվարի 6-ին այցելել էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ (ներկայումս Արցախի Հանրապետություն) համերգ տալու նպատակով: Այս հետևանքով ծրագրի մասնակիցները հայտնվել էին Ադրբեջանի «Սև ցուցակում»: «Երաժշտությունը Խաղաղության համար» ծրագրի մասնակիցները մեղադրվում էին այն բանում, թե իբր ապօրինաբար հատել էին Ադրբեջանի «օկուպացված» տարածքներ՝ առանց Ադրբեջանի կողմից համապատասխան թույլտվության ձեռք բերման:

Ուսումնասիրելով վերոնշյալ կազմակերպության՝ ծրագրի նպատակը, պարզել ենք, որ «Երաժշտությունը Խաղաղության համար» ծրագրի նպատակը՝ կոնֆլիկտային և բնական աղետներից ավերված տարածքներում համերգների և մասնագիտացված դասընթացների անցակացումն է: Ավելին, այդ ծրագրի նպատակներից էր նաև աջակցելու ավերված տարածքներում ապրող ապագա երաժիշտներին: Ստորև ներկայացնում ենք արտապատկեր՝ դուրս բերված «Երաժշտությունը Խաղաղության համար» ծրագրի պաշտոնական կայք էջից: *



Հիմք ընդունելով վերոնշյալը՝ կարելի է հստակ արձանագրել, այն, որ «Երաժշտությունը Խաղաղության համար» ծրագրի կազմակերպիչները դեմ է գնացել իրենց իսկ կազմակերպության նպատակներին: Նման քայլը փաստում է այն, որ Ադրբեջանը՝

գործի դնելով շանտաժի ուժը, հասել է Արցախ այցելած ծրագրի մասնակիցների «ներողության երկտող»-ով՝ հանդես գալուն:

Եվ այսպես, 2018թ. փետրվարին վերոնշյալ անձանց ներում շնորհվեց: Ցուցակից դուրս եկած բոլոր անձինք «ներողության երկտող»-ով հանդես եկան: «Ներողության երկտող»-ում նշվում էր, որ Վիտալի Վատուլյան և մնացած 4 երաժիշտները հարգում է Ադրբեջանի Հանրապետության օրենքները և ներողություն խնդրում Ադրբեջանի կառավարությունից և ժողովրդից Ադրբեջանի գրավյալ տարածքներ իրենց չարտոնված այցելության համար: Այնուհետև հայտնել են, որ կոնֆլիկտի հետևանքով ավելի քան 1 միլիոն ադրբեջանցիներ դարձել են փախստականներ ու տեղահանվածներ և որ ավելի քան 20.000-ը զոհվածներ:

Ուսումնասիրության ընթացքում պարզել ենք նաև, որ 2018թ-ի ապրիլի 17-ի դրությամբ Սվետլանա Սառիչևան անունով ՌԴ քաղաքացին ևս ներառվել է ադրբեջանական «Սև ցուցակ»-ում, սակայն վերջինիս մասով մանրամասն տեղեկություն չի հաջողվել գտնել:

Ստորև ներկայացված է ցուցակից դուրս եկածների աղյուսակը.

№	Անուն Ազգանուն	Երկիրը	«Սև» Ցուցակում	«Սև» Ցուցակից Դուրս	Մասնագիտացում	Պատճառ	Տեղեկություն

1.	Dmitri Uvarov (Дмитрий Уваров)	Ռուսաստանի Դաշնություն	17.01.2018	28.02.2018	Սաքսոֆոնիստ	2015թ. փետրվարի 6-ին ԱՀ[119]-ում մասնակցել է միջոցառման	http://en.apa.az/azerbaijan-politics/foreign-news/azerbaijan-excludes-another-russian-musician-from-blacklist.html
2.	Juan Manuel Dominguez	Արգենտինայի Հանրապետություն	17.01.2018	28.02.2018	Սաքսոֆոն նվագող	2015թ. փետրվարի 6-ին ԱՀ-ում մասնակցել է միջոցառման	https://en.azvision.az/news/80793/azerbaijan-removes-argentinean-musician-from-%E2%80%9Cblacklist%E2%80%9D%C2%A0.html
3.	Maria Nemtsova (Мария Немцова)	Ռուսաստանի Դաշնություն	17.01.2018	28.02.2018	Դաշնակահարուհի	2015թ. փետրվարի 6-ին ԱՀ-ում մասնակցել է միջոցառման	http://en.apa.az/nagorno_karabakh/russian-musician-off-azerbaijan-s-black-list.html
4.	Svetlana Sarniceva (Светлана Сарычева)	Ռուսաստանի Դաշնություն	17.01.2018		Լրագրող, «Ռոդնիկ» թերթ	Մայիս, 2012	http://voicepress.az/ru/siyaset/18290-sarycheva-izvinilas-pered-narodom-azerbaydzhana.

[119] Արցախի Հանրապետություն

							html
5.	Vitaly Vatulya (Виталий Ватуля)	Ռուսաստանի Դաշնություն	17.01.2018	28.02.2018	Սաքսոֆոնիստ	2015թ. փետրվարի 6-ին ԱՀ-ում մասնակցել է միջոցառման	http://en.apa.az/azerbaijan-politics/foreign-news/russian-musician-vitaly-vatulya-removed-from-azerbaijan-s-blacklist.html
6.	Yevgeni Novikov (Евгени Новиков)	Ռուսաստանի Դաշնություն	17.01.2018	28.02.2018	Սաքսոֆոնիստ	2015թ. փետրվարի 6-ին ԱՀ-ում մասնակցել է միջոցառման	http://en.apa.az/azerbaijan-politics/foreign-news/another-member-of-music-for-peace-project-off-azerbaijan-s-black-list.html

Ամփոփելով վերոնշյալ փաստերը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ Ադրբեջանը թե՛ քաղաքական և թե՛ ճնշման այլ եղանակներով փորձում է ոչ միայն լիովին մեկուսացնել Արցախը, այլև սպառնալ վերջինիս գոյությանը:

3.2 ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼԱՊՇԻՆ.

ԿՏՏԱՆՔՆԵՐԻՑ ՄԻՆՉ ԵՎ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

1. <u>Ելնելով այն հանգամանքից, որ մարդու իրավունքները 21-րդ դարում զարգացած պետություններում համարվում են առաջնահերթ՝ ի՞նչ եք կարծում Ադրբեջանում մարդու իրավունքները ինչպիսի մակարդակում են գտնվում:</u>

Ադրբեջանում մարդու իրավունքներ ընդհանրապես գոյություն չունեն՝ ես Ադրբեջանը կհամեմատեի Հյուսիսային Կորեայի հետ: Մարդկանց հետապնդում են, դատապարտում են, պատժում են, աշխատանքից են հեռացնում միայն այն բանի համար, որ ինչ-որ մեկը Ֆեյսբուքում ինչ-որ բան է գրել ընդդեմ իշխանությանը: Եվ որպես Ադրբեջանում դատապարտված անձ կարող եմ ասել, որ Ադրբեջանում կա այնպիսի մի քաղաքականություն, երբ իշխանությունը փորձում է մեկուսացնել բոլոր նրանց, ովքեր իրենց, այսինքն՝ իշխանությանը, կարող են ինչ-որ բանով սպառնալ կամ վտանգ ներկայացնել: Ասեմ ավելին, պարտադիր չէ լինել ընդդիմադիր գործիչ կամ հեղափոխական: Բավական է միայն Ֆեյսբուքում ադրբեջանցին գրի, որ իրենց երկրում կոռուպցիա կա: Դա շատ տխուր ավարտ կարող է ունենալ տվյալ անձի համար:

Ի դեպ, Ադրբեջանում Ամիխման Գալանդարով անունով մի բլոգեր կար, ով սպանվել է ադրբեջանական բերդում: Ամիխմա-

նը իր բլոգում գրում էր, որ Ադրբեջանի նախագահական ընտրությունները լեգիտիմ չեն, որ երկիրը թաթախված է կոռուպցիայի մեջ և այլն:

Եթե հակիրճ ներկայացնեմ, ապա Ամիխման Գալանդարովի «գլխին սարքեցին»՝ նրա մոտ 4 գրամ թմրամիջոց «պատահաբար» հայտնաբերելով բանտ նետեցին 6 տարի ժամկետով: Բերդում նրան սպանեցին, իսկ հետո հայտարարեցին, որ վերջինս ինքնասպան է եղել՝ կախվելով: Սրա մասին ինձ պատմել է մի ադրբեջանցի[120], ով նույնպես ազատազրկման մեջ էր եղել ադրբեջանական բերդում և տեսել էր Ամիխման Գալանդարովին, ով Գուլիևին ասել էր, որ սպանելու են իրեն: Այս դեպքից 2 օր անց Ամիխմանը սպանվեց:

Անհավանական է նաև այն փաստը, որ Ադրբեջանում ըստ իրենց տրամադրած տվյալների կա 160 քաղբանտարկյալ, սակայն ես կարծում եմ, որ դրանց թիվը անհավանական շատ է: Հետաքրքիր է այն փաստը, որ բոլոր նրանք, ովքեր դեմ են արտահայտվում Ադրբեջանի իշխանությանը հայտնվում են բերդում կամ ոստիկանի վրա հարձակվելու հոդվածով, կամ էլ թմրամիջոցներ պահելու կամ տարածելու իրավական հիմքով:

<u>Հարց.</u> Ադրբեջանական իշխանությունը սահմանափակու՞մ է այն մարդկանց իրավունքները, ովքեր փորձում են իշխանությանը դեմ արտահայտվել:

---

[120] Մի ադրբեջանցի՝ պայմանական անունը անվանեք Գուլիև:

Պատասխան. Այո՛, իհարկե: Ասեմ ավելին, Լեռնային Ղարաբաղի խնդիրը, ըստ էության իրենց համար խնդիր չէ: Ես ուշի ուշով համոզվում եմ, որ իրենց պետք է, որ Ղարաբաղը լինի հայերի ձեռքում, քանի որ այն ստեղծում է թշնամու կերպար: Նրանց միակ խնդիրը սեփական իշխանությունը պահպանելն է: Հայաստանը դա ձեռնտու թշնամի է, որի վրա կարելի է բարդել բոլոր խնդիրները: Ինչպես ես իմ բլոգում եմ գրում շատ հաճախ, եթե անգամ Ղարաբաղը չլիներ, ապա իրեն կարելի էր արհեստականորեն ստեղծել:

2. **Ձեր ձերբակալման ժամանակ Դուք փաստաբան պահանջե՞լ եք: Եթե այո, ապա Դուք հնարավորություն ունեցե՞լ եք պաշտպանելու Ձեր իրավունքները, թե՞ եղել են խոչընդոտներ:**

Ադրբեջանական բերդում գտնվելու ժամանակ, մոտավորապես 2 շաբաթ, ինձ թույլ չէին տալիս հանդիպել իմ փաստաբանի հետ, ում վարձել էր Իսրայելի դեսպանատունը:

Ադրբեջանը ինձ տրամադրել էր հանրային պաշտպան: Նրանք ինձ ասում էին, որ ոչ մի ուրիշ փաստաբան չկա. Այդ պահին իմ ձեռքերը կապված էին՝ ես արտաքին աշխարհի հետ շփումից զրկված էի: Նրանք ինձ ասում էին, որ ոչ մեկը չի փորձել ինձ հետ կապնվել, և որ ուրիշ փաստաբան չկա:

Հարկ եմ համարում նշել, որ հանրային պաշտպանը անգլերեն ընդհանրապես չէր հասկանում, իսկ ռուսերենին էլ շատ

թույլ էր տիրապետում: Վերջինիս նպատակը ձևական կողքս նստելն էր՝ անգամ հարցաքննության ժամանակ կողքս նստած քնում էր: Այս ամենը ոչ այլ ինչ էր, քան անհեթեթության թատրոն:

Հարց. Կարծու՞մ եք, որ Ձեզ փրկեց այն հանգամանքը, որ Ձեր նկատմամբ կիրառվող բռնությունների և անազատության փաստերը միջազգային հանրությունը հնարավորություն էր տալիս ճնշելու Ադրբեջանին, այդպիսով ապահովելով Ձեր «անվտանգությունը»:

Պատասխան. Այո՛, մասամբ, ինչպես իմ փորձը ցույց տվեց՝ ադրբեջանական բանտում անվտանգություն գոյություն չունի: Հարձակվեցին, ծեծեցին, կախեցին:

3. **Ձեր մոտ նկատվե՞լ են ֆիզիկական փոփոխություններ. Ի նկատի ունեմ քաշի անկում, օրգանիզմի հետ կապված խնդիրներ, եթե հաշվի չառնենք Ադրբեջանի իշխանությունների կողմից Ձեզ կախելու և կողոսկրը կոտրելու դեպքը:**

Իհարկե, եղել են: Վատ սննդից իմ մոտ խնդիրներ են եղել ատամներիս հետ, մի մասը կոտրվում էին, իսկ մյուսը՝ ընկնում: Մաշկային խնդիրներ ունեի, ինչպես նաև արտաքնոց գնալու խնդիրներ ունեի, իսկ մարսողական համակարգս լրիվ խանգարվել էր:

4. <u>Ազատազրկման ժամանակ, Դուք բժշկի օգնությանը դիմել եք: Եթե այո, ապա Ձեզ բժիշկ ժամանակին էր տրամադրվում:</u>

Այո՛, բժշկի դիմել եմ: Բայց, երևի, բոլորը գիտեն, բանտի բժշկի մասնագիտական մակարդակը: Բերեմ մեկ օրինակ՝ բժիշկը ասում էր, որ լեզուս դուրս հանեմ, այն դեպքում, երբ գլխացավեր ունեի: Ինչ առողջական խնդիրներ ունեի, բոլորի համար նշանակում էր Ցիտրամոնի հաբեր:

<u>Հարց.</u> Ընդհանուր առմամբ կարելի՞ է արձանագրել, որ բերդում Ձեզ պատշաճ բժշկական օգնություն չի տրամադրվել:

<u>Պատասխան.</u> Հիմնականում այո, չնայած եղել է մի դեպք, երբ ես հացադուլ էի հայտարարել բերդում, ի դեպ եղել են նաև այնպիսի հացադուլներ, որ հրաժարվել եմ անգամ ջրից: Հացադուլի 4-րդ օրը, ես ինձ վատ զգացի, վայր ընկա, որի արդյունքում գլուխս հարվածեցի աթոռին և ուշագնաց եղա: Երբ ես ուշքի եկա, իրենք ինձ բերեցին հիվանդանոց: Հիվանդանոցում հետազոտվելուց հետո, իրենք ինձ ասացին, որ ինձ հետ ամեն ինչ շատ լավ է, որ ես առողջ եմ ինչպես ցուլը:

<u>Հարց.</u> Իսկ հիվանդանոցում հետազոտությունից հետո, Աղրբեջանը փոխանցե՞լ է այդ հետազոտված փաստաթղթերը Իսրայելին:

<u>Պատասխան.</u> Ոչինչ չեն տրամադրել, բացառությամբ այն դեպքի, երբ ինձ բանտում ծեծի ենթարկեցին և կողոսկրս կոտրեցին:

Իրենք ինձ Իսրայելին հանձնելու օրը իսրայելական կողմին տվեցին այդ հիվանդանոցի փաստաթղթերը, որում նշված էր, որ կոտրված է կողոսկրս և այլն: Նրանք անգամ այդ փաստաթուղթը նոտարով են հաստատել:

Ինձ մի հարց է հետաքրքրում, որի պատասխանը դժվար թե ես կարողանամ գտնել. Այն մարդիկ ովքեր ուզում էին ինձ սպանել և սպանությունն օգտագործել որպես կոմպրոմատ ընդդեմ Ալիևի, ի՞նչը իրենց խանգարեց գործը կիսատ թողել: Ես միայն դա չեմ հասկանում:

Կարծում եմ, որ սա արվել է 2 պատճառով՝

1. Իմ սպանությունն օգտագործել ընդդեմ Ալիևի,
2. Ես իրենց բազմիցս հարցաքննությունների ժամանակ ասել եմ, որ Ձեզ դատի եմ տալու, որ դուք պատասխան եք տալու, իսկ քննիչներն իմ այդ հայտարարություններին ի պատասխան ժպտում էին:

Նրանք հիմար չէին, որ ինձ փոխանցեցին իմ կախվելու մասին հավաստող փաստաթղթերը. չէ՞ որ այն ուղղակի ապացույց է իմ հանդեպ խոշտանգումների:

Ես վստահ եմ, որ դա արել են այն ուժերը, որոնք միտք ունեն զրկելու Ալիևին իշխանությունից:

5. <u>Ազատագրկման ժամանակ Դուք մտածե՞լ եք ժամանակը հետ տալու և Ձեր Արցախյան այցը կանխելու մասին:</u>

Ինձ մոտ երբեք նման միտք չի եղել: Եղել է միայն Բելառուսի իմ գնալը կանխելու միտքը: Իմ մտքում երբեք չի եղել այն միտքը, որ ես իզուր եմ գնացել Արցախ: Այդ նույն տրամաբանությամբ կարող եմ ասել, որ ես իզուր եմ գնացել Աբխազիա, Ղրիմ, Պաղեստին և այլն: Մենք ազատ մարդիկ ենք և իրավունք ունենք գնալ ուր ցանկանում ենք:

Ձերբակալմանս օրվանից ես հասկացա, որ հայտնվել եմ ավազակների ճիրաններում՝ Աֆղանստանում ապրող ծայրահեղականների ձեռքում: Իմ Ադրբեջան գտնվելու ամենաառաջին իսկ օրվանից, մինչև վերջին օրը ինձ գերի էի զգում, ով հայտնվել է Աֆղանստանի ծայրահեղական Մոջահեդների ձեռքում: Մանավանդ, երբ կողքի խցերից բղավում էին, որ ինձ մորթելու են և հանգիստ չեն թողնելու: Ես գիտակցում էի, որ ես գերի եմ, ես գիտակցում էի նաև, որ ինձ փորձելու են վաճառել՝ փոխել այն 2 ահաբեկիչների հետ, ովքեր գտնվում են Արցախի բերդում՝ այն 2 դիվերսանտների հետ:

Հարցաքննության ժամանակ քննիչը ինձ ասում էր, որ 2 ադրբեջանցիներ գտնվում են արցախյան բերդում և աղոթիր, որ հայերը համաձայնվեն քեզ բերդում գտնվող ադրբեջանցիների հետ փոխանակել:

Եթե փորձեմ ամփոփել իմ տպավորությունները, ապա կնշեմ, որ ընդհանուր տպավորությունս այն էր, որ ես ընկել եմ մի խումբ ահաբեկիչների ձեռքը:

6. **Եթե Դուք կախարդական փայտիկ ունենայիք, ապա ի՞նչը կփոխեիք Ադրբեջանում:**

Ադրբեջանում մուսուլմանական հասարակությունը, երևի սա ոչ ճշգրիտ կընկալվի, բայց սոցիալ-քաղաքական տեսանկյունից չի հասել այնպիսի մակարդակի, որ հասկանա ինչ է նշանակում ժողովրդավարություն: Կարծում եմ, որ նման պետությունները պետք է ղեկավարվեն դիկտատորների կողմից: Հակառակ դեպքում, մուսուլմանական հասարակությունն ունենալով ժողովրդավարության սխալ ընկալում, այն է՝ մեծամասնությունը օժտված է իրավունքով սպանելու փոքրամասնությանը, կարող են պետությունը հիմքից քանդել:

Եթե անկեղծ, ես Ադրբեջանի դիկտատուրան չէի փոխի:

Կարծում եմ, որ այսօր Ալիևը ձեռնտու է Հայաստանին: Չնայած այն բոլոր անհեթեթություններին, որ իբր Ալիևը հետ է վերադարձնելու Երևանի խանությունը և այլն՝ պետք է արձանագրել, որ այսօրվա Ադրբեջանը ձեռնտու է Հայաստանին: 25 տարի հարաբերական անդորր է սահմանին, եթե հաշվի չառնենք 2016թ. ապրիլի բռնության պոռթկումը, ապա ամեն-ամեն ինչ հանգիստ է:

Այն որ Ալիևից հետո ով կգա իշխանության և ինչպիսի քաղաքական մտածելակերպ կունենա՝ կանխատեսել դժվար կլինի: Կարծում եմ, որ դեմոկրատական Ադրբեջանը երբեք չի ճանաչի Ղարաբաղի անկախությունը:

Իմիջիայլոց, ես շփվում եմ իրենց՝ Եվրոպայում գտնվող ընդդիմադիր գործիչների հետ: Նրանք կրթված և խելացի մարդիկ են: Ինձ մոտ այնպիսի տպավորություն է, որ ընդդիմադիրները, ոչ թե կողմնակից են Ադրբեջանում դեմոկրատիայի առաջացմանը, այլև նրանք չեն համակերպվում այն մտքի հետ, որ չեն ստանում եկամուտ նավթից:

Վստահ եմ, որ նոր իշխանությունն Ադրբեջանում դեմոկրատիա չի հաստատի, այնտեղ կլինի միևնույն դիկտատուրան, սակայն երկիրը կղեկավարվի մեկ այլ կլանի կողմից:

7. <u>Բոլորին հայտնի է, որ Դուք պայքարելու եք Ձեր իրավունքների վերականգման համար: Պատմեք, խնդրում եմ, ինչպիսի՞ քայլերից են դրանք բաղկացած: Դուք վստա՞հ եք, որ խավիարային դիվանագիտությունը Ձեզ համար խոչընդոտներ չի՞ ստեղծի:</u>

Ես կողմնակից եմ այն մտքին, որ արա այն ինչ պետք է անես և թող լինի այն ինչ լինում է:

Իհարկե, ես չեմ կարող միանշանակ ասել, որ իրավիճակը չի փոփոխվի, և հնարավոր է, որ մի օր ես ստիպված լինեմ դադարեցնել պայքարս: Օրինակ, հիմա, խնդիրներ են առաջացել Իս-

ռայելի հետ, այն բանի համար, որ ես հակաադրբեջանական գործունեություն եմ ծավալում: Իմ կինը ՌԴ քաղաքացի է, իսկ մեր աղջիկը՝ ով ծնվել է Իսրայելում՝ Իսրայելի: Իմ գործունեության պատճառով չեն երկարացրել Իսրայելում կեցության կնոջս իրավունքը: Կինս արդեն պետք է ստանար Իսրայելի անձնագիր: Մենք 6 տարի է ինչ ապրում ենք Իսրայելում: Կարճ ասած կինս Իսրայելի քաղաքացի չդարձավ: Ավելին՝ կնոջս 30 օր ժամանակ էին տվել Իսրայելը լքելու համար:

Իսկ հետո, երբ ես վերադարձա Իսրայել, տեղի հատուկ ծառայություններն ինձ հանդիպման կանչեցին: Հանդիպման ընթացքում նրանք ասացին, որ ցավում են, որ ես հայտնվել էի նման իրավիճակում (խոսքը իմ բանտարկության մասին է), սակայն մյուս կողմից հավելեցին, որ Ադրբեջանը մեր համար շատ կարևոր դաշնակից է: Ինչպես նաև նշեցին, որ այն ինչ ես անում եմ, խոսքը հարցազրույցների, դատարանների և այլնի մասին է, այսինքն՝ իմ հասարակական ակտիվությունը մեծ վնաս է հասցնում ադրբեջանա-իսրայելական հարաբերություններին:

Ավելին, ասացին, որ Իսրայելը մի քանի միլիարդի պայմանագիր ունի կնքած Ադրբեջանի հետ՝ զինտեխնիկայի մատակարարման ոլորտում: Իրենց մոտ շատ խորը համագործակցություն է Իրանի շուրջ հատուկ ծառայությունների միջև: Այս խոսակցությունը ես ունեցել եմ հենց այն օրերին, երբ Իսրայելն Ադրբեջանի միջոցով գողացավ Իրանի միջուկային զեկույցը:

Ինչպես նաև ասվեց նաև, որ ես փորձում եմ կանգնել նրանց ճանապարհին: Այն որ ես փորձում եմ դատի տալ Ադրբեջանին, վերականգնել արդարությունը, այդ ամենը նրանք հասկանում են, բայց այն, որ Իսրայելն և Ադրբեջանն ունեն տասնյակ միլիարդավոր գումարների պայմանագրեր և ես իմ քայլերով խնդիրներ եմ ստեղծում՝ դա փաստ է:

Ինչպես նաև նշվեց, որ իմ կինը կկարողանա ստանալ քաղաքացիություն, դրա համար մեկ զանգն էլ է բավական, սակայն, ես իմ հասարակական ակտիվությունը պետք է դադարեցնեմ:

Այս խոսակցությունը ես ունեցել եմ մոտավորապես 4 ամիս առաջ:

<u>Հարց.</u> Այս ամենը լսելուց հետո Դուք ի՞նչ եք որոշել, հաշվի առնելով այն որ ընտանիք ունեք, որոշել եք ետ քայլ անե՞լ:

<u>Պատասխան.</u> Ես և կինս շատ ենք մտածել այս ուղղությամբ, շատ ենք քննարկել:

Քննարկում եմ ունեցել նաև հայ, ռուս ընկերներիս հետ, այնուհետև ես այցելել եմ ԱՄՆ և Եվրոպա: Հանդիպումներ եմ ունցել տարբեր քաղաքական գործիչների հետ, որից հետո եկել եմ այն եզրակացության, որ ես չեմ կարող դադարեցնել այս ամենը: Ուղղակի հաշվի առնելով այն մտածելակերպը, որ Ադրբեջանի քաղաքական գործիչները հարգում են ուժը, հաշվի են նստում նրանց հետ ովքեր իրենց հարվածում են: Եվ եթե փորձ կատարես կանգ առնելու, ապա նրանք կենթադրեն, որ վախեցել ես,

կամ որ նրանք (Ադրբեջանը) շատ զորեղ են, որ կարողացան ի-րավիճակը փոխել՝ ազդել 3-րդ պետության միջոցով:

Ես շատ լավ հասկանում եմ, որ իմ զրույցը Իսրայելի հատուկ ծառայությունների հետ տեղի է ունեցել Ադրբեջանի միջնորդությամբ: Կարծում եմ, որ կենդանի մնալու համար մեկ տարբերակ ունեմ, պետք է պայքարել և հաղթել: Վստահ եմ, որ հաղթելու եմ:

8. **<u>Մինչ օրս Ձեզ և Ձեր ընտանիքին շարունակու՞մ են անձնական սպառնալիքներ գալ:</u>**

Այո՛, սպառնալիքները վերջին շրջանում բավականին հաճախ գալիս են ինտերնետ օգտատերերի կողմից:

9. **<u>Երբ Ձեզ Բաքու տեղափոխեցին Ալիևի անձնական ինքնաթիռով, այդ ժամանակ ինչի՞ միասին էիք մտորում և անհանգստանում:</u>**

Այս ժամանակ ես գիտեի, որ լինելու եմ քաղաքական կամ ինչ-որ մեկի անձնական շահի վաճառքի զոհ, այսինքն՝ ինձ տանում են երկու պատճառով՝

1. Սեփական ժողովրդին ցույց տալու, թե ինչպիսի ուժեղ նախագահ է Ալիևը, որ վերջինս ունակ է բռնելու մի մարդու, բերելու և պատժելու,
2. Այս քայլով Ալիևն ամրապնդելու է իր իշխանությունը:

Ես հասկանում էի, որ իմ համար կլինի առևտուր, այսինքն՝ Ալիևն ինչ-որ բան է պահանջելու, կամ ինչ որ զեղչեր տրանզիտ

գազի համար, ինչպես նաև պահանջ ռուսներից, որ վերջիններս հրաժարվեն հայերին զենք տրամադրելուց և այլն:

Անկեղծ ինքս չեմ էլ ցանկանում երևակայությանս զոռ տալ, քանի որ կարող են լինել միլիոնավոր տարբերակներ:

Այո, ինչպես ասացի ինձ առևտրի համար էին օգտագործելու: Ընթացքում ես իմացել եմ, որ Լուկաշենկոն Մինսկում ՌԴ դեսպանին՝ Սուրիկով Ալեքսանդրին, առաջարկել էր չարտահանձնել ինձ, եթե իրեն հնարավորություն ընձեռվի հետաձգելու գազի պարտքի մարումը: Սուրիկովը սրա մասին հայտնել էր ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովին, իսկ Լավրովն էլ Պուտինին: Այս լուրը բավական վրդովվեցրել էր Պուտինին, առաջին հերթին, այն պատճառով, թե ո՞վ էր Ալեքսանդր Լապշինը, նշեմ, որ Պուտինն իմ մասին անգամ չէր էլ լսել, և երկրորդ ինչի՞ց է Լուկաշենկոն որոշել, որ վերջինս կարող է շանտաժով արդյունքի հասնել: Պուտինը մի ուշագրավ արտահայտություն էր արել ասելով. «Դիվանագիտություն սոմալիական ծովահենների մակարդակով»:

Իհարկե, պարզ էր, որ ինձ համար, ոչ ոք չեր պատրաստվում վճարել, դա ակնհայտ էր: Սակայն Ալիևը պատրաստ էր իմ համար վճարել: Կար մի այսպիսի տեղեկություն, որ մեկ տարի առաջ Բելառուսիան Ադրբեջանից 400.000 ամերիկյան դոլար, թե եվրո հստակ չեմ հիշում, վարկով գումար է ստացել, որպեսզի կարողանա մարել Ռուսաստանից ստացած գազի պարտքը: Տն-

տեսական ճգնաժամի պատճառով Բելառուսիան Ադրբեջանին պարտքը չեր մարել և հետագայում էլ դժվար կարողանար այն մարել: Տեղեկության համաձայն, այն բանից հետո, երբ Բելառուսիան հանձնեց ինձ Ադրբեջանին, Ադրբեջանը ներեց Բելառուսիայի պարտքը: Այսինքն՝ ինձ գնել են 400.000-ի դիմաց: Սա լիովին անհեթեթություն է: Ստացվում է, որ Ադրբեջանը տալիս է 400.000 ինչի՞ կամ ու՞մ համար, որ ինչ-որ մեկին հաճու՞յք պատճառեն կամ ինչ-որ մեկին ներկայացնեն որպես հերո՞ս:

Հարց. Այսինքն՝ արդյունքում ստացվու՞մ է, որ չնայած «ջանքերին», Ալիևը իր գլխին էլ ավելի մե՞ծ փորձանք բերեց:

Պատասխան. Իհարկե՛, վերջինիս քայլը դատապարտել են բոլորը՝ «Ամնեստի Ինթերնեյշընալը», «Հյուման Ռաիթս Վոտչը», այդ թվում ԱՄՆ-ի Պետական Դեպարտամենտը և այլն:

Հարց. Այսինքն՝ նրանք որևէ շոշափելի օգուտ չե՞ն ստացել, եթե հաշվի չառնենք Ալևի իշխանությունն ամրապնդելու փորձը:

Պատասխան. Այո, ես կարծում եմ, որ Ալիևը կարողացավ ինչ-որ չափով ամրապնդել իր իշխանությունը: Չնայած այն հանգամանքի, որ գյուղացիները, ովքեր, բացի «AzTV»-ից ուրիշ հեռուստաալիքներ չեն նայում, տեսնելով ինձ ձեռնաշղթաներով և հատուկ ջոկատայիններով, երևի մտածել են թե ինչպիսի հզոր ղեկավար ունեն:

Հավելեմ, որ Ադրբեջանի ընդդիմադիր ուժերը և մտավորականությունը դատապարտել էին այդ արարքը, նշելով, որ դա

Ադրբեջանի արժանապատվությանն է հարվածում: Նրանք հատկապես նշում էին այն, որ ով է այդ Ալեքսանդրը, որին բերում ենք Ադրբեջանի նախագահական ինքնաթիռով, ինչպես Ադրբեջանի համար պատվավոր հյուրի:

10. **Ինչպե՞ս էիք անցկացնում Ձեր առօրյան ադրբեջանական բանտում:**

Ես իմ բանտարկությունն անցկացրել եմ մեկուսի բանտախցում: Մտածել եմ ամեն ինչի մասին: Իմիջայլոց, Ռուսաստանի գլխավոր հյուպատոսն ինձ այցելության ժամանակ Աստվածաշունչ էր բերել, սակայն Ադրբեջանական բերդում ինձ թույլ չտվեցին կարդալ Աստվածաշունչը:

Հարց. Ինչու՞

Պատասխան. Իրենք ինձ բառացի ասել են. «Կրոնական գրականություն կարելի է ներս տանել, միայն եթե այն Ղուրանն է, քանի որ Ալահից բացի ուրիշ Աստված չկա»:

Հարց. Կարելի՞ է ասել, որ ադրբեջանական բերդում ծայրահեղականության նկրտումներ կան:

Պատասխան. Նրանք ինձ ասացին, որ օրենքը թույլ չի տալիս: Չնայած իմ տուն վերադառնալուն պես ուսումնասիրել եմ ու չեմ գտել նման օրենք:

11. <u>Ի՞նչ եք կարծում կար այնպիսի մի պատճառ, որ առիթ հանդիսացավ Ձեր ծեծի և նպաստեց Ձեր ազատմանը՝: Խնդրում եմ մանրամասնել:</u>

Կարծում եմ, որ նախանշաններ եղել են: Հուլիսին իմ դատավճիռն է հրապարակվել, իսկ իմ ծեծը տեղի է ունեցել սեպտեմբերին:

Երբ իմ դատավճիռը հրապարակեցին, իմ փաստաբանը ինձ այցելեց, բայց այս անգամ ոչ թե հանրային պաշտպանն էր, այլ լավ մասնագետ: Նա հասարակ փաստաբան չէր, նա ղեկավարն է Ադրբեջան-Իսրայել բարեկամական հասարակության, ով համարվում է Աէրոնավթիքս ընկերության գլխավոր տնօրեն (ընկերությունը ադրբեջանական բանակի համար անօդաչու թռչող սարքեր է պատրաստում):

Վերոնշյալ ընկերության ղեկավարն ինձ այցելության ժամանակ ասաց, որ որոշում է կայացվել քեզնից ազատվելու, Ալիևը քեզ 1 կամ 2 ամսվա ընթացքում հետ ուղարկելու մի ճանապարհ կգտնի: Փաստաբանը ինձ ասաց, որ Ալիևը քեզնից ավելի շատ է ցանկանում քեզ հետ ուղարկել: Այնուհետև ասաց, որ կան կոնկրետ մարդիկ ովքեր քո մահն են ցանկանում, իսկ կան ոմանք, ովքեր քեզ ետ են ցանկանում ուղարկել:

Նշեմ, որ այս իմ հանդիպումից մի քանի օր անց ինձ այցելության էին եկել Ռուսաստանի, Իսրայելի դեսպանները, հավելեմ, որ վերջիններս ավելի հաճախ էին ինձ տեսակցում՝ ամսական 1

կամ 2 անգամ: Հերթական այցելության ժամանակ ինձ Ռուսաստանի դեսպանը ասաց, որ կարող եմ ստորագրել էքստրադիցիայի փաստաթուղթը, որի համաձայն ես իմ պատիժը շարունակելու եմ կրել Ռուսաստանում: Ինքս հարց ուղղեցի դեսպանին, որ իրո՞ք, ես պետք է Ռուսաստանում իմ պատիժը կրեմ նրա համար, որ ես այցելել եմ Արցա՞խ: Դուք կատակու՞մ եք: Փաստաբանը ինձ ասաց, որ պետք չէ անհանգստանալ, որ կա որոշակի ֆորմալ գործընթաց[121]: Այս լուրը ինձ շատ ուրախացրեց, սակայն այդ գործընթացի սկսվելը ձգձգվեց: Ավելի ուշ պարզ դարձավ, որ Ադրբեջանը միտք չունի ինձ հանձնելու Ռուսաստանին, նրանք որոշել են ինձ հանձնել Իսրայելին: Ես լավ գիտակցում էի ձգձգման պատճառը՝ նրանք լավ գիտակցում էին, որ երբ ես ազատության մեջ լինեմ, Ադրբեջանին դատի եմ տալու:

Հավելեմ, որ ինձ սպանել փորձելու օրը համընկել էր իմ մայրիկի ծննդյան օրվա հետ:

Ադրբեջանական բերդում ինձ թույլատրել էին զանգել շաբաթը 2 անգամ: Ես նրանց խնդրել էի, որ սեպտեմբերի 10-ին՝ մայրիկիս ծննդյան օրը, ինձ թույլ տան զանգահարել մորս ու բարեմաղթանք ասել: Իսկ Սեպտեմբերի 10-ին մորս ծննդյան տարե-

---

121 Գործընթացը կայանում էր նրանում, որ Լապշինին պատիժ նշանակելուց հետո, նրան տեղափոխելու էին Դաղստանի սահման, հանձնեին Ռուսական քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներին: Այնուհետև, Լապշինը Մախաչկալայում մի քանի օր կանցկացներ բանտում, որից հետո ներման խնդրագիր պետք է գրեր Վլադիմիր Պուտինին, ով էլ 1 շաբաթվա ընթացքում ներում էր շնորհելու:

դարձը շնորհավորելուց հետո՝ հենց այդ նույն օրը երեկոյան, ինձ կախեցին:

Փաստաբանս այդ օրը երեկոյան զանգ տվեց մորս և ասաց, որ նա շատ շտապ գա Բաքու: Հայտնեց, որ ես կախվել եմ, բայց կենդանի եմ մնացել, սակայն գտնվում եմ ծայրահեղ ծանր վիճակում:

Մայրս Բաքու ժամանեց սեպտեմբերի 13-ին:

Շատ ավելի հետաքրքիր էր այն փաստը, որ սեպտեմբերի 10-13-ը ինչ-որ անհասկանալի բան էր կատարվում՝ ինձ սրա մասին պատմել է փաստաբանս ու մայրս:

Առաջին հերթին, ինձ ոչ ոք չէր կարողանում գտնել: Երբ փաստաբանս բանտ եկավ, նրան ասել էին, որ ես քնած եմ: Երբ նա ասել էր, որ ուրիշ տեղեկություն ունի, որ ինձ հետ դեպք է պատահել, նրան ասել էին, որ եղել են առողջական խնդիրներ և որ ինձ ինչ-որ տեղ են տարել: Ինչպես փաստաբանս էր պատմում, ինքը այցելել է Բաքվի բոլոր հիվանդանոցները, դիահերձարանները, բայց իմ մասին ոչ մի բան չի կարողացել իմանալ: Այս ամբողջը ես պատմում եմ իմ փաստաբանից ստացած տեղեկությունների հիման վրա, քանի որ այդ ժամանակ անգիտակից էի և ինքս այդ ամենը չեմ տեսել:

Այնուհետև փաստաբանս պատմում էր, որ սկզբում ինձ տարել են քաղաքից դուրս, ինչ-որ ռազմական հիվանդանոց, որտեղ ինքնազգացողությունս չկարգավորվելու հետևանքով ինձ տե-

դափոխել են Բաքվի կենտրոնական հիվանդանոց: Փաստաբանս նաև պատմում էր, որ հիվանդանոցը ամբողջությամբ հսկվում էր զինված զինվորականների կողմից, ստուգում էին հիվանդանոց ել ու մուտ անողներին:

Այնուհետև, երբ մայրս ժամանեց Բաքու, նշեմ որ մայրս հյուրանոցում սենյակ էր ամրագրել, նրան օդանավակայանում դիմավորեցին Բաքվի ռազմական ոստիկանությունը և ասացին, որ նա չի կարող հյուրանոց գնալ՝ պատճառաբանելով վտանգի առկայությունը: Նրան հատուկ ուղեկցությամբ տեղափոխեցին այն հիվանդանոց, որտեղ ես էի գտնվում:

Հարցազրույցի ավարտը:

***

Նախքան անդրադառնալը Ալեքսանդր Լապշինի հետ կապված դեպքի իրավական վերլուծությանը, հարկ ենք համարում, հակիրճ անդրադարձ կատարել տեղի ունեցածի նախապատմությանը:

Եվ այսպես, Ալեքսանդր Լապշինը 2016թ. դեկտեմբերի 15-ին սոցիալական ցանցի միջոցով հայտնել էր, որ վերջինիս ձերբակալել են Մինսկում՝ Ադրբեջանի պահանջով: Ձերբակալման պահանջի հիմքում դրված էր 2 փաստական հիմք՝

1. 2015թ. Ալեքսանդրը Ադրբեջան այցելելով օգտվել էր իր ուկրաինական անձնագրից, որտեղ Ալեքսանդրի անվան առաջին տառը գրված էր եղել «Օ» տառով՝ Օլեքսանդր,
2. Ալեքսանդրին ձերբակալելու պահանջի հիմքում դրված է եղել մեկ այլ փաստական հիմք, այն է՝ որ վերջինս առանց Ադրբեջանից համապատասխան թույլտվություն ստանալու այցելել է Ղարաբաղ:

Սույն գլխում նպատակ ենք հետապնդում վերլուծելու Ալեքսանդր Լապշինի նկատմամբ կիրառված բռնությունը, ինչպես նաև վեր հանելու այն կոպիտ իրավական խախտումները, որոնք թույլ է տվել Ադրբեջանը:

Ալեքսանդր Լապշինի դեպքի հետ կապված ուսումնասիրել ենք Ադրբեջանի Սահմանադրությունը, «Ադրբեջանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը[122], ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթեր, մասնավորապես Միջազգային դաշնագիրը քաղաքացիական և քաղաքական իրավունքներ[123] մասին և Ընդդեմ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի[124] մասին կոնվենցիան: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ մի շարք իրա-

[122] “Уголовно-процессуальный кодекс Азербайджанской Республики”, 2000.
[123] “Международный пакт о гражданских и политических правах”, 1966.
[124] “Конвенция против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения и наказания”, 1984.

վական նորմեր է խախտվել, մասնավորապես Ադրբեջանի Սահմանադրության 46-րդ՝ պատվի և արժանապատվությունը պաշտպանելու իրավունքը, 61-րդ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը և 147-րդը՝ Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության իրավաբանական ուժի մասին հոդվածները: Իսկ Ադրբեջանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքից խախտվել է հոդված 13-ը՝ անձի պատվի և արժանապատվությունը հարգելը և հոդված 92-ը՝ պաշտպանը: Ադրբեջանի կողմից միջազգային պարտավորությունների կոպիտ խախտումների ուսումնասիրման տեսանկյունից հարկ ենք համարում անդրադառնալ Միջազգային քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրին, հատկապես հոդված 7-ին և 10-ին: Ինչպես նաև տեղին է նշել ընդդեմ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի մասին կոնվենցիայի հոդվածներ 14-ի և 16-ի խախտման փաստերը:

Խոսելով այն մասին, որ ադրբեջանական բանտում Ալեքսանդրը ենթարկվել է դաժան ծեծի, ինչի արդյունքում կոտրվել է նրա կողոսկրը, այնուհետև նրան կախելու փորձ է արվել՝ հարկ ենք համարում իրավական գնահատականի ձևակերպումը սկսել Ադրբեջանի մայր օրենքից՝ Սահմանադրությունից:

Եվ այսպես, կփորձենք Ձեզ ներկայացնել մի շարք փաստական հանգամանքներ, որոնք վերաբերում են Ալեքսանդր Լապ-

շինին խոշտանգումներին և տանջանքների ենթարկելուն, մասնավորապես կողոսկորը կոտրելու և անձին անհաջող կախելու փորձին: Ադրբեջանի Սահմանադրության 46-րդ հոդվածի «III» կետը հստակ արձանագրում է, որ ոչ ոք իրավունք չունի ենթարկվելու կտտանքների և խոշտանգումների: Ոչ ոք չի կարող ենթարկվել այնպիսի վերաբերմունքի և պատժի, որը նվաստացնում է մարդու արժանապատվությունը: Ոչ մեկի նկատմամբ առանց վերջինիս ինքնակամ համաձայնության չի կարող իրականացվել բժշկական, գիտական և այլ փորձեր:

Միևնույն միջադեպի առումով Ադրբեջանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքից առանձնացրել ենք հոդված 13-ի «13.1» կետը: Այս իրավական նորմում ասվում է, որ արգելվում է այնպիսի որոշումների կայացումը և գործողությունների ընդունումը քրեական գործի շրջանակներում, որոնք վիրավորում են մարդու պատիվն ու արժանապատվությունը, նվաստացնում կամ վիրավորում են անձին կամ կարող են վտանգի տակ դնել անձի կյանքը և առողջությունը:

Ուշադրության է արժանի նաև Միջազգային քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը, որտեղ հոդված 7-ում նշվում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ էլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Իսկ սույն դաշնագրի 10-րդ հոդվածի «1»-ին կետում մատնանշվում

է, որ ազատազրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք:

Հավելենք, որ այս դաշնագիրը առանցքային դեր է կատարում Ադրբեջանի դեպքում, նախ այն պարզ պատճառով, որ Ադրբեջանը ընդունել և վավերացրել է այս միջազգային փաստաթուղթը, այնուհետև, այս փաստաթուղթը հիմքն է այն բոլոր ներօրենսդրական նորմերի, որոնք նշվել են սույն գլխի իրավաբանական փաստերի հիմքում:

Ալեքսանդր Լապշինի դեպքում առանցքային դեր է խաղում նաև մեկ այլ միջազգային փաստաթուղթ՝ Ընդդեմ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի մասին կոնվենցիան: Այս կոնվենցիայից առանձնացրել ենք հոդված 14-ի «1»-ին կետը, որը յուրաքանչյուր մասնակից պետության իրավական համակարգում ապահովում է խոշտանգմանը զոհը դարձած անձանց համար համապատասխան մեխանիզմը, որոնք կստանան փոխհատուցում և կունենան հարկադրանքի միջոցով ապահովվող արդարացի և համարժեք փոխհատուցման իրավունք, ներառյալ՝ հնարավորինս լիակատար արդարացման (ռեաբիլիտացման) միջոցները: Խոշտանգումների պատճառով զոհի մահվան դեպքում փոխհատուցման իրավունքը վերապահվում է նրա խնամառուներին: Իսկ միևնույն կոնվենցիայի 16-րդ հոդվածի

«16.1»-րդ կետում նշվում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր իրավազորության ներքո գտնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձևերը, որոնք չեն դասվում 1-ին հոդվածում որպես խոշտանգում սահմանվածների շարքը, երբ այդպիսի գործողությունները կատարվում են պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող մեկ այլ անձի կողմից, կամ նրանց հրահրմամբ, կամ նրանց գիտությամբ կամ լուռ համաձայնությամբ: Մասնավորապես, 10, 11, 12 և 13-րդ հոդվածներում նշված պարտավորությունները կիրառվում են՝ խոշտանգման մասին հիշատակությունը փոխարինելով դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի մասին հիշատակմամբ:

Եթե փորձենք ամփոփել վերը նշված իրավական նորմերը, ապա ստացվում է, որ Ալեքսանդր Լապշինը ադրբեջանական բանտում ենթարկվել է խոշտանգման և կտտանքների:

Վերոնշյալը վերահաստատելու առումով Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ փաստերին.

- Լապշինը գտնվում էր մեկուսարանում և զրկված էր արտաքին աշխարհից, այդ թվում բանտում իրենց պատիժը կրող այլ անձանց հետ որևէ կապ ունենալուց: Ակնհայտ է, որ Լապշինի խուց մտնել բոլորը չէ, որ կարող էին: Ելնելով այն հանգամանքից, որ Ալեքսանդրին ենթարկել են դաժան ծե-

ծի, որից հետո նրան կախել են՝ հաստատում է այն փաստը, որ Լապշինի մեկուսարան մուտք գործելու համար՝ այն էլ ծեծելու համար, հարկավոր էր ինչ-որ բարձրաստիճան անձի թույլտվությունը: Սրա վառ ապացույցը այն է, որ բանտում բոլոր դռները կողպվում են, ազատ տեղաշարժը խիստ սահմանափակված է, բոլոր ազատազրկվածները գտնվում են համապատասխան հսկողություն տակ: Ուստի կարելի է նաև մերժել այն վարկածը, որ այդ քայլը կարող է դատապարտյալներից մի քանիսը կատարած լինեին: Սա վկայում է այն մասին, որ Լապշինի ծեծը կազմակերպված է եղել, ինչպես նաև կարելի է պնդել, որ գոյություն ունեն համապատասխան ցուցում տվողներ, ում կողմից հանձնարարություն էր տրվել՝ հաշվեհարդար տեսնել Լապշինից:

- Լապշինը Ադրբեջանի կողմից մինչ օրս չի ստացել ոչ մի փոխհատուցում: «Ընդդեմ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի» մասին կոնվենցիան, որը ստորագրվել և վավերացվել է նաև Ադրբեջանի կողմից, հիմքն է հանդիսանում այն իրավական պահանջի, որը ապահովում է փոխհատուցում ստանալը:
- Եվ ինչպես նշված է Ադրբեջանի Սահմանադրության 147-րդ հոդվածում, այն որ Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրությունը Ադրբեջանում ունի բարձրագույն ի-

բավարարական ուժ, ապացուցում է այն, որ ադրբեջանական իշխանությունն անտեսում և սեփական հայեցողության սկզբունքով է կիրառում Սահմանադրությունը:

Ադրբեջանի իշխանությունն անտեսելով Ադրբեջանի Սահմանադրությունը, կասկածի տակ է դնում պետությանը և երկրում ապրող բնակչության անվտանգությունը և բարեկեցությունը: Ինչպես նաև նպաստում վախի մթնոլորտի ձևավորմանը և տարածմանը:

Սույն իրավական վերլուծության մեջ ցանկանում ենք նաև անդրադարձ կատարել Ալեքսանդր Լապշինին հանրային պաշտպանի տրամադրմանը և դրան հարակից այլ հարցերին:

Հարցազրույցի ժամանակ պարզ դարձավ, որ Լապշինին զրկել են փաստաբան ընտրելու իրավունքից: Ինչպես Լապշինն է նշում իսրայելական կողմը նրան Ադրբեջան հասնելուն պես ապահովել էր իրավաբանով, սակայն, ադրբեջանական կողմը հերքում էր այդ փաստը:

Օգտվելով այն հանգամանքից, որ Լապշինը տվյալ պահին կտրված էր արտաքին աշխարհի հետ շփումից՝ Ադրբեջանը, որպես Լապշինի իրավապաշտպան Լապշինին տրամադրել էր հանրային պաշտպան: Համապատասխան Ադրբեջանի Սահմանադրության հոդված 61-ի «I»-ին կետի, այն է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ստանալու որակավորված իրավաբանական օգնություն: Ինչպես նաև, հիմնվելով, Ադրբեջանի քրեա-

կան դատավարության օրենսգրքի հոդված 92-ի «92.11.1» կետի վրա՝ այն է, որ պաշտպանը, խոսքը իրավաբանի մասին է, պետք է մասնակցի քրեական դատավարությանը, առաջնորդվի օրենքի պահանջներով՝ պաշտպանի կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը բոլոր օրինական միջոցներով: Այդ թվում, պաշտպանը պետք է մեղադրյալին տրամադրի համապատասխան իրավաբանական օգնություն և այլն:

Փաստացի ստացվում է հետևյալը՝

1. Լապշինին զրկել են փաստաբան ընտրելու իրավունքից, այսինքն, ստելով այն բանում, որ ոչ ոք չի դիմել Լապշինի շահերը պաշտպանելու հարցով: Արդյունքում ադրբեջանական իշխանությունը հրամցրել է հանրային պաշտպանի:

Սա նաև եղել է քաղաքական պատվեր, այսինքն Լապշինին միտումնավոր տրամադրել են այնպիսի պաշտպան, որը, ըստ իր՝ Լապշինի, պատմածի ձևականորեն էր մասնակցում հարցաքննություններին՝ քնում էր հարցաքննությունների ժամանակ: Ակնհայտ է, որ այս քայլը ուներ մեկ նպատակ՝ գործը տանել այնպես, ինչպես Ադրբեջանն էր ցանկանում:

2. Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև Լապշինի պաշտպանի՝ որպես իր պարտականություններում թերացողի և քաղաքական պատվեր կատարող անձի: Այն որ իրավաբանը պետք է պաշտպանի կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը բոլոր օրինական միջոցնե-

ռով, ինչպես նաև պետք է մեղադրյալին տրամադրի համապատասխան իրավաբանական օգնություն՝ դա փաստ է: Այդ փաստը ամրագրված է Ադրբեջանի քրեական դատավարության օրենսգրքում, որը սերվում է Ադրբեջանի մայր օրենքից՝ Սահմանադրությունից:

Հանրային պաշտպանի քնելը հարցաքննությունների ժամանակ ուղղակի անթույլատրելի է: Նման բարձիթողի վիճակը ոտնահարում է Լապշինի որպես մեղադրյալի իրավունքները՝ որպես հետևանք այն նպաստում է անարդար և կողմնակալ հարցաքննությունների իրականացմանը:

Եվ այսպես, ամփոփելով կարող ենք հստակ արձանագրել, որ Ադրբեջանի իշխանությունը հավատարիմ մնալով իր հայատյացության սկզբունքին՝ անօրինականություններ է իրականացնում՝ օտար, 3-րդ պետության քաղաքացի համարվող, այլազգի անձի նկատմամբ: Ավելին, հայատյացությունը գլխավոր լոզունգ օգտագործելով՝ Ադրբեջանը ջանում է ահաբեկմամբ, ճանաչում ունեցող անձանց ձերբակալելով, մահափորձի մեթոդով սպառնալ, ինչու չէ նաև ահաբեկել բոլոր նրանց ովքեր հայանպաստ քայլեր կիրականացնեն կամ ուղղակի կայցելեն Հայաստան կամ Արցախ:

ԳԼՈՒԽ 4. ՌԵԱԼ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

4.1 ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՌԵԱԼ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տարածության մեջ քրեական օրենքի գործողությունը հիմնվում է այնպիսի կարևոր պայմանի վրա, ինչպիսին ցանկացած պետության արդարադատության մարմինների կողմից վերջինիս իրավական կիրառման ապահովումն է:

Տարածության մեջ քրեական օրենքի գործողության հիմք են հանդիսանում մի շարք սկզբունքներ, որոնք էական դեր են կատարում ստույգ պետության տարածքում և դրա տարածքից դուրս կատարված հանցագործությունների բացահայտման և հանցագործությունները կատարած անձանց նկատմամբ պատիժ կիրառելու համար: Դրանք տարածքային, քաղաքացիության, ունիվերսալ և ռեալ սկզբունքներն են:

Վերոնշյալ սկզբունքներից հիմնական է համարվում տարածքայինը:

Տարածության մեջ քրեական օրենքի գործողությունը ենթադրում է տարածք, որը պատկանում է կոնկրետ պետությանը, և

որ այդ տարածքի վրա իրականացվում է տարածքային գերիշխանություն: Պետության տարածք է համարվում նաև ոչ ցամաքային մասը, ցամաքի վրա կամ դրա տակ գտնվող ջրերը, ընդերքը, ցամաքային մասի և ջրերի վրայի օդային տարածքը, ինչպես նաև պետության մայրցամաքային մասը, պետության սահմաններում գտնվող կղզիները, ներքին և տարածքային ջրերը:

Բացի վերը նշվածից, գոյություն ունեն նաև այնպիսի օբյեկտներ, որոնք հավասարեցվում են պետության տարածքի հետ: Դրանք նախ և առաջ պետության նավերն ու օդանավերն են, այդ թվում քաղաքացիական նավերն ու օդանավերը, սակայն վերջիններիս իրավական ռեժիմը տարբերվում է ռազմական օբյեկտներից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարածության մեջ քրեական օրենքի գործողությունը վերաբերում է այն հանցագործություններին, որոնք կատարվել են որևէ պետությունում՝ օտարերկրացու կողմից, կամ այն դեպքերին, երբ տվյալ հանցագործությունը սկսվել է մեկ պետությունում, շարունակվել՝ մյուսում, իսկ ավարտվել՝ երրորդ պետության տարածքում: Ավելին՝ տարածության մեջ քրեական օրենքի գործողության խնդիրն առաջանում է նաև այն դեպքում, երբ որևէ պետության դրոշի տակ գտնվող կամ որևէ պետության տարբերանշանը կրող նավի կամ թռիչքում գտնվող օդանավի կամ օդային այլ սարքի վրա հանցագործություն է կատարվում: Նման իրավիճա-

կում, տվյալ տարածքներում հանցանք կատարած անձը կամ անձինք, անկախ նրանց գտնվելու վայրից, ենթակա են պատասխանատվության տվյալ պետության քրեական օրենսգրքով: Սակայն առանձին դեպքերում, երբ միջազգային պայմանագրով այլ բան է նախատեսված լինում, արարքը ենթակա է պատասխանատվության՝ համաձայն այն իրավական դրույթների, որոնք ամրագրված են միջազգային պայմանագրում:

Տարածության մեջ քրեական օրենքի գործողության սկզբունքներն ու իրավակարգավորումները բխում են միջազգային իրավական մի շարք փաստաթղթերից, մասնավորապես՝

- ՄԱԿ-ի «Ծովային իրավունքի մասին» 1982թ. կոնվենցիայից,
- Տոկիոյի 1963թ. «Օդանավի վրա կատարվող հանցագործությունների և մի շարք այլ գործողությունների մասին» կոնվենցիայից,
- Ժնևի 1958թ. «Տարածքային ծովի և հարող գոտու մասին» կոնվենցիայից և այլ իրավական փաստաթղթերից:

Չնայած այն հանգամանքին, որ միջազգային իրավական փաստաթղթերը պարունակում են հստակ իրավական պարտավորություններ՝ այնուամենայնիվ, գոյություն ունեն մի շարք բացառություններ, որոնք հնարավորություն են տալիս այլ պետություններին հանցագործության կատարման դեպքում, երբ հանցագործն այլ պետության քաղաքացի է, կիրառել սեփական

ներպետական օրենսդրությունը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Տոկիոյի 1963թ. «Օդանավի վրա կատարվող հանցագործությունների մի շարք այլ գործողությունների մասին» կոնվենցիային, որտեղ ամրագրված են հետևյալ բացառությունները.

«1. Եթե հանցագործության հետևանքները տարածվում են տվյալ պետության տարածքի վրա:

2. Եթե հանցանքը կատարվել է տվյալ պետության քաղաքացու կողմից կամ նրա դեմ, կամ տվյալ պետությունում մշտապես բնակվող անձի կողմից, կամ նրա դեմ:

3. Եթե հանցագործությունն ուղղված է այդ պետության անվտանգության դեմ:

4. Եթե հանցագործությունը կապված է տվյալ պետությունում թռիչքների համար սահմանված կարգի խախտումների հետ,

5. Եթե տվյալ պետության միջամտությունն անհրաժեշտ է իր միջազգային բազմակողմ համաձայնագրերից բխող պարտականությունները կատարելու համար[125]»:

Այսպիսով՝ տարածության մեջ, քրեական օրենքի գործողության տարածքային սկզբունքի էությունն այն է, որ կիրառվում է այն քրեական օրենքը, որտեղ կատարվել է հանցագործությունը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանցագործության կատարման վայրի հասկացությունն իրավաբանական գրականության մեջ միանշանակ ընկալում չունի, պետք է փաստել,

[125] Ղազինյան Գ. Ս., «ՀՀ քրեական իրավունք», Ընդհանուր մաս, 2011, էջ 61:

որ հանցագործության վայրի որոշումը կարևոր գործնական նշանակություն ունի, քանի որ վերջինից է կախված այն, թե տվյալ հանցագործության պատժի սահմանումը, որ պետության օրենսդրական համակարգով է կարգավորվելու:

Տարածության մեջ քրեական օրենքի գործողությունը էական նշանակություն ունի յուրաքանչյուր պետության համար, որը հնարավորություն է ընձեռում պետությանը պատասխանատվության ենթարկել այն հանցագործներին, որոնց գործունեության կամ անգործության հետևանքով առաջացել են անցանկալի հետևանքներ:

Չնայած այն հանգամանքին, որ իրավական նորմերը ստեղծվել են հակազդելու հակաօրինականություններին և կանխելու դրանց տարածումը, հարկ է նշել, որ ժամանակակից աշխարհում կան որոշ պետություններ, որոնք ոչ միայն անտեսում են սեփական ներպետական օրենսդրական համակարգի կիրառելիությունն, այլև անհետևողական են ձեռք բերված միջազգային պայմանավորվածությունների կատարման հարցում:

Նման դեպքերից առավել հայտնի է Հունգարիայի Հանրապետության կողմից Ադրբեջանին արտահանձնված ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովի դեպքը:

Այդ համատեքստում կարևոր է ուսումնասիրել այն քրեաիրավական մեխանիզմները, որոնք թույլ են տալիս նման ոճրագործություններից տուժած պետություններին ապահովել հան-

ցագործների նկատմամբ քրեական արդարադատության լիարժեք իրականացումը:

Տարածության մեջ քրեական օրենքի գործողության ռեալ սկզբունքը քրեական իրավունքում համեմատաբար նոր հասկացություն է:

Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում այն սկսել է գործել 1996 թվականից[126]: Իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում՝ 2003 թվականից:

Հայտնի են ռեալ սկզբունքի տարբեր բնորոշումներ:

Օրինակ, Ա. Ռոժդեստվինայի բնորոշմամբ՝ տարածության մեջ քրեական օրենքի գործողության ռեալ սկզբունքի էությունը կայանում է ցանկացած անձին, այդ թվում՝ օտարերկրացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին տվյալ երկրի օրենքով քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորության մեջ՝ այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են այլ պետության տարածքում, եթե դրանք ուղղված են տվյալ (այսինքն՝ պատասխանատվության ենթարկող) պետության շահերի դեմ[127]:

Նրա հետ համակարծիք են Ն. Կուզնեցովան և Ի. Տյաժկովան, ովքեր տարածության մեջ ռեալ սկզբունքի գործողության էութ-

---

[126] http://west-ur.ru/yurist-besplatno/ugolovnoe-delo/realnyij-princzip-v-ugolovnom-prave.htm, “Реальный принцип в уголовном праве”, 01.03.2018.

[127] Рождествина А.А.,“Уголовное право”, Москва, 2010г.

յունը նկարագրում են այսպես. «…օտարերկրյա քաղաքացիները (հպատակները) և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք մշտապես չեն բնակվում տվյալ պետությունում, արտերկրում հանցանք կատարելիս պատասխանատվություն են կրում տվյալ պետության քրեական օրենսգրքով, եթե այդ հանցանքներն ուղղված են տվյալ պետության շահերի դեմ և, եթե նրանք չեն դատապարտվել օտարերկրյա պետությունում և քրեական պատասխանատվության են ենթարկվում տվյալ պետության տարածքում»[128]:

Ռուսաստանցի մյուս հեղինակներից Վ. Ստեպաշինը և Օ. Բիբիկը, մեջբերելով տարածության մեջ ռեալ սկզբունքի գործողության կանոնները սահմանող Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը, նշում են, որ ռեալ սկզբունքի կիրառումը կարող է պահանջվել արտերկրում օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՌԴ կամ նրա քաղաքացիների դեմ ուղղված այնպիսի հանցանքների կատարման դեպքում, ինչպիսիք են, օրինակ՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, սեփականության, հասարակական կարգի և անվտանգության,

---

128 https://jurisprudence. club/ugolovnoe-pravo-uchebnik/deystvie-ugolovnogo-zakona.html, Кузнецова Н. Ф., Тяжкова И. М.,“Курс уголовного права в пяти томах. Том 1. Общая часть: Учение о преступлении”. Действие уголовного закона в пространстве, 01.03.2018.

շրջակա միջավայրի, սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցանքները[129]:

Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ տարածության մեջ քրեական օրենքի գործողությունը կարևոր օղակ է պետության ներպետական օրենսդրական համակարգում: Այն հնարավորություն է ընձեռում համապատասխան մարմիններին ապահովել ոչ միայն արդյունավետ օրենսդրական կարգավորում՝ անկախ հանցանքի կատարման տարածությունից և դրա տեսակից, այլև մեծ ներդրում ունի մարդու իրավունքների պաշտպանության և հավասարության սկզբունքի կիրառության հարցում: Իսկ տարածության մեջ քրեական օրենքի գործողության ապահովման հարցում ռեալ սկզբունքն ունի լուրջ գործնական դերակատարություն:

---

129 https://cyberleninka.ru/article/v/deystvie-ugolovnogo-zakona-v-prostranstve, Степашин В. Н., Бибик О. Н.,“Действие уголовного закона в пространстве”, Вестник Омского университета, серия “Право», 2009г., №1 (18), С. 72-79, 01.03.2018.

4.2 ՌԵԱԼ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ամրագրված լինելով ՀՀ «Քրեական օրենսգրքի» 15-րդ հոդվածով՝ ռեալ սկզբունքը կարգավորում է օտարերկրյա քաղաքացիների և Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց կողմից կատարվող հանցագործությունների պատժելիության հարցը՝ սահմանելով քրեական օրենքի գործողության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված հանցանքների նկատմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝օտարերկրյա քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր հանցանքը կատարել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանք կատարել են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով, այդ թվում, այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ, որոնք ուղղված են Հայաստանի Հանրապետության շահերի կամ Հայաստանի Հանրապետութ-

յան քաղաքացիների իրավունքների և ազատությունների դեմ: Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի վերը նշված հոդվածը իրավական հնարավորություն է տալիս պատժել ՀՀ շահերի կամ ՀՀ քաղաքացու իրավունքների և ազատությունների դեմ ծանր կամ առանձնապես ծանր հանցավոր ոտնձգություն կատարած անձանց, անկախ հանցագործության վայրից, եթե իհարկե հանցագործը ինչ-ինչ պատճառներով խուսափել է պատասխանատվությունից: Հոդվածի բովանդակությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները կարող են պահանջել, որպեսզի արդարությունը վերականգնելու, պատժի անխուսափելիությունն ապահովելու և ՀՀ քաղաքացու խախտված իրավունքների ու ազատությունների համար վնասի հատուցումն ապահովելու նպատակով տվյալ հանցագործը հանձնվի և իր պատիժը կրի ՀՀ-ում: Իսկ, եթե, դա որևէ ձևով հնարավոր չէ, ապա ինքնուրույն միջոցներ ձեռնարկել կասկածյալին կամ մեղադրյալին ՀՀ տարածքում քրեական պատասխանատվության կանչելու ուղղությամբ:

Ցավոք, ժամանակակից աշխարհում դեռևս կան այնպիսի պետություններ, որոնց քաղաքականությունը հիմնված է ագրեսիայի, վախի, այլատյացության և թշնամական մթնոլորտի պահպանման վրա: Այդպիսի պետությունները միջազգային հանրության այն թույլ օղակն են, որը, կասկածի տակ դնելով մարդու իրավունքները և ազատությունները, մասնավորապես

իրավահավասարության սկզբունքը, նպաստում են ծանր կամ առանձնապես ծանր հանցավոր ոտնձգությունների տարածմանը և կրկնությանը: Նման վառ օրինակներից են Ադրբեջանում անմարդկային դրսևորումները և հայատյացության քարոզը, մասնավորապես, ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովի հերոսացումը, ով ոչ միայն արդարացվեց, այլև արժանացավ պարգևների միայն այն բանի համար, որ քնած ժամանակ կացնով գլխատել էր հայ սպա Գուրգեն Մարգարյանին: Չնայած Հունգարիայի և Ադրբեջանի միջև ձեռք բերված պայմանավորվածությանը՝ Ռ. Սաֆարովը միչև օրս ազատության մեջ լինելով, վտանգի տակ դնելով համամարդկային արժեքները, նպաստում է նման անօրինականությունների կրկնման հավանականությանը:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ, համաձայն ռեալ սկզբունքի կիրառելիության պայմանների՝ ՀՀ իշխանությունն ունի ավելի քան բավարար փաստական և իրավական հիմքեր՝ պահանջելու, որ Ռամիլ Սաֆարովն իր պատիժը շարունակի կրել ՀՀ-ում: Այստեղ հարկ է առանձնացնել ռեալ սկզբունքի հետևյալ պայմանը, որն ապահովում է Սաֆարովին Հայաստանին հանձնելու պահանջը. «Հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվության չի ենթարկվել հանցանքը

կատարելու վայրի օրենքով[130]»: Այսինքն՝ ստացվում է, որ Սաֆարովը, իր կատարած հանցագործության համար պատիժ չկրելով, լիովին ապահովում է ռեալ սկզբունքի պայմանի իրագործումը: Սակայն, հաշվի առնելով այն, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև չկան դիվանագիտական հարաբերություններ, առկա է փաստացի զինադադարի վիճակ, Ադրբեջանը Հայաստանին չի հանձնի Սաֆարովին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սաֆարովը կարող է իր պատիժը կրել Հայաստանում, օրինակ, այն դեպքում, երբ օդանավը, որի մեջ նա գտնվում է, թռչելով ՀՀ օդային տարածքով, ինչ-ինչ պատճառներով վայրեջք կատարի, և ՀՀ իրավապահ մարմինները, իրացնելով իրենց իրավունքը, ձերբակալեն Սաֆարովին:

Փաստելով վերոնշյալը՝ հարկ է անդրադառնալ այն դեպքերին, երբ գործում է ռեալ սկզբունքը, սակայն որոշակի պայմանների առկայությամբ հանցագործը կարող է չհանձնվել այն պետությանը, որի շահերի դեմ նա ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է կատարել կամ այդպիսի ոտնձգություն է կատարել նրա քաղաքացու իրավունքների ու ազատությունների դեմ: ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 3-րդ կետում, որը վերաբերում է հանցանք կատարած անձանց հանձնելուն, նշվում է, որ հանցանք կատարած անձին հանձնելու պահանջը կարող է մերժվել, եթե

130 Ղազինյան Գ. Ս., նշվ. Աշխ., էջ 70:

հանձնվող պետությունում լուրջ վտանգի տակ կարող է հայտնվել հանցագործը, ինչպես օրինակ՝ նրան խոշտանգումների, կամ անմարդկային, կամ նվաստացուցիչ վերաբերմունքի, կամ մահապատժի ենթարկելն է: Սակայն, նույն հոդվածի 4-րդ կետում նշվում է, որ հանցագործին կհանձնեն պահանջող պետությանը այն դեպքում, եթե պահանջող կողմը պահանջ ստացող կողմին բավարար երաշխիքներ ներկայացնի, որ հանցագործը չի արժանանա մահվան դատավճռի կամ այլ դաժան վերաբերմունքի:

Ներկայացնելով ռեալ սկզբունքի արտացոլումը ՀՀ քրեական օրենսդրության մեջ՝ հարկ է անդրադառնալ այն հանցագործություններին, որոնք ուղղված են ՀՀ շահերի դեմ: Այդ հանցագործությունները կարող են արտահայտված լինել տարբեր ձևերով, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 313-ով նկարագրված «Կաշառքի միջնորդության» կամ հոդված 200-ով նկարագրված «Առևտրային կաշառք»-ով:

ՀՀ շահերի դեմ ուղղված հանցագործությունները տարբեր են թե՛ իրենց դրսևորմամբ և թե՛ որակմամբ: Առավել տարածված ձևերից է կաշառքի միջնորդությունը, որը հիմնականում արտահայտվում է հակահայկական բանաձևերի, որոշումների կամ հայտարարությունների ընդունմամբ: Գաղտնիք չէ, որ ժամանակակից աշխարհում Հայաստանի շահերի դեմ Ադրբեջանի կողմից իրականացվող ագրեսիվ քաղաքականությունը, որն արտահայտվում է «խավիարային դիվանագիտություն» կոչված կաշառակերության

ձևով, ազդում է այս կամ այն միջազգային կառույցների որոշումների վրա՝ ընդունելով այնպիսի բանաձևեր, որոնք վնաս են հասցնում Հայաստանի միջազգային շահերին: Նման վառ օրինակներից է ԵԽԽՎ-ի նախկին նախագահ Պեդրո Ագրամուտի դեպքը, ով մեղադրվում էր Ադրբեջանից կաշառք վերցնելու և Ադրբեջանի քաղաքական շահերին ծառայելու մեջ, այդ թվում, Եվրախորհրդում միլիոնավոր դոլարների կանխիկ գումարների ներգրավմամբ, որը տրվել էր նրա որոշ անդամներին՝ Ադրբեջանին քննադատող որոշումները տապալելու կամ Արցախի վերաբերյալ աննպաստ զեկույցներին աջակցելու դիմաց:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսդրության մեջ ռեալ սկզբունքի արտացոլմանը՝ պետք է նշել, որ կաշառակերությունը համարվում է այն կարևոր պայմաններից մեկը, որի առկայության և ապացուցման դեպքում Հայաստանի Հանրապետությունը կարող է պահանջել, որպեսզի ՀՀ-ի շահերի հանդեպ հանցանք կատարած անձանց արտահանձնեն ՀՀ՝ պատիժը ՀՀ-ում կրելու պահանջով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, չնայած միջազգային և ներպետական իրավունքի նորմերին, որոնք կոչված են ապահովելու այնպիսի հանցագործությունների պատժելիությունը, որոնք ուղղված են որևէ պետության շահերի կամ քաղաքացիների դեմ, գոյություն ունեն պետություններ, ինչպիսին օրինակ՝ Ադրբեջանն է, որոնք նպաստում են երկրների միջև

անվստահության խորացմանը և ջանում, իրավախախտումներ կատարելով, սադրել միջազգային բարդություններ: Բացի այդ, երբեմն առկա ծանր տնտեսական, քաղաքական, սոցիալական իրավիճակները որոշ պետությունների համար ստեղծում են նպաստավոր պայմաններ, որտեղ, հանուն ինչ-որ անձնական կամ հատվածական շահի, խախտվում է ոչ միայն պետության ներպետական օրենսդրությունը, այլև միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորությունները:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոնշյալը, կարելի է եզրակացնել, որ ՀՀ քրեական օրենսդրության մեջ ռեալ սկզբունքի արտացոլումը, չնայած իրավական տեսանկյունից լիարժեքությանը, իրականության մեջ միշտ չէ, որ ամբողջությամբ կիրառելի է: Դա կապված է ոչ թե Հայաստանի Հանրապետության դատահիրավական համակարգի անկարողության, այլ իրագործման անհնարինության հետ: Նման պարզ օրինակներից է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի միջև առկա հարաբերությունների պայմաններում հայատյացության դրսևորումների պատժելիության ապահովման հարցը: Այստեղ առաջին հերթին Ադրբեջանի նկատմամբ գոյություն ունեցող անվստահության մթնոլորտն է, որը առաջացել է ոչ թե Հայաստանի գործունեության կամ անգործության պատճառով, այլ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության և միջազգային պարտավորությունների խախտման հետևանքով:

4.3 ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՌԵԱԼ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ադրբեջանում հային որպես արտաքին թշնամի ներկայացնելը և նրան ոչնչացնելու ձգտման սերմանումն օգտագործվում է այդ երկրում իշխանության երկարակեցության ապահովման համար և ոգեշնչման հիմք հանդիսանում Հայաստանի Հանրապետության, Արցախի և ամբողջ հայության դեմ նոր հանցագործությունների իրականացման համար: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանի իշխանությունը իրականացնում է հայատյացության քաղաքականություն հնարավոր բոլոր ուղիներով, մասնավորապես ռազմական հարթակում իրականացվող հայաոչնչացման քարոզով, որն արդեն 2016թ. ապրիլին արտահայտվեց Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիվ պատերազմով, ինչպես նաև սեփական ժողովրդին որպես կենդանի վահան օգտագործելով:

Որոշ մասնագետների համոզմունքով ապրիլյան քառօրյա պատերազմը կապված էր Ադրբեջանի իշխանության կողմից փողերի լվացման միջազգային սկանդալի հետ և դրա նպատակն էր շեղել Ադրբեջանի հասարակության ուշադրությունը պետական մարմինների կողմից իրականացված անօրինականություններից, իսկ մյուսների կարծիքով պատերազմը ձեռնտու

էր Ադրբեջանի իշխանությանը՝ երկրում տիրող ներքին սոցիալ-տնտեսական ծանր վիճակով պայմանավորված խնդիրները, մասնավորապես աղքատության մակարդակի կտրուկ աճը հնարավորինս թաքցնելու համար:

Հայատյացության բացառիկ դեպքերից են նաև Ադրբեջանում պարբերաբար խաղաղության կոչերով հանդես եկող անձանց հետապնդելու և հաշվեհարդար տեսնելու դեպքերը, ինչպիսին օրինակ Լեյլա և Արիֆ ամուսինների, Աքրամ Այլիսլիի և այլոց հետապնդումներն են:

Անդրադառնալով ապրիլյան քառօրյա պատերազմին՝ նախ հարկ է ուսումնասիրել այնպիսի հանցագործությունները, որոնք կապահովեն Ադրբեջանում հայատյացության քրեաիրավական գնահատականի արժանի մեկնաբանումը և ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված ռեալ սկզբունքի հնարավոր իրավական ուղիների կիրառումը:

Այսպիսով՝ 2016թ. ապիլի 2-ին, Ադրբեջանը նախահարձակ լինելով Արցախի Հանրապետության սահմանի շփման գծին, օգտագործելով SOU-1Ա «Սոլնցեպյոկ» ծանր հրանետային համալիր, «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ, 152մմ հրանոթներ, ՄԻ-24 գրոհային ուղղաթիռներ, տանկեր և այլ ռազմական տեխնիկա, փորձ կատարեց ագրեսիվ պատերազմ վարելու միջոցով, կարճ ժամկետում տարածքային առավելություն գրանցել: Սակայն ադրբեջանական զինուժն, էա-

կան հաջողություն չգրանցելով, կատարեց հայատյացությամբ արտահայտված հանցագործություններ՝ խոսքը բախման արդյունքում Ադրբեջանի կողմից սպանված Արցախի խաղաղ մի քանի բնակիչների՝ Արցախի Մարտունու շրջանի Զորավան գյուղում զոհված 12-ամյա Վաղինակ Թաթուլի Գրիգորյանի, ևս երկու երեխայի վիրավորվելու դեպքերի մասին է[131]: Ավելին, քառօրյա պատերազմի ժամանակ Թալիշում սպանվեց 3 քաղաքացիական անձ, որոնցից ծեր կինը ողջ ժամանակ ենթարկվել էր խոշտանգման, որից հետո նրա և մյուսների մարմինները ենթարկվել են անարգանքի և խեղման[132]:

Ուսումնասիրելով 2016-ի ապրիլյան պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից կատարված վայրագությունների վերաբերյալ Արցախի օմբուդսմանի երկրորդ միջանկյալ զեկույցը՝ պարզ է դառնում, որ վայրագությունների զոհ են դարձել նաև սպանված կամ գերեվարված զինվորականներ: Մասնավորապես, ինչպես նշվում է զեկույցում «ապրիլի 2-ին ադրբեջանական զորքերի հարձակման ժամանակ #8[133] զինվորը գլխատվել էր, որից հետո գլուխը ենթարկվել անարգանքի, իսկ #9 զինվորը,

---

131 https://razm.info/81666, «Ապրիլի 1-3-ի հայ-ադրբեջանական ռազմական գործողությունների համառոտ ամփոփագիր», 09.03.2018:

132 Այս և այլ դեպքերի վերաբերյալ տե՛ս Արցախի օմբուդսմանի թվով 2-րդ զեկույցը / «Artsakh Ombudsmen's second interim report on Atrocites committed by Azerbaijan during the 2016 april war», 2016, Shushi, p.10.

133 Զեկույցում չի նշվում զինվորների անունները, այլ «#» պայմանական նշանները:

բացի այն, որ կիսագլխատված էր, իսկ գանգոսկրը փշրված, ողջ ժամանակ կտրվել էր նաև վերջինիս աջ ձեռքը, իսկ, երբ զոհը այլևս չէր կարողացել դիմադրել, սպանվել էր ադրբեջանական զինվորների կողմից»: Նման անմարդկային օրինակները ի-րենց դաժանության տեսակով և ծանրությամբ չեն սահմանա-փակվում վերը նշվածով: Զեկույցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր զոհերը ենթարկվել են աննկարագրելի դաժան կտտանքների: Մասնավորապես, զեկույցում տեղ գտած 44-րդ կետը վերաբերում է այն տեսաձայնագրությանը, որը ներ-բեռնվել էր համացանց ադրբեջանցի զինվորականի կողմից, ո-րից պարզ է դառնում, որ ադրբեջանական զինվորականները հատուկ պատրաստվածություն են անցել առանձնակի դաժա-նությամբ սպանելու և դրանով պարծենալու համար: Նման օրի-նակներից է. «Տեսաձայնագրությունում օպերատորը դիմելով ենթադրյալ հանցագործին նրա հետ ադրբեջաներեն խոսելով հարցնում է. «Դու՞ ես բերել սա (ի նկատի ունի գլխատված #8 զինվորին)»: Կեցցե՛ս, եղբայր: Թո՛ղ Ալլահը օրհնի քո ձեռքերը: Թո՛ղ քո ձեռքերը, որոնք կտրել են դա, երբեք դժվարության չհանդիպեն»[134]:

Զեկույցից կարելի է եզրակացնել, որ նման վայրագություննե-րի իրականացումը կարող է ծագել ոչ միայն պետական ուղղա-

[134] «Artsakh Ombudsmen's second interim report on Atrocities committed by Azerbaijan during the 2016 April war», 2016, Shushi, p.26.

կի աջակցության դեպքում, այլև օրենքի գերակայության բացակայության պայմաններում:

Ուսումնասիրելով վերոնշյալը՝ պարզ է դառնում, որ 2016 թվականի ապրիլի 2-5-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված զինված հարձակման ժամանակ թիրախավորվել էին մի շարք բնակավայրեր, որի հետևանքով զոհվել և վիրավորվել են խաղաղ բնակիչներ, այդ թվում երեխաներ, կանայք և ծերեր: Նշված հանգամանքները թույլ են տալիս եզրակացնելու, որ ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանը թույլ է տվել մի շարք միջազգային իրավունքի նորմերի, այդ թվում ներպետական իրավունքի կոպիտ խախտումներ: Խոսքը պատերազմական հանցագործությունների մասին է, որոնք ոչ միայն չեն ստացել արժանի գնահատական, այլև չեն պատժվել այն զինվորականները, ովքեր կատարել են առանձնակի դաժանությամբ հանցագործություններ թե՛ քաղաքացիական անձանց, թե՛ գերեվարված և թե՛ սպանված զինվորականների նկատմամբ:

Ուսումնասիրելով Ադրբեջանի քրեական օրենսգիրքը՝ պարզ է դառնում, որ դրա հոդված 12-ը, որը վերաբերում է Ադրբեջանի տարածքից դուրս կատարված հանցագործություններին, նախատեսում են իրավական դրույթներ, որոնց խախտման դեպքում անձը, ով օտարերկրյա քաղաքացի է, կամ քաղաքացիություն չունեցող անձ, կամ էլ Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի, ենթակա է քրեական պատասխանատվության անկախ

նրանից՝ այդ հանցանքը կատարվել է Ադրբեջանի տարածքում, թե տարածքից դուրս: Վերոնշյալ իրավական դրույթը նախատեսված է հոդվածի 12.3 կետով[135], որը վերաբերում է այն հանցագործություններին, որոնք ուղղված են ընդդեմ աշխարհի և մարդկության, ինչպիսիք են մարդու առուծախը, ահաբեկչությունը, ահաբեկչության ֆինանսավորումը և այլ քրեորեն պատժելի արարքները: Ադրբեջանի քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածը[136] վերաբերում է բնակչությանը ոչնչացնելուն (ցեղասպանության հատկանիշների բացակայության դեպքում), նախատեսում է քրեական պատիժ՝ քաղաքացիական անձանց ամբողջապես կամ մասամբ ոչնչացնելու համար՝ սահմանելով տասից մինչև տասնհինգ տարվա կամ ցմահ ազատազրկում:

Համաձայն Ադրբեջանի քրեական օրենսգրքի 115-րդ հոդվածի[137], որը վերաբերում է պատերազմի օրենքների և սովորույթների խախտմանը, նախատեսվում են այն հիմնական դրույթները, որոնք պատերազմական իրավիճակի դեպքում պարտադիր են Ադրբեջանի համար: Մասնավորապես հոդված 115-ի 2-րդ կետում նշվում է, որ դաժան կամ անմարդկային վերաբերմունքը այն անձանց հանդեպ, որոնք նշված են օրենսգրքի 115.1 կետում, խոսքը գերիների, միջազգային մարդասիրական իրավունքով պաշտ-

---

135 “Уголовный кодекс” Азербайджанской Республики, 2013, стр.5.

136 Նույն տեղում, էջ 54:

137 Նույն տեղում, էջ 50:

պանված անձանց մասին է, նրանց կտտանքների, բժշկական, կենսաբանական և այլ փորձերի ենթարկելը, այդ թվում, օրգանները հանելը կամ նրանց որպես գերի պահելը, ինչպես նաև հոդվածում նախատեսված այլ դեպքերով՝ պատժվում է հինգից մինչև տասը տարի ազատազրկմամբ: Իսկ 115.3-րդ կետով նախատեսվում է քրեական պատասխանատվություն այն դեպքում, երբ արարքները, որոնք նկարագրված են 115.1 և 115.2 կետերով, տուժածներն առաջացրել են մահ կամ ծանր առողջական վնասվածք պատժվում են տասից մինչև քսան տարի ազատազրկմամբ:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի քրեական օրենսգիրքը կիրառվում է ընտրովի և կրում ձևական բնույթ: Պարզաբանելու համար նշենք, որ ապիրլյան քառօրյա պատերազմի ժամանակ փաստացի խախտվել և մինչ օրս չեն վերականգնվել տուժածների և զոհվածների իրավունքները: Դրա մասին է վկայում վերոնշյալ օրենսգրքի 116-րդ հոդվածը, որը վերաբերում է զինված հակամարտությունների ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի խախտմանը: Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ խախտվել են սույն հոդվածի մի շարք դրույթներ, մասնավորապես խոսքը 116.0.7-րդ կետի՝ չպաշտպանված վայրերի, բնակավայրերի և ապառազմականացված տարածքների վրա հարձակման մասին է, ինչպես նաև 116.0.10-րդ կետով հարձակումը քաղաքացիական բնակչության կամ առանձին քաղաքացիական անձանց վրա,

ովքեր կռվին մասնակից չեն եղել կամ 116.0.11-րդ կետով նախատեսված դրույթով՝ տանջելը, կողոպտելը, ունեցվածքի ոչնչացնելը, ինչպես նաև պատերազմի պատրվակով ունեցվածքը առգրավելը, որը իրականացվել է այն տարածքում, որտեղ ընթացել են պատերազմական գործողություններ, այդ թվում 116.0.13-րդ կետը, որով հարձակումը անձանց վրա, ովքեր դադարեցրել են իրենց անմիջական մասնակցությունը ռազմական գործողություններին, ինչպես նաև անզեն անձինք կամ անձը, որը հանձնվել է՝ զենքը վայր դնելով, կամ անձը, ով չի ունեցել հնարավորություն դիմադրելու՝ վիրավորվելու կամ այլ պատճառով և ըստ Ադրբեջանի քրեական օրենսգրքի՝ խախտողները պատժվում են յոթից մինչև տասնհինգ տարի ազատազրկմամբ կամ ցմահ ազատազրկմամբ:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ կարելի է միանշանակ պնդել, որ մինչ օրս բացակայում է Ադրբեջանի կողմից պատժի կիրառումը այն զինվորականների նկատմամբ, ովքեր 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ խախտել են ոչ միայն միջազգային մարդասիրական իրավունքով նախատեսված պարտադիր կիրառելի իրավական նորմերը, այլև Ադրբեջանի ներպետական իրավունքը: Հայաստանի Հանրապետությունը, ունենալով բավարար փաստեր՝ տեսաձայնագրություններ, լուսանկարներ, զոհված հայ զինվորների դիերի զննության արդյունքներ, և իրավական հիմքեր, իրավասու է պահանջելու ադրբեջանցի զինվորականների

արտահանձնումը ՀՀ-ին: Արտահանձման նպատակը ՀՀ-ի տարածքում ադրբեջանցի զինվորականների պատժի կիրառումն ապահովումն է՝ արտահանձման պահանջի հիմքում դնելով այն, որ Ադրբեջանը հետևողական չի եղել պատժելու այն զինվորականներին, ովքեր, լինելով Ադրբեջանի Հանրապետության զինվորական և ենթարկվելով վերջինիս օրենսդրությանը, կատարել են ռազմական հանցագործություններ, սակայն չեն կրել պատասխանատվություն դրանց համար:

Հավելենք, որ ապրիլյան քառօրյա պատերազմի հետևանքով զոհերի թվում էին նաև արցախյան սահմանի պաշտպանությունն իրականացնող ՀՀ քաղաքացիներ՝ զինվորներ, ովքեր ադրբեջանական ագրեսիայի հետևանքով գերեվարվեցին և սպանվեցին սահմանագծին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է համապատասխան պատիժ ռազմական հանցագործությունների համար, մասնավորապես հոդված 387-ը[138]՝ պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը, հոդված 390-ի[139]՝ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ, 1-ին կետի «2» և «3» ենթակետերը, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ կետի «1»-ին և «5»-րդ ենթակետերը և 5-րդ կետը,

---

138 Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, Երևան, 2012, էջ 199:
139 Նույն տեղում, էջ 203:

այդ թվում հոդված 392-ը[140]՝ մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, հիմք են հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված ռեալ սկզբունքի լիարժեք կիրառելիության համար:

Անդրադառնալով 2016-ի ապրիլյան պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից կատարված վայրագությունների վերաբերյալ Արցախի օմբուդսմանի երկրորդ միջանկյալ զեկույցին՝ պետք է նշել, որ ադրբեջանական զինուժի կողմից նման դաժան վերաբերմունքը թե՛ գերեվարված հայ զինվորների և թե՛ խաղաղ բնակչության նկատմամբ, այդ թվում նաև առանձնակի դաժանությամբ խեղված զոհվածների աճյունները, վկայում են այն մասին, որ Ադրբեջանում հայատյացության արմատներն այնքան խորն են, որ դրա հետևանքը տեսանելի է ադրբեջանական զինվորների կողմից կատարված առանձնակի դաժանությամբ ռազմական հանցագործություններում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված ռեալ սկզբունքի կիրառումը հնարավորության տեսանկյունից իրագործելի է: Վերջինիս իրականացման դեպքում, այն կկրի ոչ միայն պատժող բնույթ, այլև կնպաստի նման հանցագործությունների կանխմանը և պայքարի առավել արդյունավետ մեթոդների մշակմանը:

---

140 Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, Երևան, 2012, էջ 201-202:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պետության կայացման կարևորագույն երաշխիքներից մեկը կայուն հասարակության ձևավորումն է, այլատյացության և ռասիզմի բացառումը, ինչպես նաև մարդու դեմ ուղղված այլ հանցագործությունների կանխումը: Այլատյացության բացառումը կամ կանխումը ոչ միայն առանցքային տեղ է զբաղեցնում պետության իրավական դաշտում, այլև նպաստում հասարակության անվտանգության ամրապնդմանը:

Չնայած նրան, որ ՀՀ օրենսդրության մեջ այլատյացության հասկացությունը չունի իրավական ամրագրում, այդուհանդերձ դրա առանձին դրսևորումների՝ մարդու դեմ ուղղված առանձին հանցագործությունների համար, քրեական պատիժ է նախատեսված:

Այլատյացությունը գոյություն ունի բոլոր պետություններում, սակայն դրա դրսևորումները լինում են տարբեր, ինչն արտահայտվում է, թե՛ կոնկրետ պետության քրեական իրավունքում և, թե՛ այդ պետությունում այլատյացության արմատավորման մակարդակով:

Այլատյացությունն աշխարհում ունի արդիականության բարձր մակարդակ և դրա բացահայտումներն ու իրավական վերլուծությունները մեծ կարևորություն են ներկայացնում, թե՛ կանխարգելման, թե՛ պատժի կիրառման տեսանկյունից: Ըստ

այդմ՝ կանխարգելումն, առանցքային տեղ է զբաղեցնում այլատ-յացության դեմ պայքարում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զարգացած երկրներում մեծ ուշադրություն են դարձնում այլատյացության տարբեր դրսևորումների դեմ պայքարին՝ ստեղծվում են տար-բեր պետական և ոչ պետական կառույցներ, որոնք մարտավա-րության նոր ուղիներ են առաջարկում այլատյացության դեմ պայքարում: Մասնավորապես, խոսքն օրենսդրական մակար-դակում որոշ իրավական խորքային փոփոխությունների, նա-խակրթական ուսումնական հաստատություններում հատուկ մշակված տեղեկատվության տարածման մասին է:

Սույն մենագրության շրջանակներում կատարված ուսում-նասիրությունները ցույց տվեցին, որ որոշ պետություններ, մաս-նավորապես Ադրբեջանը, ակտիվ ներգրավվածություն ունի այ-լատյացության քարոզչության և այդ հատկանիշներով կատար-ված հանցագործությունների աջակցության հարցում: Հիմք ըն-դունելով մի շարք փաստական տվյալներ՝ ինչպիսիք են, օրի-նակ՝ ուսումնական հաստատություններում Ադրբեջանի կողմից հովանավորվող հայատյացության սերմանումը, այդ թվում՝ մի շարք հանցագործություններ, որոնք, զուգորդված լինելով հա-յատյացությամբ, բացարձակ անտարբերության են մատնվել Ադրբեջանի համապատասխան մարմինների կողմից, կարելի է

եզրակացնել, որ Ադրբեջանում իրավունքի նորմերը և պահանջները գործում եմ միայն կամայականության սկզբունքով:

Յուրաքանչյուր պետությունում քրեական հանցանքի և այլ դրսևորումներով արտահայտված արարքները վերջնական իրավական գնահատական են ստանում դատարանի կողմից ընդունած համապատասխան վճռի կամ որոշման ձևով: Դատարանի կողմից հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը ունակ է էապես կանխարգելելու հասարակության մյուս անդամների կողմից հանցագործությունների կատարումը, իսկ համապատասխան սանկցիայի չկիրառման դեպքում, այն հիմք է հանդիսանում անպատժելիության մթնոլորտի ձևավորման համար: Ինչ վերաբերում է Ադրբեջանում հայատյացության դրսևորումներին՝ դրանք բացահայտ ձևով անտեսվում են դատարանների կողմից:

Ուսումնասիրությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի Հանրապետությունը կարիք ունի լուրջ և խորքային փոփոխությունների, մասնավորապես խոսքը իրավական, կրթական և սոցիալական ոլորտների մասին է: Հաշվի առնելով այս հանգամանքը և այն հետազոտությունների արդյունքները, որոնք որպես աղբյուր օգտագործվել են սույն աշխատանքում, կարելի է ներկայացնել մի շարք առաջարկություններ, որոնց կիրառելիությունը էապես կնվազեցնի Ադրբեջանում հայատյացության ալիքը:

Մասնավորապես.

1.Ստեղծել հատուկ ոչ պետական կառույցներ, որոնք խորքային ուսումնասիրություններ կիրականացնեն՝ պարզելու համար Ադրբեջանում հայատյացության աստիճանը և վերլուծության արդյունքում վեր կհանվեն դրանց կենտրոնացվածության և հնարավոր տարածման ուղիների մասին տվյալները:

2. Ստեղծել առանձին պետական աշխատանքային խմբեր, որոնք համապատասխան օրենսդրական փոփոխություններ կառաջարկեն և հետևողական կլինեն կանխելու կամ հանցանքի առկայության դեպքում պատժի ինստիտուտը կիրառելու հարցում:

3. Ստեղծել կրթադաստիարակչական հեռուստահաղորդումներ, որոնք հասարակությանը կտրամադրեն առավել բազմակողմանի տեղեկություններ այլատյացության վերաբերյալ, կմեկնաբանեն դրա հակաօրինականությունը և կնպաստեն այլատյացության կանխարգելմանը և վերացմանը:

Այսպիսով՝ սույն աշխատանքում, փորձ է արվել սահմանված պահանջներին համապատասխան ուսումնասիրել Ադրբեջանում հայատյացության միջազգային քրեաիրավական գնահատականը և ռեալ սկզբունքի հիման վրա ՀՀ քրեական օրենսդրության կիրառման հիմնահարցերը: Անդրադարձ է կատարվել

հայատյացության արմատներին, այլատյացության համար պատասխանատվություն նախատեսող միջազգային քրեաիրավական նորմերի աղբյուրներին, ինչպես նաև «Սև ցուցակի» նպատակին և ազդեցությանը: Ավելին, աշխատանքում տեղ են գտել Ալեքսանդր Լապշինի հետ հարցազրույցը: Ներկայացվել է ռեալ սկզբունքի արտացոլումը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության մեջ՝ զուգահեռներ տանելով Ադրբեջանի քրեական օրենսգրքում տեղ գտած իրավական դրույթների հետ:

Ամփոփելով՝ կարելի է հանգել եզրակացության, որ այլատյացության դեմ պայքարը օրենսդրության ամենակարևոր և բարդ ինստիտուտներից է, որը տարբեր ժամանակաշրջաններում եղել է և տեսանելի ապագայում շարունակելու է մնալ արդիական: Այդ պայքարը պետք է լինի այն միակ երաշխիքը, որը կկանխարգելի կամ էապես կնվազեցնի Ադրբեջանում այլատյացության դրսևորումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներպետական և միջազգային իրավական ակտեր

1. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված 2003թ. ապրիլի 18-ին
2. Միջազգային միգրացիա, ռասիզմ, ռասայական խտրականություն և այլատյացություն, 2001
3. Եվրոպայի խորհրդի կանոնադրությունը, Փարիզ, 1949
4. Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին կոնվենցիա, Ժնև, 1949
5. Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիաներ (Արձանագրություն 1), 1949թ. օգոստոսի 12
6. Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիաներ (Արձանագրություն 2), 1949թ. օգոստոսի 12
7. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, պաշտոնական թարգմանություն, 1948
8. ՄԱԿ-ի Կանոնադրություն, 1945
9. Հաագայի կոնվեցիա, 1899
10. Конституция Азербайджанской Республики, 1995
11. Уголовный кодекс Азербайджанской Республики, 2013
12. Резолюция, принятая Генеральной Ассамблеей, “Вместе против расизма, расовой дискриминации, ксенофобии и связанной с ними нетерпимости”, Нью-Йорк, 22 сентября 2011
13. Закон Азербайджанской Республики “Об образовании”, 2009
14. Закон Азербайджанской Республики “О правах ребенка”, 2008
15. Закон Азербайджанской Республики “О выезде из страны, въезде в страну и паспортах”, 1994
16. Закон Азербайджанской Республики “О пограничных войсках”, 1994

17. Закон Азербайджанской Республики “О государственной границе Азербайджанской Республики”, 1991
18. Конвенцию “О запрещении или ограничении применения конкретных видов обычного оружия, которые могут считаться наносящими чрезмерные повреждения или имеющими неизбирательное действие”, Женева, 1980
19. Декларация Организации Объединенных Наций “О ликвидации всех форм расовой дискриминации”, Нью-Йорк, 1963
20. Treaty Establishing a Constitution for Europe, Belgium, 2005
21. Framework decision on combating certain forms and expressions of racism and xenophobia by means of criminal law, Brussels, July 15 of 2008
22. Council framework decision on combating certain forms and expressions of racism and xenophobia by means of criminal law, Brussels, November 28 of 2008
23. European Commission against Racism and Iintolerance General Policy Recommendation N2: On combating racism and racial discrimination in and through school education, Strasbourg, 2006
24. European Commission against Racism and Intolerance General Policy Recommendation N10: On combating racism and racial discrimination in and through school education, Strasbourg, 2006
25. European Commission against Racism and Iintolerance General Policy Recommendation N2: On specialized bodies to combating racism, xenophobia, anti-Semitism and Intolerance at national Level, Strasbourg, 1997
26. Joint action to combat racism and xenophobia, Brussels, July 15 of 1996
27. European Commission against Racism and Iintolerance General Policy Recommendation N1: On combating racism, xenophobia, anti-Semitism and Intolerance, Strasbourg, 1996
28. Convention on the Transfer of Sentenced Persons, Strasbourg, 1983

29. European Convention on Extradition, Paris, 1957
30. Convention (IV) respecting the Laws and Customs of War on Land and its annex: Regulations concerning the Laws and Customs of War on Land, Hague, 18 October 1907.

Հայերեն գրականություն

31. Արցախի Հանրապետության հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները հետազոտող՝ ՀՀ փաստաբանների պալատի փորձագիտական խումբ, «Մասնագիտական Կարծիք», Երևան, 2017
32. Է. Նալբանդյան, «Լեռնային Ղարաբաղ. Տեսանելի՞ է արդյոք կարգավորումը», 2015, Երևան
33. Ղարիբյան Ա., «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920թթ. և Մեծ Բրիտանիան», Երևան, 2012
34. Միրաքյան Վ., «Ագրեսիվ հեռուստատեսության հետևանքները», Երևան, 2012
35. Ղազինյան Գ., «ՀՀ քրեական իրավունք», Ընդհանուր մաս, 2011
36. Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ. «Հայության պայքարը ԼՂԻՄ-ի Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար», Երևան, 2011
37. Ալեքսանյան Հ., «Հայ ազգաբնակչության տեղաբաշխումը աղրբեջանական և վրացական ԽՍՀ-ներում (1920–30-ական թվականներ)», Երևան, 2006
38. Քոչարյան Վ., «Միջազգային իրավունք», ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ, Երևան, 2002
39. Հ. Քոթանջյան, Հայկական «Երկրաշարժը» (կոնֆլիկտաբանական ուրվագծեր), Երևան, 1992
40. Կիրակոսյան Ջ. «Երիտթուրքերը պատմության դատարանի առաջ», Երևան, 1982

41. Աղայան Է., «Արդի հայերենի բացատրական բառարան», մեկ հատորով, Երևան, 1976

Ռուսերեն գրականություն

42. Исаков С., “Негативное воздействие СМИ — условие, способствующее преступности несовершеннолетних”, Чита, 2016
43. Кавинва И., Кобзева Е., “Влияние Интернета на современное общество”, Москва, 2015
44. Авраамова Е., Логинов Д., “Роль школьного образования в развитии человеческого капитала”, Москва, 2013
45. Адибекян А., Элибегова А., “Армянофобия в Азербайджане”, Ереван, 2013
46. Институт Африки РАН, “Расизм, ксенофобия, дискриминация”, Москва, 2013
47. Общественная организация “Против ксенофобии и насилия”, “Ходжалу: пропаганда посредством трагедии”, Ереван, 2011
48. Рождествина А., “Уголовное право”, Москва, 2010
49. Чернец В., “Влияние через социальные сети”, Москва, 2010
50. Майерс Д., “Социология психалогия”, Москва, 2009
51. Степашин В., Бибик О.,“Действие уголовного закона в пространстве”, Вестник Омского университета, серия “Право», 2009
52. Издательство СПбГУ, “Ксенофобия в современном мире”, Санкт Петербург, 2008
53. Федосеев Ю., “Ксенофобия или самооборона”, Москва, 2005
54. Дженнингз Б., “Основы воздейвтвия СМИ”, Киев, 2004
55. Антонян Ю., Давитадзе М., Этнорелигиозные Конфликты: Проблема, Решения, Москва, 2004

56. Николаева В., “Понимание Медиа: Внешние расширения человека”, Москва, 2003
57. Кравченко А., “Общая социология”, “Юнист”, Москва, 2002
58. Кузнецова Н., Тяжкова И., “Курс уголовного права в пяти томах. Том 1. Общая часть: Учение о преступлении”, 2002
59. Берковиц Л., “Агрессия. Причины, последсвия и контроль”, Москва, 2001
60. Мануэль К., “Информационнная эпоха”, Москва, 2000
61. Верховский А., Прибыловский В., Михайловская Е., “Национализм и ксенофобия в российском обществе”, Москва, 1998

Անգլերեն գրականություն

62. The office of ombudsman of the Republic of Artsak “Armenophobia in Azerbaijan organized hate speech & animosity towards Armenians”, Republic of Artsak, 2018
63. Tabish K., “The New Xenophobia”, Denmark, 2016
64. European Commission against Racism and Iintolerance, Report on Azerbaijan (Fifth monitoring cycle), Strasbourg, 2016
65. Heinze E., “Hate Speech and Democratic Citizenship”, Oxford University Press, 2016
66. Waldron J., “The Harm in Hate Speech”, USA, 2016
67. Huchthausen J., “Nativism, Xenophobia, and Racism in America: America for Americans”, USA, 2015
68. “The Armenia–Azerbaijan conflict through the prism of the British media and The New York Times 1988-1994”, Caucasus Survey, UK, 2015
69. Avakian S., “Nagorno Karabakh”, Legal aspects, Moscow, 2015
70. Gagliardone I., Gal D., Alves T., Martinez G., “Countering Online Hate Speech”, France, 2015

71. Cawdron P., “Xenophobia”, USA, 2013
72. “Congressional Record-Extensions of Remarks”, Adam B Schiff, California, House of representative, 2013
73. Handbook on “European non-discrimination law”, Luxenburg, 2011
74. “Racism, Xenophobia and Human Rights”, Vorster J., South Africa, 2009
75. European Commission against Racism and Iintolerance, Report on Azerbaijan (Second report on Azerbaijan), Strasbourg, 2007
76. “Internatioanl action against racism, xenophobia, anti-semitism and intolerance in the OSCE region”, Comparative study, Vienna, 2004
77. Commission of the European Communities, “Legal instruments to combat racism and xenophobia”, Brussels, 1992
78. Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. USA), merits, ICJ Reports, 1986

Կայքեր

79. https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/american_english/xenophobia
80. http://enc-dic.com/ozhegov/Ksenofobija-13732.html
81. http://www.gumer.info/bibliotek_Buks/History/Article/Nagor_Xenofob.php.
82. http://ethology.ru/library/?id=36
83. http://nkr.am/hy/history-and-current-realities/79/
84. http://mfa.am/hy/artsakh-issue/#a1
85. http://www.nytimes.com/1988/05/22/world/soviet-dismisses-two-party-chiefs-in-tense-republics.html
86. https://www.washingtonpost.com/archive/politics/1988/04/05/kremlin-adopts-plan-for-armenian-minority/0cd8e766-80db-40de-bd99-7ba908c73151/?utm_term=.9570259f1b93

87. https://anca.org/assets/pdf/misc/sumgait_baku_factsheet.pdf
88. http://nkr.am/hy/the-war-of-19911994/83/
89. https://med.vesti.ru/articles/psihologiya/negativnaya-informatsiya-i-eyo-vliyanie-na-cheloveka/
90. http://www.historyofarmenia.am/am/Encyclopedia_of_armenian_history_LXH_patmutyun
91. http://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/depa/dv/depa_2010-0310_04_1_/depa_20100310_04_1_en.pdf.
92. https://www.marketing.spb.ru/mr/media/public_choice.htm
93. http://www.europarl.europa.eu/document/activities/cont/201209/20120924ATT52175 /20120924ATT52175EN.pdf
94. http://ru.president.az/articles/1013
95. http://www.un.org/ru/sections/member-states/about-un-membership/index.html
96. http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter_arm.pdf
97. http://ru.president.az/articles/11948
98. http://ru.president.az/articles/26998
99. https://regnum.ru/news/221381.html
100. https://news.day.az/society/125166.html
101. https://vz.ru/news/2017/6/27/876167.html
102. https://eurasianet.org/node/86731.
103. http://www.azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution_r.pdf
104. http://azerichild.info/index.html
105. http://www.washingtonpost.com/wp-dyn/articles/A54979-2004Feb19.html
106. https://regnum.ru/news/1590178.html
107. https://www.rferl.org/a/armenia-protest-azerbaijani-killer-pardon-to-osce-minsk-group/24694817.html
108. http://peeep.us/9dc54f79
109. http://akramaylisli.info/bio/

110. http://magazines.russ.ru/druzhba/2012/12/aa5-pr.html
111. http://bs-kavkaz.org/2013/02/kamennye-sny-ailisly-pokayanie-pered-geopoliticheskim-kollapsom/?utm_source=warfiles.ru
112. http://www.1news.az/news/hafiz-gadzhiev-peredumal-otrezat-uho-akrama-aylisli
113. https://www.ekhokavkaza.com/a/24927111.html
114. http://vesti.az/news/161034
115. http://www.kabbalah.info/rus/content/view/frame/136200?/rus/content/view/full/136200&main
116. vzglyad.az/news/58969/В-отношении-Акрама-Айлисли-возбуждено-уголовное-дело.html
117. http://novostink.ru/azerbaijan/172770-opisavshiy-pogromy-armyan-v-azerbaydzhane-pisatel-akram-aylisli-moy-arest-mozhet-stat-smertnym-prigovorom.html?fb_comment_id=1074864979287-777_1075090362598572
118. https://vz.ru/society/2011/10/29/534474.print.html
119. https://www.kommersant.ru/doc/1807171
120. https://lenta.ru/news/2013/08/14/baku/
121. http://www.panarmenian.net/arm/news/213416/
122. http://www.carim-east.eu/media/legal%20module/natfr/AZ_2.2%20Law%20of%20AR%20-on%20state%20border_RU.pdf
123. http://mia.gov.az/index.php?/ru/content/29408/
124. http://mfa.gov.az/folder/media/Updated%2028.02.2018.pdf
125. http://www.un.org/WCAR/durban.pdf
126. http://www.un.org/ru/index.html
127. http://west-ur.ru/yurist-besplatno/ugolovnoe-delo/realnyij-princzip-v-ugolovnom-prave.htm

Գառնիկ Դավթյան

Հայատյացությունը Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում

Ստորագրված է տպագրության 13.02.2019:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: 12 տպ. մամուլ:

ISBN 978-9939-58-330-3